Таким образом, основная задача посольства Волынского заключалась во всестороннем ознакомлении с положением дел в Иранском государстве – гражданских, экономических, дипломатических и военных – для того, чтобы правительство Петра I могло определить роль и место Ирана в русской южной и юго-восточной политике, направленной в основном на борьбу против Османской империи и Крымского ханства»[69]. Однако, несомненно, что в русско-иранских отношениях XVII и начала XVIII века армяне выступали в качестве важного экономического и политического фактора как для Ирана, так и для России.

---

[66] ЦГАДА, ф. Посольских дел, оп. 2, кн. 9. Письма государя Петра I, собственноручныя, 1714, 1715, 1716 годы, л. 154 об.

[67] ЦГАДА, ф. Посольских дел, оп. 2, кн. 9. Письма государя Петра I, собственноручныя, 1714, 1715, 1716 годы,лл. 154 об. – 155.

[68] ЦГАДА, ф. Посольских дел, оп. 2, кн. 9. Письма государя Петра I, собственноручныя, 1714, 1715, 1716 годы, л. 156.

[69] **Бушев** 1987, 29.

Заключение

Выход Русского государства в бассейн Каспийского моря и установление контроля над Волжско-Каспийским путем вызвали серьезное беспокойство правящих кругов Османской империи. В Стамбуле считали, что в случае установления непосредственных торговых связей между Русским государством и Сефевидским Ираном турецкий транзитный путь по сравнению с Волжско-Каспийским будет более коротким и экономичным путем.

В XVII в., в период, когда западноевропейские державы упорно добивались монопольного права на торговлю с Ираном через Русское государство, а последнее решительно отказывало им, Московское правительство заключило торговые договоры с представителями армянской торговой буржуазии Ирана, предоставив им право не только торговых операций на территории России, но и транзита через нее в западноевропейские страны, что было вызвано как сугубо экономическими мотивами, так и в значительной степени политическими.

БИБЛИОГРАФИЯ

Армяно-русские отношения в XVII в. 1953 (сборник документов под ред. В.А. Парсамяна, т. I, Ереван, АН АрмССР, 288 с.).

Базилевич К.В. 1932, Коллективные челобитья торговых людей и борьба за русский рынок (Известия АН СССР, № 2, 109 с.).

Библиотека иностранных писателей о России 1836, т. I, СПб., 35 с.

Бушев П.П. 1976, История посольств и дипломатических отношений русского и иранского государств в 1586–1612 гг., Москва, «Наука», 478 с.

Бушев П.П. 1978, История посольств и дипломатических отношений русского и иранского государств в 1613–1621 гг., Москва, изд. «Наука», 280 с.

Бушев П.П. 1978, Посольство Артемия Волынского в Иран в 1715–1718 гг. (по русским архивам), Москва, «Наука», 287 с.

Восканян В. 1948, Армяно-русские отношения в XVII в. («Известия АН Арм. ССР»,№ 1, 61 с.).

Зевакин Е.С. 1940, Азербайджан в начале XVIII в. («Труды Общества по обследованию и изучению Азербайджана», No 8, вып. 4, Баку, 132 с.).

Зевакин Е.С. 1940, Персидский вопрос в русско-европейских отношениях XVII в. (Исторические записки, № 8, Москва, 129–162 с.).

История армянского народа 1951, ч. I, под редакцией **Аракеляна Б.Н**. и **Иоаннесяна А.Р.,** Ереван, «Айпетрат», 291 с.

Кашин В. 1926, Торговля и торговый капитал в Московском государстве, Ленинград, изд. «Кубуч», 294 с.

Костомаров Н.И. 1862, Очерк торговли Московского государства, СПб., 299 с.

Куканова Н.Г. 1950, Ирано-русские торговые отношения в конце XVII – начале XVIII вв., диссертация на соискание ученой степени канд. ист. наук, Москва, 147 с.

Куканова Н.Г. 1961, Роль армянского купечества в развитии русско-иранской торговли в последней трети XVII в. («Краткие сообщения Института народов Азии», XXX, 25 с.).

Петрушевский И.П. 1949, Азербайджан в XVI–XVIII вв. («Сборник статей по истории Азербайджана», вып. I, Баку, 202 с.).

Полное собрание законов Российской империи 1830, I, СПб., No 539.

Смирнов В.Д. 1887, Крымское ханство под верховенством Оттоманской Порты до начала XVIII века, СПб., 772 с.

Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа 1838, ч. II, Москва, тип. Лазаревых Института восточных языков, 504 с.

Соловьев С. 1960, История России с древнейших времен, кн. 3, т. 5–6, Москва, 815 с.

Фехнер М.В. 1956, Торговля Русского государства со странами Востока, Москва, Госкультпросветиздат, 122 с.

Хождение купца Федота Котова в Персию 1958, Москва, изд. Восточной литературы, 111 с.

Центральный государственный архив древних актов (ЦГАДА), ф. Посольских дел, 1714–1716, № 142, оп. 2, кн. 9, лл. 153–153 об., л. 154 об.; ф. 100, д. за 1686 г., № 5.

Чулков М. 1785, Историческое описание русской коммерции при всех портах и границах от древнейших времен и ныне и всех преимущественных узаконений по оной государя Императора Петра Великого и ныне благополучно царствующей государыни императрицы Екатерины Великой, СПб., кн. II, 134 с.

Шпаковский А.Я. 1915, Торговля Московской Руси с Персией в XVI–XVII вв., Киев, 54 с.

Հովհաննիսյան Աշ. 1959, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Գիրք երկրորդ, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 604 էջ:

Ուղուրլեան Մ. 1891, Պատմութիւն հայոց գաղթականութեան եւ շինութեան եկեղեցւոյ նոցա ի Լիւոռնոյ քաղաքի, Վենետիկ, Մխիթարեան տպ., 325 էջ:

Georgian P. 1964, Th. Ch. Estat present de l'Arménie, Paris, 278 p.

Tournefort Piton 1718, Relation d'un Voyage du Levant, t. II, Paris, 160 p.

ԻՐԱՆԻ ՀԱՅ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ ԻՐԱՆԱ-ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ XVII ԴԱՐՈՒՄ

ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ Վ.

Ամփոփում

Բանալի բառեր՝ *Իրան, Կովկաս, Թուրքիա, Ռուսաստան, տրանզիտ, առևտուր, պայմանագիր:*

«Հյուսիսային ճանապարհի» և Վոլգա-Կասպյան մայրուղու բացումից հետո եվրոպական համարյա բոլոր առաջատար պետությունները սկսում են եռանդուն ջանքեր գործադրել, որպեսզի ստանան ռուսական պետության վրայով Իրանի հետ առևտրի մենաշնորհը: Սակայն Ռուսաստանը վարում էր իր առևտրականներին հովանավորելու քաղաքականություն:

1660 թ. Սեֆևյան պետության մայրաքաղաք Սպահանից Մոսկվա է ժամանում խոջա Զաքար Շահրիմանյանի գլխավորած «Նոր Ջուղայի հայկական առևտրական ընկերության» պատվիրակությունը՝ իրանա-ռուսական առևտրի վերաբերյալ բանակցություններ վարելու նպատակով: Ակներև է, որ Շահրիմանյանը իրանական շահի կողմից օժտված էր որոշակի լիազորություններով և Մոսկվայում կատարում էր Իրանի հարաբերությունները Ռուսաստանի հետ կարգավորելու դիվանագիտական հանձնակատարի դեր:

Նա առևտրական նպատակներից բացի, հետամուտ էր նաև քաղաքական որոշակի ծրագրերի:

1666 թ. փետրվարին Մոսկվա է ժամանում իրանցի հայ վաճառականների մի նոր խումբ՝ Ստեփան Ռամադամսկու (Ստեփան Մովսեսյան) և Գրիգոր Լուսիկովի (Գրիգոր Մատթեոսյան Կուսակյանց կամ Լուսինենց) գլխավորությամբ: Բանակցությունների արդյունքում Ալեքսեյ Միխայլովիչ ցարի կողմից 1667 թ. մայիսի 31-ին Նոր Ջուղայի «Հայկական առևտրական ընկերությանը» տրվեց մի շնորհագիր, որը փաստորեն ձեռք բերեց առևտրական պայմանագրի նշանակություն:

Երկրորդ անգամ Լուսիկենցը Մոսկվա է ուղևորվում 1671 թ.: Բանակցությունները ավարտվում են հաջողությամբ և 1673 թ. փետրվարի 7-ին կնքվում է առևտրական նոր պայմանագիր:

Ի վերջո, 1676 թ. հուլիսի 17-ին ռուսական կառավարությունը հայ առևտրականների հետ նոր պայմանագիր (արտոնագիր) կնքեց: Այդ պայմանագիրը մեծապես նպաստեց Ռուսաստանում հայ վաճառականության առևտրին:

REGARDING THE MATTER OF PARTICIPATION ARMENIAN MERCHANT BOURGEOISIE OF IRAN IN IRANIAN-RUSSIAN TRADE-ECONOMIC AND POLITICAL RELATIONS IN THE SEVENTEENTH CENTURY

BAYBURDYAN V.

Summary

Key words: *Iran, the Caucasus, Turkey, Russia, transit, trade, contract.*

In 1660 Khoja Zakar Sharimanian, a representative of the New Julfa Armenian Trade Company, arrived in Moscow from Isfahan. It is clear that Shah had provided Sharimanian with certain degree of autority. In Moscow, he played the role of diplomatic envoy, mandated to normalize Iran's relations with Russia. The Armenian Trade Company and also the Safavid government mandated him to the test the government's feeling, regarding the signing of a trade agreement.

In February, 1666, a delegation of 40 Armenian merchants headed by Stepan Ramadamski (Stepan Movsisian) and Grigor Lusikov (Grigor Matteosian Kusikian or Lusikents) was instructed to conduct negotiations with the Russian government.

As a result of the negotiations, on May 31, 1667, Tsar Alexei Mikhaylovich issued a proclamation for the "Armenian Trade Company" of New Julfa, which corresponded to the status of a trade agreement.

Lusikents was dispatched to Moscow for the second time, in 1671. These negotiations were concluded successfully with the signing of a new trade agreement on February 7, 1673. Later, on July 17, 1676 the Russian government signed a new agreement (patent) with Armenian merchants. This agreement greatly boosted the Armenian merchants' trade in Russia.

ՇԱՎԱՐՇ ԱԶԱՏՅԱՆ*

գիտաշխատող

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

shavarsh.azatyan@gmail.com

ՀԻԶՏԲՈՒԶԻՏԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր՝ *Սրբախոսություն, Սասանյան Իրան, Մարզպանական Հայաստան, համարկար, զրադաշտականություն, օտարազգի սրբեր, Դվին:*

Ներածություն

Սրբախոսությունը եղել է վաղմիջնադարյան հայ գրականության կարևոր ոլորտներից մեկը և մեծ դեր է խաղացել քրիստոնեության տարածման և ամրապնդման գործում: Ունենալով գաղափարական ու դավանաբանական ուղղվածություն, ինչպես նաև շարունակելով անտիկ շրջանի գրական ավանդույթները[1]՝ սրբախոսական երկերը պարունակել են պատմագիտական տեղեկություններ, որոնք վերաբերել են տվյալ ժամանակաշրջանի քաղաքական, հասարակական, տնտեսական, մշակութային, կրոնական կյանքին[2]:

Ի տարբերություն Արևմտյան Եվրոպայում լատիներենով ստեղծված վկայաբանությունների, որոնք լի էին չափազանցված ու երևակայական դրվագներով[3], հայ սրբախոսական երկերը աչքի են ընկնում իրենց պատմականությամբ և տվյալ ժամանակի մասին բազմաբնույթ տեղեկատվությամբ: Հայկական վարքերն ու վկայաբանությունները ստեղծվել են սրբերի մահվանից կարճ ժամանակ անց և, բնականաբար, լիովին կրել են այդ ժամանակաշրջանի կնիքը:

Վաղմիջնադարյան Հայաստանում, հատկապես Սասանյան Իրանի և Արաբական խալիֆայության տիրապետության շրջանում, հայ սրբախոսական գրականության մեջ սկսեցին ի հայտ գալ վկայաբանություններ, որոնք նվիրված էին օտարազգի հավատացյալների՝ գլխավորապես պարսիկների ու

* *Հոդվածը ներկայացվել է 03.09.19, գրախոսվել է 15.11.19, ընդունվել է տպագրության 05.12.19:*

[1] **Бибиков** 1996, 41–42.

[2] **Տեր-Դավթյան** 2011, 25:

[3] **Brown** 1982, 19; **Staat** 2018, 209–224.

արաբների (Հիզտբուզիտ, Դավիթ Դվնեցի, Գրիգոր Մանաճիհր Ռաժիկ և այլն), որոնք ոգեշնչելու էին ժամանակակիցներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ VI դ. չեն պահպանվել պատմագրական երկեր, Հիզտբուզիտի վկայաբանությունը կարևոր արժեք է ձեռք բերում և կարող է հաղորդել եզակի տեղեկություններ՝ այդ ժամանակաշրջանի հայ-իրանական հարաբերությունների, Սասանյան Իրանի և Մարզպանական Հայաստանի վարչական, հարկային, քաղաքական համակարգերի մասին: Որպես սրբախոսական հուշարձան, վկայաբանությունը առաջնային նշանակություն ունի հայոց եկեղեցու դավանաբանական ուղղվածության, այլադավանների դեմ մղած պայքարի պատմության, ինչպես նաև Սասանյան Իրանի դատաիրավական համակարգն ուսումնասիրելու տեսանկյունից:

Հիզտբուզիտի վկայաբանությունը նվիրված է ազգությամբ պարսիկ, զրադաշտական մոգ Մախոշ-Հիզտբուզիտին: Վերջինս գալով Հայաստան՝ ընդունել էր քրիստոնեություն, ինչի հետևանքով հետագայում մահապատժի էր ենթարկվել: Հիզտբուզիտի վկայաբանությունից հայտնի են նրա ծննդավայրը, ընտանիքը. «*Յորում ժամանակի (Խոսրով Անուշիրվանի – **Շ.Ա.**) այր ոմն Մախոշ մոգ՝ ի նորին աշխարհէ, ի գաւառէն, որ կոչի **Բերշապուհ**, ի գեղջէ, որոյ անուն **Քունարասպան**, որոյ **ծնողքն պաշտպանեալք էին կրակի**, եւ ինքն ի մանկութենէ մոգութեամբ վարժեալ. Եւ էր զաւրաւոր խրատու եւ գիտութեամբ հրապաշտիցն եւ խորհրդով իմաստուն*»[4]:

Այստեղ նշված Բերշապուհ կամ Բեշապուհ[5] քաղաքը, հավանաբար, Պարսք երկրում գտնվող համանուն գավառի կենտրոնն է եղել[6]:

Հետագայում Մախոշը պարսից բանակատեղիում ականատես է եղել Գրիգորիս անունով վկայի նահատակությանը և համակրանքով լցվել քրիստոնեության նկատմամբ. «*Սա ի դիպուածոյ իմեքէ ի բանակս թագաւորին հասանէր, եւ պատահէր չարչարանաց սուրբ վկայի ուրումն՝ որում անուն էր Գրիգորիոս: Հրաշացեալ ընդ համարձակութիւն նահատակին, եւ զհաւատոց բարուք նախանձն նախանձեալ՝ ասէ՝ ի սրտի իւրում. Տէր Աստուած քրիստոնէից, նայեաց յիս եւ ցոյց ինձ ճանապարհ, որով գնացից, եւ բաց ինձ դուռն ողորմութեան ընդ նահատակի քում, զի արժանի եղեց արքայութեան քում, որ Տէրդ ես երկնի եւ երկրի*»[7]:

---

[4] **Ներսէս Ռաժիկ** 2004, 461:

[5] **Յովհաննէս Դրասխանակերտցի** 2010, 396:

[6] **Дашков** 2008, 337.

[7] **Ներսէս Ռաժիկ** 2004, 461:

Այս Գրիգորիս նախատակը Գրիգոր Մանաճիհր Ռաժիկն է՝ իրանական նշանավոր Միհրան տոհմից[8]: Վերջինիս նվիրված վկայաբանությունը տվյալներ չի հաղորդել նրա նախատակության վայրի մասին. «*Յայնժամ հրամայեաց մոգպետն մոգուցն հաւատարմաց տանել զսուրբն Գրիգոր ի զատական տեղի մի և սրով սպանանել*»[9]: Հիզտբուզիտի վկայաբանության համաձայն՝ Գրիգորիսը նախատակվել է պարսկական բանակատեղիներից մեկում, որն ընկած է եղել Հիզտբուզիտի ճանապարհին՝ Բերշապուհից դեպի Սյունիք և Դվին: Ինչպես հայտնի է, Սասանյան Իրանի Հյուսիսային քուստակում բանակատեղիները գտնվել են Փայտակարան քաղաքի մոտակայքում և Մուղանի դաշտում[10], ուստի կարող ենք ենթադրել, որ Գրիգորի նախատակությունը տեղի է ունեցել այս երկու վայրերից մեկում:

Հիզտբուզիտը երկար չի մնացել Սյունիքում, բայց հասցրել է այստեղ ծանոթանալ քրիստոնեական որոշ գրքերի և հետո միայն ուղևորվել Դվին. «*Գայր անտի **յաշխարհն Սիւնեաց**, պարապելով յունկնդրութիւն Գրոց Սրբոց, եւ լեալ անդ սակաւ ամիսս հասանէ ի **Հայս**. եւ **յԱյրարատ գաւառ**՝ բնակէր յոստանին հայոց ի Դուին*»[11]:

Գալով Դվին՝ Հիզտբուզիտը ծառայության է անցել պարսից **մոգերի առաջնորդ** և **համարկար** Խոսրով Պերոզի պալատում. «*բնակէր (Հիզտբուզիտը – **Շ.Ա.**) յոստանին Հայոց ի Դուին, յարեալ ի մոգս ուրումն **Հայոց համակարի**, որում անուն էր **Խոսրով Պերոզ**. Եւ արհամարանաւք զմոգութիւնն անցուցանէր*»[12]:

Նախ փորձենք պարզել, թե Հիզտբուզիտն ինչ լիազորություններ է ունեցել համարկարի պալատում: Պետք է նշել, որ զրադաշտական կրոնի սպասավորները Խոսրով Անուշիրվանի կողմից մեծ աջակցություն են ստացել[13] և նպաստել են պարսից տերության տարածքում նրա դիրքերի ամրապնդմանը[14]: Մոգերը անցկացրել են դատավարություններ, զբաղվել են հոգևոր ծառայությամբ, քարոզչությամբ և այլն[15]: Նրանց զգալի մասը տաճարական սպասավորներ

[8] **Տեր-Մկրտչյան** 1998, 153–165:
[9] **Տեր-Մկրտչյան** 1998, 165:
[10] **Հարությունյան** 1981, 68:
[11] **Ներսէս Ռաժիկ** 2004, 461:
[12] **Ներսէս Ռաժիկ** 2004, 461:
[13] **Boyce** 1979, 133.
[14] **Мишин** 2014, 110.
[15] **Мишин** 2014, 108–110.

էին (**խիրբեդներ**), որոնց գործը հիմնականում հոգևոր ծառայությունն էր[16]: Ամենայն հավանականությամբ, Մախոշ-Հիզտբուզիտը նույնպես համալրել է վերջիններիս շարքերը:

Զրադաշտական տոներից մեկի ժամանակ հրդեհ է բռնկվել համարկարի պալատում, որից հետո Մախոշը բացահայտ հրաժարվել է մոգությունից և հայտարարել իր՝ քրիստոնեության հետևորդ լինելու մասին. «*Եւ լինէր ի ձմերային ժամանակի, ի մեհեկանին, ըստ պարսկաց ամսոյ սկիզբն, եւ ըստ սովորութեանն իւրեանց զոհս աղտեղ մատուցանէին հրոյն յապարանս համակարին: Եւ երանելին Մախոշ կայր ընդ նոսա յառակի, պնդեալ զքերանն: Եւ բարձրացեալ բոցն ի ճարպոյն, հասանէր ի դարաւանդակ տանն եւ բորբոքէր: Իսկ մոգուցն ժողովեալ զզոհելն՝ զհուրն փութացան շիջուցանել, եւ ոչ կարացին. Եւ արտաքս ընթացեալ պատմէին զհրսն:*

Ասէ երանէլին. Ես ի բազում ժամանակաց հաւատացի քրիստոնէից, եւ խղճիւ մոգ էի, բայց արդ յայտնապէս քարոզեմ զհաւատս, որ ի Քրիստոս, եւ այլ ոչ եւս սպասաւորեցից հրոյ՝ զայդ ամենայն զարմանալիս տեսեալ»[17]:

Վերոնշյալ մեջբերումից տեսնում ենք, որ տոնակատարությունը տեղի է ունեցել ձմռանը՝ մեհեկան ամսի սկզբին: Մեհեկանը[18] հասարակ տարիներին համընկել է փետրվար-մարտ ամիսներին[19]: Այս ամսին պարսիկները մեծ շուքով նշել են Միհր աստծուն նվիրված տոնը[20] և զոհաբերություններ արել նրա պատվին[21]: Չի բացառվում, որ վկայաբանության մեջ նկարագրվող տոնը նվիրված է եղել հենց այդ աստծուն:

Սասանյան վարչակարգը Հայաստանում ըստ Հիզտբուզիտի վկայաբանության տվյալների

Վկայաբանությունը հարուստ տեղեկություններ է ավանդում Խոսրով Պերոզ անունով **«Հայոց համա(ր)կար**»[22] կոչվող պաշտոնյայի մասին: Տեսնում ենք, որ վերջինս կառավարել է Դվինում և եղել մոգերի գլխավորը: Տվյալներ

---

[16] **Мишин** 2014, 108–110.

[17] **Ներսէս Ռաժիկ** 2004, 461:

[18] Համաձայն սկզբնաղբյուրների՝ Միհր-Միհրական անունն է կրել զրադաշտական օրացույցի յոթերորդ ամիսը, ինչպես նաև ամսվա տասնվեցերորդ օրը (**Բադալյան** 1970, 151–152, **Boyce** 1979, 71–72):

[19] **Բադալյան** 1970, 98:

[20] **Բադալյան** 1970, 98:

[21] **Boyce** 1979, 34.

[22] Վկայաբանության մեջ այս բառը օգտագործվել է «համակար» ձևով, որը ըստ Հ. Աճառյանի սխալ է, և ճիշտ տարբերակն է համարկարը (տե՛ս **Աճառյան** 1977, 23):

կան նաև նրա ընտանիքի մասին: Նշվում է, որ Խոսրով Պերոզի կինը նույնպես ունեցել է համակրանք դեպի քրիստոնեությունը. «*Եւ փեսեալ կնոջ համակարին՝ մեծ գոհութիւն առաքէ սպասաւորաց սքանչելագործ սուրբ խաչին*»[23]: Պետք է ենթադրել, որ այս համարկարի պալատը V դ. երկրորդ կեսին Դվինում շինված կաթողիկոսական պալատն է եղել[24], որին կից հետագայում պարսիկները կառուցել են զրադաշտական գլխավոր ատրուշանը[25]: Պեղումները ցույց են տվել, որ այս ապարանքն ու ատրուշանը իսկապես ավերվել են հրդեհի պատճառով: Չնայած հնագետները կարծում են, որ մեհյանը կառուցվել է Սուրեն մարզպանի օրոք՝ մոտ 550–560-ական թթ.[26], սակայն վկայաբանության տվյալներից կարող ենք եզրակացնել, որ այդ կառույցները համարկարին են պատկանել առավել վաղ՝ VI դ. 40-ական թթ.: Ենթադրում ենք, որ Սուրեն մարզպանը վերակառուցել է վերոնշյալ շինությունները վկայաբանության մեջ հիշատակված հրդեհից հետո:

Առավել կարևոր են այն տվյալները, որոնք բնութագրում են **համարկար** կոչվող պաշտոնը: Համարկարները կարևոր տեղ են զբաղեցրել իրանական կայսրության վարչական համակարգում: Նախ և առաջ, նրանք տնտեսական կամ ֆինանսական գործառույթներ իրականացնող պաշտոնյաներ էին[27]՝ իրավասու կարգավորելու գները, կառավարելու եկամուտներն ու ծախսերը: Նրանք էին իրականացնում հարկերի հավաքումը[28]: Կարելի է կարծել, որ այս պաշտոնը հատուկ նշանակություն է ունեցել և շնորհվել է գահին առավել հավատարիմ անձանց:

Սկզբնական շրջանում համարկարները մարզերում համալրել են հազարապետի վարչակազմը[29]: Բայց հետագայում, ինչպես տեսնում ենք վկայաբանության տվյալներից, նրանց լիազորությունները ավելացել են հենց ի հաշիվ հազարապետի: Նրանց իշխանությունը տարածվել է նաև հարևան մարզերում: Այս մասին վկայում են նաև Խոսրով Անուշիրվան արքայի կառավարման շրջանում ստեղծված պաշտոնեական կնիքները[30]:

---

23 **Ներսէս Ռաժիկ** 2004, 461:

24 **Քալանթարյան, Ղաֆադարյան** 1990, 147:

25 **Քալանթարյան, Ղաֆադարյան** 1990, 147:

26 **Քալանթարյան** 1982, 93:

27 **Daryaee** 2009, 132–133: **Хуршудян** 2015, 163–174.

28 **Периханян** 1973, 389–391.

29 **Хуршудян** 2003, 101.

30 **Хуршудян** 2003, 226.

Դվինի համարկարի դերի մեծացման մասին անուղղակի փաստել է նաև Կիրակոս Գանձակեցին, որը Հիզտբուզիտի նահատակության մասին խոսելիս համարկարին անվանել է «*վերակացու աշխարհիս*»[31]: Ամենայն հավանականությամբ, պատմիչը նման եզրակացության հանգել է հենց վկայաբանության տվյալները վերլուծելու արդյունքում, քանի որ իրենից առաջ եղած պատմագիրները գրեթե չեն կարևորել համարկարի պաշտոնը:

Ըստ վկայաբանության՝ Դվինում հաստատված համարկարը, բացի տնտեսական և ֆինանսական հարցերով զբաղվելուց, ունեցել է նաև հոգևոր գործառույթներ: Հետևաբար Խոսրով արքան, համարկար Խոսրով Պերոզին հանձնելով տնտեսական ու կրոնական պաշտոնները, մեծացրել է նրա լիազորությունների շրջանակը, ինչը բխել է տերությունն առավել կենտրոնաձիգ դարձնելու նպատակադրումից:

Կարող ենք ենթադրել, որ կրոնական ու հարկային գործառույթներ ունեցող համարկարը իրականացրել է հարկային հատուկ քաղաքականություն, որի հիմքում եղել է այլակրոններից ավելի մեծ քանակությամբ հարկերի գանձումը: Ծանր հարկերից ազատվելու համար քրիստոնյաները և այլ կրոնների հետևորդները ստիպված ընդունելու էին զրադաշտականություն, ինչը և ցանկացել է իրականացնել Սասանյան վարչակարգը: Այսպիսով, կարող ենք ասել, որ Խոսրովը կրոնական հարցերում կիրառել է «փափուկ ուժի» քաղաքականություն՝ ցանկանալով ավելացնել կամավոր զրադաշտականություն ընդունողների թիվը:

Հաջորդ պաշտոնյան **Հայոց հազարապետն** է, որի մասին հիշատակվել է հրդեհը հանգցնելու տեսարանում. «*Եւ որ **հազարապետն էր Հայոց,** իբրեւ լուաւ զձայն ամբոխին, փութապէս հասանէր ի դուռն եկեղեցւոյն, ստիպէր զպաշտօնեայսն առնուլ զսուրբ խաչն եւ բերել յապարանսն*»[32]:

Խոսրով I-ի օրոք հազարապետը կորցրել էր նախկին դիրքը և իրականացնում էր միայն զինվորական հրամանատարի գործառույթներ[33]: Վկայաբանության տվյալներից կարող ենք ենթադրել, որ հազարապետը լոկ հրահանգիչ-զինվորական է: Նրա լիազորությունների մեծ մասը, ամենայն հավանականությամբ, փոխանցվել էր համարկարին: Վկայաբանության մեջ նշվող հազարապետը հայազգի չի եղել, քանզի նրա մասին հիշատակություն չկա նույն ժամանակ հրավիրված Դվինի Բ ժողովի մասնակից հայ նախարարների

[31] **Կիրակոս Գանձակեցի** 1961, 41:
[32] **Ներսէս Ռաժիկ** 2004, 461:
[33] **Хуршудян** 2003, 113.

շարքում: Սակայն, չի կարելի բացառել, որ նա քրիստոնեության համակիր է եղել: Այս մասին ակնարկվում է նաև վկայաբայության մեջ. «*զի թերեւս մերժեցի (հազարապետը – **Շ.Ա.**) հուրն, որ առ նեղութեանն ակամա հաւափայր*»[34]:

Ջոհաբերության ժամանակ Հիզտբուզիտի քրիստոնեությունը բացահայտ ընդունելուց հետո նրան հանձնել են «**Հայոց իշխան**» Նիխորականի դատին, որի հորդորներից ու սպառնալիքներից հետո էլ վկան չի վախեցել և անդրդվելի է մնացել, ուստի և. «*զայրացեալ իշխանն՝ հրամայեաց հարկանել զերանելին երկոփասան կրկին, եւ գրեալ զհարցումն՝ կապէր զոտս եւ զձեռս եւ փայր ի բանտ*»[35]:

Հետագայում վկային հարցաքննել և խոշտանգել են Նախապետ ու Քնարիկ անուններով «Հայոց իշխան»-ները. «*Յետ սակաւ ժամանակի փոխանորդէ զկնի Նիխորականին Նախապետն անուանեալ. եւ նստեալ յատենի ածին զերանելին Մախոշ առաջի նորա:*

*Եւ ի լնուլ այլ եւս **երից ամացն**՝ յաջորդէր զՆախապետն որում Քնարիկն ասէին*»[36]:

Նախ խոսենք վկայաբանության մեջ հիշվող «Հայոց իշխան» եզրույթի մասին: Վերջինիս մասին վկայություն կա դեռևս V դ. կազմված «Գահնամակ»-ում. «*Առաջին իշխանն Հայոց եւ Մաղխազն*»[37]: Այս պաշտոնը առավելապես ամրապնդվել է V–VI դդ. Հայաստանի բյուզանդական հատվածում, իսկ արաբական արշավանքների շրջանում ձեռք է բերել նաև նոր բովանդակություն՝ ստանալով նաև «պատրիկ» անվանումը[38]: Սկսած Թեոդորոս Ռշտունուց՝ Հայոց իշխանը արմատապես տարբերվել է բյուզանդական Հայաստանի նույնանուն կառավարիչներից: Ի տարբերություն վերջիններիս, որոնց իշխանությունը սահմանափակ էր, արաբական շրջանի Հայոց իշխանները ունեցել են գործառույթների ավելի լայն շրջանակ[39]:

Ակնհայտ է, որ վկայաբանության մեջ շփոթ կա և «մարզպան»-ի փոխարեն կիրառվել է **«Հայոց իշխան»** տերմինը: Հավանաբար, նման թյուրիմացություն առաջացել է այն պատճառով, որ վկայաբանությունը խմբագրվել է արաբական տիրապետության շրջանում, երբ նախկին Սասանյան տերության

[34] **Ներսէս Ռաժիկ** 2004,461:
[35] **Ներսէս Ռաժիկ** 2004, 462:
[36] **Ներսէս Ռաժիկ** 2004, 462:
[37] **Յակոբեան** 2011, 532:
[38] **Տեր-Ղևոնդյան** 2003, 192–194:
[39] **Տեր-Ղևոնդյան** 2003, 193–194:

մարզպանի լիազորությունները զգալի չափով փոխանցվել էին «Հայոց իշխան» կոչվող պաշտոնյային[40]:

Վկայաբանության վրացերեն թարգմանության մեջ նույնպես կիրառվել է «[Հայոց] իշխան» տերմինը՝ "*ერისთავი*"[41]: Անվանաձևերի նման զանազանությունը լավագույնս դրսևորվել է Դավիթ Դվնեցու վկայաբանության մեջ, երբ Գրիգոր Մամիկոնյանը միաժամանակ կոչվել է և՛ «իշխան Հայոց», և՛ «պատրիկ», և՛ «մարդպետ կամ մարզպետ». «*Եւ եղեւ այս ի ժամանակս Անաստասայ Հայոց կաթողիկոսի և յիշխանութեան մեծանուն Գրիգորի Մամիկոնենի Հայոց* ***պատրկի***», «*...առեալ Գրիգորի* ***Հայոց [իշխանի]*** *մատուցանէր առ կաթողիկոսն Անաստաս*», «*յինքն հայցեաց Մուշեղ սպարապետն՝ որդի Մամիկոնենի և* ***[մարդ[զ]պետի]*** *(իմա՝ Գրիգոր Մամիկոնյանի –* ***Շ.Ա.****)*»[42]:

Հատուկ ուշադրության է արժանի նաև մարզպանների՝ **երեք տարով** պաշտոնավարելու փաստը: Այս մասին կարևոր տեղեկություն է հաղորդել նաև վրաց սրբախոսությունից հայտնի Եվստաթիոսի վկայաբանությունը, որտեղ նույնպես ակնարկվել է մարզպանների եռամյա կառավարման մասին. «***երեք տարի հետո,*** *որպես Քարթլիի մարզպան եկավ Վեժան Բուզմիրը*»[43]: Երկու վկայաբանությունների տեղեկությունները մեզ որոշ հիմք են տալիս ենթադրելու, որ մարզպանների կառավարման ժամանակը Խոսրով Անուշիրվանի օրոք սահմանվել էր երեք տարի: Կարող ենք կարծել, որ պարսից արքան նման քաղաքականությամբ ցանկացել է կանխել մարզպանների հզորացումը և տեղերում իշխանության ամրապնդումը: Ցավոք, վկայաբանությունների այս ուշագրավ տեղեկությունները չեն արձանագրվել պատմագրական երկերում, ուստի ստիպված ենք մնալ ենթադրության ոլորտում:

Պետք է ասել, որ Հիզտբուզիտի վկայաբանությունը բացառիկ հնարավորություն է ընձեռում Նիխորական, Նախապետ, Քնարիկ և Հովհաննես Դրասխանակերտցու հիշատակած Վահրամ Վշնասպ անունով մարզպանի[44] կառավարման տարեթվերը պարզելու համար: Այս խնդիրը լուծելու համար կարևոր է Հիզտբուզիտի նահատակության տարեթվի ճշգրտումը: Մի շարք աղբյուրներ ավանդել են, որ այդ իրադարձությունը տեղի է ունեցել Դվինի Բ ժողովի տարում:

[40] **Տեր-Ղևոնդյան** 2003, 26–27: **Vacca** 2013, 116–118:
[41] აბულაძე 1944, 117.
[42] აბულაძე 1944, 125, 132.
[43] წმ. ევსტათის მარტვილობა 2008, 250.
[44] **Յովհաննէս Դրասխանակերտցի** 2010, 396:

Առավել վաղ ստեղծված "Narratio de rebus Armeniae" (VIII դ.) երկում հստակ նշվել է, որ Դվինի Բ եկեղեցական ժողովը և Հիզտբուզիտի նահատակությունը տեղի են ունեցել միևնույն տարում[45]:

Վերոնշյալ քաղկեդոնական երկի տվյալները որոշ անճշտություններով կրկնել է վրաց կաթողիկոս պատմագիր Արսեն Սափարացին (IX դ.): Հավանական է՝ վերջինս նույնպես օգտվել է վերոնշյալ հայկական աղբյուրից[46]. «*Հրամայեցին երկրորդ մեծ ժողով գումարել նույն Դվինում նույն Ներսեսի [կաթողիկոսության] երկրորդ փարին. Հուսփինիանոս թագավորի փասնչորսերորդ փարին, Խոսրով պարսից թագավորի երկրորդ փարին, երբ* ***վկայեց Հիզփիբուզիփը***»[47]:

Հիզտբուզիտի նահատակությունը և Դվինի Բ ժողովը համաժամանակյա իրադարձություններ է ներկայացրել նաև Ստեփանոս Տարոնեցին (X–XI դդ.). «*Սա (Ներսես Բագրևանդացին –* ***Շ.Ա.****) ի չորրորդ ամի հայրապետութեան իւրոյ եւ ի փասներորդ ամի իշխանութեան Մեժէժայ արար ժողով ի քաղաքն Դուին: Եւ էին գլխաւորք ժողովոյն Պետրոս եպիսկոպոս քերթող Սիւնեաց եւ Ներշապուհ ի Տարաւնոյ. եւ կարգեցին զթուականն Հայոց ի ԺԴ-ն Յուսփիանոսի կայսեր, որ զուրբն Սոփիա շինեաց, եւ ի ԺԴ-ն Խոսրովայ որդւոյ Կաւափայ Պարսից արքայի: Յորում ամի սուրբն Յիզիփբուզիփ կափարեցաւ ի Քրիսփոս*»[48]: Այս պատմագիրը նույնպես չի հայտնել, թե ինչ երկից է քաղել այս տեղեկությունները:

Մեկ այլ՝ «Գիր մերոյ հարցն որ ի Դուին ժողովեալ յաւուրս Մեծին Ներսիսի Հայոց Մեծաց եւ վասն Քաղկեդոնի» խորագիրը կրող երկում, որի հեղինակն ու գրության ժամանակն անհայտ են, նույնպես հաղորդել է, որ Հիզտբուզիտը նահատակվել է վերոնշյալ տարում. «*Իսկ ի ժամանակս Ներսիսի Հայոց կաթուղիկոսի, եւ Պեփրոսի Սիւնեաց քերթողի եւ եպիսկոպոսի, եւ այլոց եպիսկոպոսաց Հայոց հրամայեցին ժողով մեծ լինել ի Դունին: Այս ի չոր(ր)որդ ամի Ներսիսի կաթուղիկոսութեան եղեւ [ի քսան] եւ չորք Խոսրովու արքայի եւ ի փասն եւ չորք Յուսփիանոսի կայսեր եւ կափարմանն ի Քրիսփոս սուրբն Յիզփբու[զ]իփ*»[49]:

Վերոբերյալ հիշատակությունները, ըստ երևույթին, բխել են միևնույն աղբյուրից, որից կարողացել են օգտվել թե՛ քաղկեդոնական, թե՛ ոչ քաղկեդոնա-

[45] **Բարթիկյան** 2002, 104:
[46] **Ակինեան** 1910, 289–290: **Բարթիկյան** 2002, 98:
[47] **Մելիքսեթ-Բեկ** 2013, 40:
[48] **Ստեփանոս Տարաւնեցի** 2010, 690–691:
[49] **Անանեան** 1957, 113:

կան հեղինակները[50]: Կարևոր է այն հանգամանքը, որ բոլոր այս տվյալները հավաստում են, որ Հիզտբուզիտի նահատակությունը տեղի է ունեցել Դվինի Բ ժողովի տարում: Այսինքն, Հիզտբուզիտի նահատակության տարեթիվը ճշտելու համար, վկայաբանության տվյալներից զատ, պետք է իմանալ նաև Դվինի Բ ժողովի տարեթիվը:

Հայոց եկեղեցու համար մեծ կարևորություն ունեցած այս ժողովը քննարկել է տարբեր հարցեր և, ամենայն հավանականությամբ, տևել է 553–555 թթ.[51]:

Ըստ վկայաբանության՝ Հիզտբուզիտը նահատակվել է Խոսրով Անուշիրվանի կառավարման 23-րդ տարում. «*Եւ այսպէս քաջութեամբ վկայեաց սուրբն Յիզտիբուզիտ ի* ***քաններորդի երրորդի*** *ամին Խոսրովու թագաւորի, որ աւր երկու էր քաղոց ամսոյ, յաւուր կիւրակէի յերրորդ ժամու*»[52]: Ըստ տոմարական հաշվարկների[53]՝ քաղոց ամսի 2-ը, որը կիրակի է եղել, համապատասխանել է 553 թ. նոյեմբերի 9-ին[54], ինչը ցույց է տալիս, որ իսկապես Հիզտբուզիտի նահատակությունը տեղի է ունեցել ժողովի տարում: Ամենայն հավանականությամբ, Դվինի Բ ժողովի քննարկումները ծավալվել են 553 թ. նոյեմբերի 9-ից հետո՝ մինչև 555 թ. մարտի 21-ն ընկած ժամանակահատվածում:

Այսպիսով, Հիզտբուզիտի նահատակության թվականը պարզելուց հետո կարող ենք ճշտել նաև վկայաբանության մեջ հիշված մարզպանների կառավարման տարեթվերը: Այսպիսով, 548 թ. Նիխորականը եղել է մարզպան, Նախապետն ու Քնարիկը միասին կառավարել են 6 տարի, իսկ Հիզտբուզիտի նահատակությունը տեղի է ունեցել 553 թ., երբ Հայաստանում մարզպան էր Վահրամը: Այսինքն, 548–553 թթ. ընթացքում կառավարել են պարսիկ չորս մարզպաններ: Եթե նրանցից յուրաքանչյուրը կառավարել է երեք տարի, ապա կստացվի հետևյալ պատկերը. Հիզտբուզիտը ձերբակալվել է Նիխորականի կառավարման վերջին տարում՝ 548 թ., այնուհետև՝ 548–553 թթ.՝ Նախապետ և Քնարիկ մարզպանների օրոք, փակված է եղել Դվինի բանտում: Նահատակությունը, ամենայն հավանականությամբ, տեղի է ունեցել Վահրամ Վշնասպի կառավարման առաջին տարում՝ 553 թ.: Հետևաբար՝ Նիխորականը, Նախապետն ու Քնարիկը միասին կառավարել են մոտ 546–553 թթ.:

---

[50] **Անանեան** 1992, 29:
[51] **Անանեան** 1991, 87–88:
[52] **Ներսէս Ռաժիկ** 2004, 464:
[53] **Բադալյան** 1976, 106–109:
[54] **Անանեան** 1991, 87:

Սակայն տարակուսանք է առաջանում, թե ինչպես է, որ Դվինի Բ ժողովի նման կարևոր իրադարձությունը արձագանք չի գտել վկայաբանության մեջ, եթե իսկապես տեղի են ունեցել միևնույն տարում: Նման «բացթողումը» կարելի է բացատրել նրանով, որ Հիզտբուզիտի նախատակության ժամանակ ժողովը դեռևս չէր սկսվել, հետևաբար վկայաբանը չի գրել դրանց մասին:

Այնուամենայնիվ, վկայաբանության էջերում կարելի է գտնել անուղղակի տեղեկություններ Դվինի Բ ժողովի մասին: Նման վկայություններից կարելի է համարել, Խոսրով արքայի պատվիրակների ժամանման փաստը Հայաստան. «*Յայնմ ժամանակի լուեալ թագաւորն զբազում բռնութիւն եւ զպառապանս զոր հասուցանէին աշխարհին Հայոց գործակալքն, առաքէր երիս իշխանս հաւափարիմս այց առնել երկրին, անուն միումն Նափոյ՝ որ կոչի Դրովանդական, եւ երկրորդին Պերոզ, որ էր Ռեոյ գաւառին մոգպետ, եւ երրորդին Խոյապ, որ էր սպասաւոր արքային*»[55]:

Քաղաքական հարցերն, ամենայն հավանականությամբ, քննելու էր Խոյապը, իսկ Ռէ գավառի մոգպետ Պերոզը անցկացնելու էր դատավարությունը:

Ցավոք, այլ փաստեր չկան Նատո Դրովանդական պաշտոնյայի մասին: Կարող ենք միայն ենթադրել, որ նա ինչ-որ կապ է ունեցել Սեբեոսի հիշատակած Դ/Գրովանդականի բերդի հետ[56]: Դատելով պատմիչի տվյալներից՝ կարող ենք եզրակացնել, որ այս բերդը եղել է նաև բանտ, ուստի ամենևին բացառված չէ, որ Նատո Դրովանդականը, լինելով բանտային պաշտոնյա, նույնպես ներկայացրել է դատաիրավական համակարգը:

Պատվիրակության բարձրաստիճան կազմը և լիազորությունները թույլ են տալիս եզրակացնել, որ նրանք ամենևին էլ չէին եկել Հայաստան միայն Հիզտբուզիտի դատավարությունը անցկացնելու: Այս մասին ուղղակի նշվում է նաև վկայաբանության մեջ. «*Որք եկեալ ի Հայս **բազում ուղղութիւնս** արարին*»[57]: Ըստ ամենայնի, նման «ուղղություններից» է եղել նաև Դվինի ժողովի վերաբերյալ քննարկումների ծավալումը, ինչը մեծ կարևորություն է ունեցել պարսից տերության համար:

Գաղտնիք չէ, որ Խոսրով I-ը ձգտում էր իր վերահսկողությունը սահմանել պարսից տերության քրիստոնեական համայնքների նկատմամբ: Նրա անմիջական ազդեցությամբ է ընթացել Իրանի քրիստոնյաների կաթողիկոսի ընտրությունը 552 թ., որտեղ նա նույնիսկ առաջադրել էր իր բժշկի թեկնածությու-

[55] **Ներսէս Ռաժիկ** 2004, 463:
[56] **Սեբէոս** 2005, 476–477:
[57] **Սեբէոս** 2005, 476–477:

նը[58]: Ըստ որոշ աղբյուրների՝ այս արքան դրական վերաբերմունք է ունեցել քրիստոնեական եկեղեցու նկատմամբ[59]: Սեբեոսը, ոգևորված նման տեղեկություններից, նույնիսկ նշել է, թե պարսից արքան կյանքի վերջին տարիներին քրիստոնեություն է ընդունել[60]: Բնականաբար, քրիստոնյաների նկատմամբ մեղմ վերաբերմունքը ունեցել է քաղաքական նպատակներ[61]: Հարկ եղած դեպքում Խոսրով Անուշիրվանը չի հապաղել՝ պատժելու քրիստոնյաներին: Այս մասին խոսում են այն փաստերը, որ Բյուզանդիայի դեմ պատերազմների, ինչպես նաև հակակառավարական ապստամբություններին աջակցելու ժամանակ քրիստոնյաները ենթարկվել են հաշվեհարդարի ու բռնությունների[62]:

Եկեղեցական ժողովներում Խոսրով Անուշիրվանի ուղղակի ներգրավվածության մասին է վկայել է Կ. Պոլսի Փոտ պատրիարքը (IX դ.) Հայոց կաթողիկոս Զաքարիա Ա Ձագեցուն (855–877 թթ.) գրած իր նամակում: Ըստ պատրիարքի՝ հայերը քաղկեդոնականությունից հեռացել են Խոսրով Անուշիրվանի ցանկությամբ և պահանջով: Պարսից արքան այնքան գոհ է եղել հայոց եկեղեցու դիրքորոշումից, որ նույնիսկ իր որդու խնամքը հանձնել է Հայոց կաթողիկոսին: Միևնույն ժամանակ Հայաստանի հարկահանության գործը նույնպես վստահվել է վերջինիս. «*Մի բնութիւն աւանդեցին Քրիստոսի աստուածութեանն եւ մարդկութեանն եւ զԽաչեցարդ եդին յերիս սրբասացութիւնսն հակառակ կարծելով Ժողովոյն Քաղկեդոնի եւ հնգից հայրապետացն. Եւ ի Յունաց նզովիւք չափ ի զատ կացին ի հաղորդութենէ: Ընդ որս եղեւ Պարսից թագաւորն, ընդ որոշելն Հայոց ի ծեռնադրութենէն Հոռոմոց. Եւ* ***գովեալ զՆերսէս*** *եւ զյառաջ խոստացեալ դաշինսն կատարեաց* ***զորդին փալով նմա յորդեգիրս*** *եւ զՀայաստան աշխարհի* ***զհարկսն*** *ի նա հաւատաց եւ յեպիսկոպոսունսն հաւանեալս ընդ նմա*»[63]:

Հավանաբար, Փոտ պատրիարքը այս տեղեկությունները ձեռք է բերել հայ քաղկեդոնականների կողմից գրված որևէ երկից, որը նրան կարող էին տրամադրել նաև ազգությամբ հայ հոգևորականները[64]:

Պատրիարքի նամակն ինքնին ունեցել է կրոնական, դավանաբանական բովանդակություն[65], ինչը ամենևին չի ստվերում Խոսրով Անուշիրվանի միջա-

[58] **Zoubery** 2017, 128.
[59] Ասորական աղբյուրներ 1976, 440:
[60] **Սեբէոս** 2005, 472:
[61] **Мишин** 2014, 447–464.
[62] **Мишин** 2014, 452–453, 459–460.
[63] Թուղթ Փոտայ պատրիարքի առ Զաքարիա կաթողիկոս Հայոց Մեծաց 1968, 69–70:
[64] **Անանեան** 1992, 27:

մտության մասին տեղեկությունները և եղած փաստերը, հետևաբար, համապատասխանում են իրականությանը:

Արսեն Սափարացին ևս հստակ տեղեկություններ է փոխանցել այն մասին, որ հենց պարսից արքունիքի հարկադրանքով է տեղի ունեցել Դվինի Բ ժողովը[66]: Համաձայն այս պատմագրի տվյալների՝ Հայոց կաթողիկոս Ներսես «Միջին»-ը պարսից Պերոզ արքայի (459–484 թթ.) հարկադրանքով ժողով է գումարել Դվինում և ընդունել է հակոբիկյան դավանանքը՝ դադարեցնելով եպիսկոպոսներին Կեսարիա՝ ձեռնադրության ուղարկելը. «*Իսկ թագավորը (Պերոզ – **Շ.Ա.**) նորից այլ նենգության դիմեց և հայտնեց իր վճիռը [հայերին] հույներից բաժանելու մասին և ՝ վերադարձնելով դեսպաններին՝ [առաջարկեց] անել երկուսից մեկը. «Կամ ընտրեցեք ասորական բոլոր կրոններից որևէ մեկը, բացի մելքիտներինը, որոնք կրոնով հույն են, կամ թողեք ձեր երկիրը և հեռացեք մեզանից»:*

Եվ ժողով գումարեցին քաղաք Դվինում, ուր և ընդունեցին «Խաչեցարը»… և այսու հեռացան ուղիղ և ճշմարիտ դավանությունից և օտարացան սուրբ և մեծ առաքելական կաթողիկե եկեղեցուց:

Հայքն հրաման ստացավ պարսից թագավորից, որ իրենց եպիսկոպոսները իրենք ձեռնադրեն»[67]:

Արսեն Սափարացու հիշատակությունից տեսնում ենք, որ խոսքը կաթողիկոս Ներսես Բ-ի՝ Դվինի Բ ժողովը կազմակերպողի մասին է, մինչդեռ նշվում է, որ պարսից արքան եղել է Պերոզը, ինչը ակնհայտ շփոթմունքի արդյունք է: Հայտնի փաստ է, որ Դվինի Բ ժողովի ընթացքում Սասանյան Իրանում թագավորել է Խոսրով Անուշիրվանը, և, բնականաբար, խոսքը վերաբերել է հենց նրան: Վերջինս բյուզանդացիների դեմ երկարատև պատերազմի (541–557 թթ.)[68] պայմաններում տարբեր քայլերով փորձել է խաթարել հայ-բյուզանդական հարաբերությունները և վերահսկել Հայաստանի ներքին կյանքը:

Ահա այս համատեքստում կարող ենք եզրակացնել, թե ինչու էին Հայաստան եկել և ինչ մտադրություններ ունեին Խոսրով արքայի պատվիրակները: Նրանց գլխավոր առաքելությունը ոչ միայն Հիզտբուզիտին մահապատժի ենթարկելն էր, այլև Դվինի Բ ժողովի աշխատանքներին մասնակցելը: Նրանց

---

[65] **Անանեան** 1992, 18–22:

[66] **Garsoian** 1985, 237.

[67] **Մելիքսեթ-Բեկ** 2013, 35–37:

[68] **Daryaee** 2009, 31.

գործողությունները միտված էին Հայաստանում պարսից տերության դիրքերի ամրապնդմանը և հակաքաղկեդոնական տրամադրությունների խորացմանը:

Սասանյան Իրանի դատաիրավական համակարգը ըստ վկայաբանության

Հիզտբուզիտի վկայաբանությունը արժեքավոր տեղեկություններ է հաղորդել Սասանյան Իրանի **դատական համակարգի** մասին: Կարող ենք կարծել, որ հավատուրացների դատավարությունը Սասանյան տերության համար ունեցել է կարևոր նշանակություն, քանի որ անմիջապես վերաբերել է պարսից կրոնի ամրությանը և ճշմարտացիությանը: Բարձրաստիճան մոգի հավատափոխության օրինակը վտանգավոր կարող էր լինել շարքային հավատացյալների համար: Անհրաժեշտ էին դատական արտակարգ միջոցառումներ:

Ըստ վկայաբանության տվյալների՝ Հիզտբուզիտի գործը քննող մարզպանները եղել են աշխարհիկ դատավորներ, սակայն իրավունք չեն ունեցել մահապատիժ կիրառել մոգերի նկատմամբ: Նրանք կարող էին միայն բանտարկել կամ կտտանքների ենթարկել նման անձանց. «*Եւ ածեալ զնա առաջի՝ ասէ **դատաւորն** (Նիխորականը – **Շ.Ա.**) Ա՜յ թշուառական, ընդէ՞ր զհայրենի մոգութիւնս թողուս, եւ յիմար եւ ուխտակորույս լինիս:*

Եւ զայրացեալ իշխանն՝ հրամայեաց հարկանել զերանելին երկոտասան կրկին»)[69]: Կարող ենք ենթադրել նաև, որ դատական նիստերը անցկացվել են առանձին դատարանում («**ատեան**»). «*Եւ նստեալ (Նախապետը – **Շ.Ա.**) **յատենի**՝ ածին զերանելին Մախոշ առաջի նորա*»[70]:

Վկայաբանությունից հայտնի է դառնում նաև, որ դատավոր-մարզպաններին օգնել են **ատենադպիրները**: Կարող ենք կարծել, որ այս պաշտոնյաները, ի տարբերություն սովորական դպիրների, որոնք զբաղվել են տարբեր փաստաթղթեր կազմելով և փոխանցելով[71], օժտված են եղել նաև հարցաքննություններ անցկացնելու և նույնիսկ պատիժներ կիրառելու լիազորություններով: Այս հանգամանքը պարզորոշ տեսնում ենք հետևյալ դրվագից. «***Դպիր*** *ոմն սորա երթեալ ի բանտն՝ հնարէր պատրել զերանելին. ասէ ցնա. Քեզ միայն Արեաց աշխարհին չեղեւ բաւական, զի մոլորեալ ես ի մոգութենէ, անձամբ զքեզ գերի վարելով առ հասարակ յաշխարհէ եւ ի դենէ մոլորեալ:*

[69] **Ներսէս Ռաժիկ** 2004, 462:
[70] **Ներսէս Ռաժիկ** 2004, 462:
[71] **Daryaee** 2009, 33.

*Եւ լուեալ զայս **ափենադպրին**՝ յոփն յարեաւ ցասմամբ, եւ սկսաւ հարկանել զնա բրով անողորմ*»[72]:

Ըստ վկայաբանության տվյալների՝ դատական համակարգի մասն են կազմել նաև **դահճապետերը**, որոնք ի կատար են ածել մահապատիժները. «*Եւ ի վաղիւն եկեալ հաւափարիմքն երթեալ ի բանփն ածել զուրբսն. եւ եկեալ **դահճապեփն** ի բանփն՝ փանել, եւ նա հրաժարեալ յեղբարցն գնայր*»[73]:

Մոգերի առաջնորդ համարկարը չի ունեցել դատական իշխանություն և առհասարակ ներգրավված չի եղել դատական գործընթացում, չնայած Սասանյան Իրանում գործել են նաև հոգևոր դատարաններ[74]: Կարող ենք ենթադրել, որ Խոսրով Անուշիրվանը ծայրամասային երկրամասերում կիրառել է հավասարակշռման քաղաքականություն՝ համարկարի իշխանությունը սահմանափակելով մարզպանների դատական իշխանությամբ:

Վկայաբանության տվյալների համաձայն՝ մահապատժի վճիռ կարող էին ընդունել միայն արքայի լիազորած պատվիրակները. այս դեպքում նման որոշում է ընդունել է մոգպետ Պերոզը. «*Եւ յաւուր միում **հրապարակաժողով** արարեալ՝ նսփէին յափենի յաղագս հրամանին արքունի:*

Ի նմին ժամու արք ամպարիշփք զգացուցին իշխանացն եւ ասեն. են արք երեք ի բանփի, որոց զմեր պաշփաւնն թողեալ եւ զքրիսփոնեութին են յանձն առեալ, Ներսէս ոմն Ռաժիկ, եւ Սահակ ոմն յԱփրպափականէ, եւ Յիզփբուզիփ Պարսիկ:

*Եւ զափուցեալ զնոսա՝ ասէ (մոգպեփ Պերոզը – **Շ.Ա.**) ցՅիզփիբուզիփ. Ա՛յ թշուառական, ընդէ՞ր զլուսաւոր դենն թողեր եւ նսեմաւոր քրիսփոնեութան հաւափացեր, եւ դարձեալ սփիպելով զոհեալ քո հրոյ*»[75]:

Այսպիսով, կարող ենք ասել՝ դատական նիստը կրել է հանդիսավոր բնույթ. անցկացվել է հրապարակաժողովում, որտեղ ներկա են եղել Խոսրով Անուշիրվանի երեք պատվիրակները, մահապարտներն ու բազմությունը:

Այս դատավարության ընթացքում տեսնում ենք, որ Սասանյան օրենքները հստակ տարբերություններ են դրել քրիստոնեություն ընդունած հպատակների միջև: Մանկուց քրիստոնեության հետևորդները մահապատժի չեն ենթարկվել. «*Ասէ մոգպեփն ցՆերսէս. Ընդէ՞ր եղեր քրիսփոնեայ: Ասէ երանելին. Մայր իմ քրիսփոնեայ էր, եւ **ի փղայութեանն** էի հաւափացեալ ի Քրիսփոս, չգիփեմ*

---

[72] **Ներսէս Ռաժիկ** 2004, 462–463:
[73] **Ներսէս Ռաժիկ** 2004, 464:
[74] **Периханян** 1983, 266–267.
[75] **Ներսէս Ռաժիկ** 2004, 463:

բնաւ գձեր դենդ: Հարցեալ եւ ընդ Սահակ. եւ նա ասէ. ***Ի պղայութեանն*** *լեալ էի քրիստոնեայ»*[76]: Նման դրվագի հանդիպում ենք նաև Եվստաթիոսի վկայաբանության մեջ, երբ այս վկայի ընկերակիցներից Ստեփանը նույնպես փրկվել է մահապատժից, քանի որ մանկուց եղել է քրիստոնյա և մեծացել քրիստոնյաների ընտանիքում. «*Եվ վեր կացան ասորիների գլխավորները և Ստեփանի մասին ասացին. «Մենք գիտենք այս մարդուն՝ մեր գյուղից է, իր հայրը, մայրը, եղբայրները և քույրերը քրիստոնյա են և* ***ինքն էլ է քրիստոնյա****»: Եվ Ստեփանին նրանց բառերի համաձայն ազատեցին»*[77]:

Չնայած նման ուշագրավ վկայություններին՝ դժվար է պնդել, որ Ներսես Ռաժիկն ու Սահակ Ատրպատականացին անմիջապես ազատ են արձակվել, քանի որ «Սասանյան դատաստանագիրք»-ը այս դեպքում ազատություն չի նախատեսել մեղադրյալների համար. «*Մարդը, ում ազատազրկման պատճառները հայտնի են, սակայն դատավորը նրան հարցաքննում է այլ գործի շրջանակներում և պարզում, որ նա անմեղ է, միևնույնն է, իրավակարգից ելնելով՝ չի կարող ազատել բանտից*»[78]:

Այս ամենից կարող ենք հետևություն անել, որ V դ. և ընդհուպ մինչև Խոսրով Անուշիրվանի կառավարման առաջին տասնամյակը[79] պարսից արքունիքը զգուշացել է խիստ օրենքներ ընդունելուց ընդդեմ դավանափոխ մոգերի, ինչը կարող էր վտանգավոր հետևանքներ ունենալ: Հիզտբուզիտի վկայաբանության տվյալներից կարող ենք եզրակացնել, որ զգալով հավատափոխության սպառնալիքները՝ հետագայում սահմանվել են խիստ պատիժներ: Նմանատիպ պատիժներից էր նաև «մահացու մեղքի» օրենքը: Ըստ այս օրենքի՝ բոլոր այն զրադաշտականները, որոնք հրաժարվել են մասնակցելուց կրոնական ծեսերի, ենթարկվել են խիստ պատիժների՝ ընդհուպ մահվան[80]: Հայտնի է, որ Հիզտբուզիտը նույնպես հրաժարվել է մասնակցել զրադաշտական տոնակատարության, ուստի չենք կարող բացառել, որ նրա նկատմամբ կիրառված մահապատիժը եղել է հենց այս օրենքի շրջանակներում:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև քրիստոնեություն ընդունած պարսիկներին պատժելու ձևերը: Հավատուրաց Հիզտբուզիտի **մազերն** ու **մորուքը** կտրել են, որովհետև դրանք համարվել են զրադաշտական

---

[76] **Ներսէս Ռաժիկ** 2004, 463:
[77] წმ. ევსტათის მარტვილობა 2008, 252.
[78] **Периханян** 1973, 349.
[79] **Мишин** 2014, 458–459.
[80] **Периханян** 1983, 258–259.

հավատացյալի կերպարի կարևոր բաղկացուցիչներ. «*Եւ զայրացեալ իշխանն՝ հրամայեաց հարկանել զերանելին երկոփասան կրկին, եւ կփրեալ զմաւրուսն եւ զհերս*», «*հարկանէին զգլուխ երանելւոյն եւ* ***զմաւրուսն խլեալ արմափաքի***»[81]: «Սասանյան դատաստանագիրք»-ը նույնիսկ հատուկ տուգանք էր սահմանել դրանք կտրողների համար[82]: Այսպիսի դրվագներ կարող ենք տեսնել նաև Եվստաթիոսի վկայաբանության մեջ. «*Սափրեք դրանց (Եվսփաթիոսի ու ընկերների –* ***Շ.Ա.****)* ***գլուխն ու մորուքը*** *և ծակեք դրանց քթերը*»[83]: Նման պատիժները տարածված են եղել ոչ միայն Եվստաթիոսի և Հիզտբուզիտի ժամանակներում: Այսպիսի տույժերի մասին տեղեկություն պահպանվել է նաև Դավիթ Դվնեցու վկայաբանության մեջ. «*խոշփանգել պէսպէս կփփանաւք և հարուածովք, և քարշմամբք* ***փեփփել զհերսն*** *և* ***զմաւրուսն*** *առ ի հրապուրել զնա ի դեն մոլորութեան իւրեանց*»[84]:

Քանի որ վկայաբանություններում նշվող պատժաձևերի մասին հիշատակություններ կարելի է գտնել նաև Սասանյան օրենսգրքերում, կարող ենք եզրակացնել, որ դրանք միանգամայն իրական են: Փաստորեն, դենակրոյս մոգերի նկատմամբ կիրառվել են հատուկ պատժաձևեր, որոնք մեծ անպատվություն են համարվել զրադաշտականների համար:

Եզրակացություն

Հիզտբուզիտի վկայաբանության մեջ ավանդված պատմական տեղեկությունները կարևոր ու բազմաբովանդակ փաստեր են հաղորդել Մարզպանական Հայաստանի և առհասարակ Սասանյան տերության մասին: Վկայաբանության մեջ ուշագրավ տվյալներ են պահպանվել Հայաստանի վարչական բաժանումների, քաղաքական ու տնտեսական կյանքի մասին: Մեծարժեք են այն վկայությունները, որոնք վերաբերում են հասարակական կյանքին, հատկապես վաղմիջնադարյան դավանաբանական ու կրոնական իրականությունը պայմանավորող Դվինի Բ ժողովին: Առավել մանրամասն տեղեկություններ են պահպանվել Հայաստանում հաստատված իրանական վարչակարգի վերաբերյալ՝ ճշգրտումներ մտցնելով կառավարիչ-մարզպանների, հազարապետների, համարկարների, մոգպետների կառավարման տարեթվերի, անվանումների, ինչպես նաև հաստատված բարդ հարաբերությունների հարցում: Վկայաբանությունը բազմաթիվ կարևոր հիշատակություններ է պարունակում Սասանյան Իրանի դատական համակարգի, քաղաքական

[81] **Периханян** 1983, 462, 463.
[82] **Периханян** 1973, 353.
[83] წმ. ევსტათის მარტვილობა 2008, 246.
[84] Վկայաբանութիւն սրբոյն Դաւթի 1944, 128:

ու կրոնական վերնախավի, Հայաստանի հետ դրանց ունեցած հարաբերություննե-րի, ինչպես նաև զրադաշտական կրոնի մասին:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ակինեան Ն. 1910, Կիւրիոն կաթողիկոս Վրաց, Վիեննա, Մխիթարեան տպ., ԻԷ+315:

Աճառյան Հ. 1977, Հայերեն արմատական բառարան, հ. Գ, Երևան, ԵՊՀ հրատ., 645 էջ:

Անանեան Պ. 1992, Զաքարիա Հայոց Կաթողիկոսի եւ Աշոտ իշխանաց իշխանի թղ-թակցութիւնը Փոտ պատրիարքի եւ Նիկողայոս Ա. Պապի հետ, Վենետիկ, տպ. Ս. Ղազար, 105 էջ:

Անանեան Պ. 1957, Պատմական յիշատակարան մը Դուինի Բ. ժողովքի մասին, Բազ-մավէպ, թիվ 5–6, տպ. Ս. Ղազար, 296 էջ:

Անանեան Պ. 1991, Քննութիւն հայ եկեղեցու պատմութեան Ե եւ Զ դարերու շրջանին, Վենետիկ, տպ. Ս. Ղազար, 130 էջ:

Ասորական աղբյուրներ 1976, հ. Ա, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանո-թագրություններ Մելքոնյան Հ., Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 8, Երևան, ԳԱ հրատ., 478 էջ:

Բաբգէն կաթողիկոս Ութմսեցի 2004, [Ա] թուղթ Հայոց ի Պարսս, առ ուղղափառս, «Մատենագիրք Հայոց», հ. Գ, Անթիլիաս-Լիբանան, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 561 էջ:

Բաբգէն կաթողիկոս Ութմսեցի 2004, Բ թուղթ Հայոց ի Պարսս, առ ուղղափառս, «Մատենագիրք Հայոց», հ. Գ, Անթիլիաս-Լիբանան, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 561 էջ:

Բադալյան Հ. 1976, Հայոց տոմարի պատմություն, Երևան, ԳԱ հրատ., 153 էջ:

Բադալյան Հ. 1970, Օրացույցի պատմություն, Երևան, ԳԱ հրատ., 562 էջ:

Բարթիկյան Հ. 2002, “Narratio de rebus Armeniae”, հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. I, Երևան, ԵՊՀ հրատ., 822 էջ:

Թուղթ Փոտայ պատրիարքի առ Զաքարիա կաթողիկոս Հայոց Մեծաց 1968, Հանդէս ամսօրեայ, թիվ 1–2, Մխիթարեան տպ., էջ 512

Կիրակոս Գանձակեցի 1961, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, ԳԱ հրատ., 426 էջ:

Հարությունյան Բ. 1981, Փայտակարան քաղաքը և նրա տեղադրությունը, Լրաբեր հա-սարակական գիտությունների, թիվ 12, ԳԱ հրատ., 112 էջ:

Մելիքսեթ-Բեկ Լ. 2013, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Գիրք Ա, Երևան, ԵՊՀ հրատ., 788 էջ:

Մովսէս Խորենացի 2003, Պատմութիւն Հայոց, «Մատենագիրք Հայոց», հ. Բ, Անթիլի-աս-Լիբանան, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, էջ 1289–2601:

Յակոբեան Ա. 2011, «Գահնամակ ազատաց եւ տանուտէրանց Հայոց» եւ «Զաւրանա-մակ», Բազմավէպ, թիվ 3–4, տպ. Ս. Ղազար, 698 էջ:

Յովհաննէս Դրասխանակերտցի 2010, Պատմութիւն Հայոց, «Մատենագիրք Հայոց», հ. ԺԱ, Անթիլիաս-Լիբանան, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 795 էջ:

Ներսէս Ռաժիկ 2004, Վկայաբանութիւն սրբոյն Յիզտիբուզտեայ, «Մատենագիրք Հայոց», հ. Գ, Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս-Լիբանան, 561 էջ:

Սեբէոս 2005, Պատմութիւն, «Մատենագիրք Հայոց», հ. Դ, Անթիլիաս-Լիբանան, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 791 էջ:

Ստեփանոս Տարաւնեցի 2010, Պատմութիւն Տիեզերական, «Մատենագիրք Հայոց», հ. ԺԵ, Անթիլիաս-Լիբանան, ԵՊՀ հրատ., 894 էջ:

Տեր-Դավթյան Ք. 2011, Հայկական սրբախոսություն, Երևան, «Նաիրի» հրատ., 423 էջ:

Տեր-Ղևոնդյան Ա. 2003, Հայոց իշխան տիտղոսի ծագումը և Հայոց տերությունը VII դարում, Հոդվածների ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատ., XV+697 էջ:

Տեր-Ղևոնդյան Ա. 2003, Քուստ-ի Կապկոհ վարչական միավորի վերապրուկները խալիֆայության ժամանակ, Հոդվածների ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատ., էջ XV+697:

Տեր-Մկրտչյան Գ. 1998, Գրիգոր-Մանաճիհր Ռաժիկ, Միհրան տոհմից Հայագիտական ուսումնասիրություններ, Գիրք Բ, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպ., 537 էջ:

Քալանթարյան Ա. 1982, Դվինի 1980 թ. պեղումների հիմնական արդյունքները, Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 12, ԳԱ հրատ., 116 էջ:

Քալանթարյան Ա., Ղաֆադարյան Կ. 1990, Դվինի վաղմիջնադարյան մոնումենտալ ճարտարապետության ժամանակագրության որոշ հարցեր, Պատմա-բանասիրական հանդես, թիվ 1, ԳԱ հրատ., 244 էջ:

აბულაძე ი. 1944. ქართული და სომხური ლიტერატურული ურთიერთობა IX–X სს., თბ., საქ. სსრ მეცნ. აკად. გამ-ბა, გვ. 275

წმ. ევსტათის მარტვილობა 2008, ქართული ჰაგიოგრაფიული ეგლები, თბ., ტ. I, გვ. 187.

Boyce M. 1979, Zoroastrians: Their Religious Beliefs and Practices, London, Boston : Routledge & Kegan Paul, XXI+ 252 p.

Brown P. 1982, Society and the Holy in Late Antiquity, Berkeley and Los Angeles, University of California Press, VII+347 p.

Staat K. 2018, Late Antique Latin Hagiography, Truth and Fiction: Trends in Scholarship, L'Antiquité Classique 87, 744 p.

Garsoian N. 1985, Armenia between Byzantium and the Sasanians, London, Variorum Reprints, VIII+340 p.

Shapira Dan D.Y. 2008, Gleanings on Jews of Greater Iran under the Sasanians (According to the Oldest Armenian and Georgian Texts), Iran and the Caucasus 12, Brill, 173 p.

Daryaee T. 2009, Sasanian Persia: The Rise and Fall of an Empire, London-New York, I.B.Tauris & Co Ltd., 248 p.

Vacca A. 2013, From Kʿusti Kapkoh to Al-Ğarbī: Sasanian Antecedents, the Sectarian Milieu, and the Creation of an Islamic Frontier in Armīniya, The University of Michigan, VII +334 p.

Zoubery J. 2017, The Role of Religion in the Foreign Affairs of Sasanian Iran and the Later Roman Empire (330–630 A.D.), Historia i Świat, 6, Instytut Historii i Stosunków Międzynarodowych Uniwersytetu Przyrodniczo-Humanistycznego w Siedlcach, 162 p.

Бибиков М. 1996, Историческая литература Византии, СПб., изд. «Алетейя», с. 315

Дашков С. 2008, Цари царей-Сасаниды, Москва, СМИ-Азия, 356 с.

Мишин Д. 2014, Хосров I Ануширван (531–579), его эпоха и его жизнеописание поучение в истории Мискавейха, Москва, ИВ РАН, 696 с.

Периханян А. 1983, Общество и право Ирана в Парфянский и Сасанидский периоды, Москва, изд. «Наука», 383 с.

Периханян А. 1973, Сасанидский судебник, Ереван, изд. АН Армянской ССР, 609 с.

Хуршудян Э. 2003, Армения и Сасанидский Иран, Алматы, Print-S Publ., 474 с.

Хуршудян Э. 2015, Государственные институты парфянского и сасанидского Ирана, Алматы, изд. «Институт Азиатских исследований», 400 с.

ИСТОРИЧНОСТЬ МАРТИРОЛОГИИ ИЗТБУЗИТА

АЗАТЯН Ш.

Резюме

Ключевые слова: *агиография, Сасанидский Иран, амаркар, марзпанская Армения, зороастризм, иностранные святые, Двин.*

Мартирология Изтбузита – одно из важнейших литературных произведений армянской агиографии, содержащее исторические данные о марзпанской Армении и Сасанидском Иране.

Сохранились памятные данные об административных районах Армении, её политической и экономической жизни. Особую ценность представляют сведения, касающиеся общественной и религиозной жизни раннего средневековья, в частности, сведения о Втором Двинском Соборе (553–555), который оказал огромное влияние на общественную и религиозную жизнь Армении на протяжении всего средневековья.

Наиболее подробные сведения сохранились об иранской административной системе, которые вносят поправку в даты управления азарапетов, марзпанов, амаркаров.

Имеются также важные упоминания о Сасанидском Иране, в частности, сведения о судебной системе, политических и религиозных отношениях с Арменией. Данные же, касающиеся зороастризма, расширяют наши знания об этой религиозной системе и ее обрядах.

Помимо сказанного приводятся сведения о дворянских семьях Сасанидского Ирана, находившихся в тесной связи с марзпанской Арменией и занимавших там высокие посты.

HISTORICAL VALUE OF MARTIROLOGY OF HIZTBUZIT

AZATYAN SH.

Summary

Key words: *Hagiography, Sasanian Iran, Amarkar, Armenia of Marzpanate, Zoroastrianism, Foreign Saints, Dvin.*

Martyrology of Hiztbuzit is an important literary work of Armenian Hagiography that has multidisciplinary historical knowledge about Armenia of the Marzpanate period and the Sasanian Empire.

There are many remarkable data about administrative, economic and political system of Armenia in the Early Middle Ages. Especially important information on the Second Council of Dvin (553–555) that had a great influence on social and religious life of Armenia during the Middle ages. Multiple data have been preserved about the Iranian administration, amending the dates for the governance of the azarapetes, marzpanes and amarkares.

Ample and unique evidence also exists on the number of high-ranking Sasanian tribes in Iranian juridical, political and tax system of the Sasanaian Empire. The data on Zoroastrian religion elucidates its essence in terms of religious rituals. Moreover, the article also dwells upon the noblity of Sasanian Iran that was closely connected with Armenia, occupying leading positions there.

ՄԱՐԻԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ[*]
Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
mariamhovsepian@mail.ru

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ Կ.ՊՈԼՍԻ «ԾԱԿԱՏԱՄԱՐՏ» ՕՐԱԹԵՐԹԻ ԷՋԵՐՈՒՄ (1918–1919 ԹԹ.)

Բանալի բառեր. *Հայաստանի Առաջին հանրապետություն, խորհրդարան, օրենքներ, որոշումներ, պատգամավորներ, օրինականություն, իրավահավասարություն:*

Ներածություն

1918–1919 թթ. «Ծակատամարտ» օրաթերթն[1] անդրադարձել է Հայաստանի Առաջին հանրապետության կյանքի տարբեր բնագավառներին: Հիմնական շեշտադրումներն արվել են ներքին և արտաքին քաղաքականության մարտահրավերներին, կառավարության ու խորհրդարանի աշխատանքներին, հայոց նորանկախ պետականության գաղափարի արժեվորմանը: Պարբերականի մոտեցումներն հիմնականում անաչառ են, վերլուծություններն՝ օբյեկտիվ, իսկ առաջարկները՝ կառուցողական: Թերթի հրապարակումները հիմք են տալիս վկայելու, որ երկրի իշխանությունները (օրենսդիր, գործադիր և դատական) արել են հնարավորը թե՛ պետականաշինության, թե՛ Հայաստանի սահմաններն անխախտ պահելու, թե՛ այլ պետությունների հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու, թե՛ Հայկական հարցի լուծմանը նպաստելու համար:

[*] *Հոդվածը ներկայացվել է 19.04.2019, գրախոսվել է 16.04.2019, ընդունվել է տպագրության 05.12.2019:*

[1] «Ծակատամարտ» օրաթերթը լույս է տեսել Կ.Պոլսում 1918–1924 թթ., ՀՅԴ Արևմտյան բյուրոյի օրգան «Ազատամարտ» օրաթերթի (1909–1915 թթ.) իրավահաջորդն է համարվել, թեև արդեն չի եղել հայկական որևէ կուսակցության պաշտոնաթերթ: Ունեցել է երկու խմբագիր՝ Շավարշ Միսաքյան և Հակոբ Սիրունի (Ճոլոյան): Արտոնատերը Վրթանես Մարտիկյանն էր:

Խորհրդարանական ընտրությունները և Հայաստանի Առաջին հանրապետության օրենսդիր մարմնի կազմավորման ընթացքը «Ճակատամարտի» էջերում

«Հայաստանին խորհրդարանին մեջ» խորագրի ներքո գրեթե բոլոր համարներում տպագրված լուրերը, ռեպորտաժներն ու վերլուծական հոդվածները պատկերացում են տվել Հայաստանի օրենսդիր մարմնի ձևավորման, դրա ընթացիկ աշխատանքների, ընդունած որոշումների, այնտեղ կազմակերպված հանդիպումների և անցկացված լսումների մասին: Գերակշռում են տեղեկատվական բնույթի հրապարակումները: Բերենք մի քանի օրինակ:

1918 թ. դեկտեմբերի 31-ի տարեվերջյան համարում ընթերցողներին նախ ներկայացրել են խորհրդարանի նորընտիր անդամներին (Արտաշես Էնֆիաջյան, Մինաս Բերբերյան, Լևոն Ղույյան, Միքայել Աթաբեկյան), ապա տեղեկացրել են 37-րդ նիստում ընդունված որոշումների մասին[2]: Ա. Էնֆիաջյանը հայտնի առևտրական և ծխախոտի գործարանատեր էր (ստանձնել էր ելմտական, առևտրական ու աշխատանքի նախարարության ղեկը), Մ. Բերբերյանն անվանի գրող էր, Էջմիածնի Գևորգյան ճեմարանի ուսուցիչ էր եղել մինչ այդ, Լ. Ղույյանը հանրությանը քաջածանոթ ճարտարապետ էր, իսկ Մ. Աթաբեկյանը հանրահայտ փաստաբան էր[3]: Գ. Ջարյանի նախագահությամբ տեղի ունեցած այդ նիստում ընդունված օրինագծերից մեկով Հայաստանի Առաջին հանրապետության արտաքին գործերի նախարարին 300.000 ռուբլի վարկ էր տրամադրվել՝ Պարսկաստանի հայ գաղթականներին օգնելու համար[4]: Մեկ այլ օրինագծի հաստատմամբ՝ Երևանի երկաթուղային կայարանի ծառայողներին փոխարինաբար, մեկ տարի ժամկետով, 10.000 ռուբլի էր հատկացվել՝ կոոպերատիվ խանութ բացելու նպատակով[5]: Նույն նիստում վարչապետ Հովհաննես Քաջազնունին պատգամավորներին տեղեկացրել էր այդ օրերին Թիֆլիսում գտնվող երեք հայ նախարարների ու պետական հաշվեքննիչի ստորագրություններով հաստատված և ստացված հեռագրի մասին, որտեղ նրանք առաջարկել էին գնել 150.000 ռուբլի արժեք ունեցող հեռագրային անթել հզոր կայան Հայաստանի համար: Խորհրդարանը որոշել էր 200.000

[2] Ճակատամարտ 1918, № 37 (Հայաստանին Խորհրդարանին մեջ):
[3] Ճակատամարտ 1918, № 37:
[4] Ճակատամարտ 1918, № 37:
[5] Ճակատամարտ 1918, № 37:

ռուբլի փոխանցել նրանց՝ այդ կայանը գնելու և Երևան տեղափոխելու ծախսերը հոգալու համար[6]:

Հայաստանի Առաջին Հանրապետության օրենսդիր մարմնի աշխատանքներին ակտիվորեն մասնակցել էին ցեղասպանությունից մազապուրծ արևմտահայության ներկայացուցիչները: 1919 թ. ապրիլի 19-ին «Ճակատամարտը» տպագրել էր թղթակցություն Երևանից, և թղթակիցը մարտի 28-ին գրած իր այդ նյութի մեջ հաղորդում էր. «Հայաստանի Հանրապետութեան սահմաններու մէջ գտնուող Արեւմտահայերու հանրային կեանքը հետզհետէ կը մտնէ բնականոն ճամբու մէջ: Տեղի ունեցաւ Երեւանի մէջ Արեւմտահայերու համագումարը, որ ներգաղթի, զինուորութեան, պարենաւորման և այլ մարմիններու կազմութեան մասին կարեւոր վճիռներ տալէն յետոյ, բանակցութեան մտաւ հանրապետական կառավարութեան հետ՝ իր գործօն մասնակցութիւնը բերելու պետութեան կազմութեան աշխատանքին մէջ»[7]: Երկար բանակցություններից հետո կառավարությունը և Արևմտահայերի խորհուրդը համաձայնության էին եկել, որ արևմտահայերի այդ կառույցի կողմից ընտրված 12 պատգամավոր պետք է մասնակցեին խորհրդարանի աշխատանքներին. «Այսպէսով՝ 2 հայկական հատուածներու պետական կեանքի մէջ համագործակցութեան 1-ին և կարեւոր քայլը առնուած պէտք է նկատել»[8]:

Թերթը ողջունել էր կառավարության հիշյալ որոշումը՝ Հայաստանի Առաջին հանրապետությունը համարելով ողջ հայության պետությունը: «Հանրապետական կառավարութիւնը, իբրեւ կորիզ հայկական անկախութեան և Հայաստանի սահմաններու ընդլայնումին, պաշտօն ունի նաեւ գրաւելու Տաճկահայաստանի հողամասերը՝ օժանդակութեամբ դաշնակից ուժերու: Այս իսկ հանգամանքով այլ եւս Հայաստանի Հանրապետութիւնը կը դադրի Ռուսահայաստանի հողին մէջ սահմանափակուելէ և կը դառնայ ամբողջ Հայաստանի Հանրապետութիւն: Այս պարագային ինքնին կը ծագի տաճկահայերու մասնակցութիւնը պետական գործերու մէջ»[9],- գրում էր թերթն իր առաջնորդողներից մեկում: Ընդ որում, «Ճակատամարտը» 1919 թ. հունիսի 21–23-ին անցկացված խորհրդարանական ընտրություններին[10] մասնակցող արևմտա-

---

[6] Ճակատամարտ 1918, № 37:

[7] Ճակատամարտ 1919, № 134 (Թրքահայերու մասնակցությունը հայկական խորհրդարանին):

[8] Ճակատամարտ 1919, № 134:

[9] Ճակատամարտ 1919, № 166 (Հայաստանի երեսփոխանական ընտրութիւնները):

[10] **Հակոբյան** 2018, 60:

հայերին համարում էր ոչ թե «Ռուսահայ Հանրապետութեան», այլ «Հայաստանի քաղաքացի»[11]:

Տրդատ Գալանճյանը, իբրև Բաթումից 1919 թ. մայիսի վերջին Կ. Պոլիս վերադարձած անձ, ով այնտեղ աչքի էր անցկացրել Երևանից ստացված պարբերականներն իրենց պաշտոնական լուրերով, փաստում էր, որ 1919 թ. խորհրդարանական ընտրություններին մասնակցում էր նաև արևմտահայ գաղթականությունը[12]: Հայաստանյան կուսակցությունների ընտրացուցակներում ընդգրկված էին արևմտահայ գործիչներ: Ասենք՝ ՀՅԴ ցուցակը պարունակում էր 20-ից ավելի արևմտահայերի անուններ, ի թիվս որոնց՝ Գարեգին Փաստրմաջյանը (Արմեն Գարո), Սեպուհը (Արշակ Ներսիսյան), Կարո Սասունին, Վահագն Քրմոյանը և այլք[13]: Թղթակցի կարծիքով՝ Հայաստանում հայ ժողովուրդը, մեկ սիրտ և մեկ հոգի դարձած, փորձում էր տնօրինել սեփական երկրի քաղաքական ճակատագիրն ու կյանքը[14]:

Խորհրդարանական ընտրություններին մասնակցող Հայաստանի Հանրապետության սահմաններում ապաստանած ավելի քան 250.000 փախստական արևմտահայության պաշտոնական ներկայացուցչական մարմինը Արևմտահայ համագումարն էր[15]: «Հայաստանի Հանրապետութեան խորհրդարանին մէջ պիտի մտնեն առնուազն 20 արեւմտահայ՝ առնուած Վանի, Կարնոյ և Բաղէշի հայութենէն»[16],- այսպիսին էր թերթի համոզմունք-ցանկությունը:

Միևնույն ժամանակ «Ճակատամարտն» անդրադառնում էր Զավեն արքեպիսկոպոս Եղիայանի, Պողոս Նուբարի ու նրանց շրջապատի կողմից հնչեցված այն տեսակետին, ըստ որի՝ «Թրքահայերէն ընտրուած երեսփոխանները իբր Երեւանի Հանրապետութեան շրջանակի երեսփոխաններ պիտի նկատուին», քանի որ չէին կարող արտահայտել «ուղղակի Թրքահայաստանի հողին վրայ բնակող Հայութեան կարծիքը»[17]: Այս կապակցությամբ հոդվածագիր Արամ Սաֆրաստյանը հիշեցնում էր, որ Արևմտյան Հայաստանում գրեթե հայ չէր մնացել, իսկ եղածներն էլ ի վիճակի չէին իրենց կամքն արտա-

[11] Ճակատամարտ 1919, № 166 (Հայաստանի երեսփոխանական ընտրութիւնները):

[12] Ճակատամարտ 1919, № 170 (Հայաստանի Խորհրդարանի ընտրութիւնները):

[13] Ճակատամարտ 1919, № 170:

[14] Ճակատամարտ 1919, № 170:

[15] Ճակատամարտ 1919, № 171 (Դարձեալ Հայաստանի ընտրութիւնները):

[16] Ճակատամարտ 1919, № 171:

[17] Ճակատամարտ 1919, № 177 (Խորհրդարանական ընտրութիւնները Հայաստանին մեջ):

հայտել Թուրքիայում տիրող իրավիճակի պատճառով[18]: Այնինչ, Հայաստանի Հանրապետություն գաղթած արևմտահայերը վաղուց էին իրենց ճակատագիրը կապել նորանկախ երկրի ու նրա կառավարության հետ: «Հայաստան ու Կովկաս ապաստանած հայութիւնը Պոլսէն կամ Փարիզէն հրահանգ ստանալու հարկին մէջ չէր գտնուէր…Արեւմտահայութեան երեսփոխանները պիտի ըլլան Հայաստանի Հանրապետութեան երեսփոխաններ, Հանրապետութիւն, որի սահմանները Երեւանէն շատ աւելի դէպի անդին կը տարածուին»[19],- նշում էր Ա. Սաֆրաստյանը:

Պարբերականի հրապարակումներում շարունակ այն միտքն էր շեշտվում, որ Հայաստանի Հանրապետության խորհրդարանը կազմվել էր «առանց ընտրութեան, տեսակ մը նշանակովի, քաղաքական կուսակցութիւններէն համեմատական թուով ներկայացուցիչներ առնելով»[20]: Այդպիսի խորհրդարանը չէր կարող լինել ժողովրդի հարազատ ներկայացուցչությունը, իսկ նրանից ընտրված կառավարությունը «միշտ տկար և անկայուն մնալու դատապարտուած էր»[21]: Թերթն առաջ էր քաշում ժողովրդապետական ընտրություններով խորհրդարան կազմելու պահանջ, քանի որ «երեսփոխանական ժողովի ուժեղ կուսակցութենէ մը կամ 1է աւելի կուսակցութեանց համախմբութենէն բխած ուժեղ կառավարութեան մը պէտքը անհրաժեշտ է անսայթաք և առանց տատանումի գործերը տանելու համար մինչեւ վերջին հանգրուանը»[22]:

«Ճակատամարտի» կարծիքով՝ իր առաջարկած մոդելով կազմված խորհրդարանը ժողովրդի կամքի արտահայտությունն էր լինելու, քանի որ դրա համար հիմքեր էր ստեղծել Ընտրական օրենքը. «Տրամադրութիւնները, որոնցմով կազմուած էր այդ օրէնքը, բնաւ տարակոյս չեն ձգեր, թէ նոր խորհրդարանը պիտի ըլլայ իսկապէս ժողովուրդին ներկայացուցչութիւնը և՝ այնքան ռամկավար, որքան ամենէն աւելի քաղաքակրթուած արդիական երկրի մը մէջ»[23]: Այդ օրենքն ապահովում էր ազատ, բռնությունից և կաշկանդումներից զերծ ընտրություններ: 1-ին հոդվածն ազդարարում էր հիմնական սկզբունքները. «Հայաստանի Հանրապետութեան պարլամենտի անդամներին ընտրում է ազգաբնակչութիւնը՝ առանց սեռի խտրութեան՝ ընդհանուր և հաւասար ընտ-

[18] Ճակատամարտ 1919, № 177:
[19] Ճակատամարտ 1919, № 177:
[20] Ճակատամարտ 1919, № 166 (Հայաստանի երեսփոխանական ընտրութիւնները):
[21] Ճակատամարտ 1919, № 166:
[22] Ճակատամարտ 1919, № 166:
[23] Ճակատամարտ 1919, № 171 (Դարձեալ Հայաստանի ընտրութիւնները):

րական իրաւունքի հիման վրայ, ուղղակի ընտրութեան և գաղտնի քուէարկութեան միջոցով, գործադրելով համեմատական ներկայացուցչութեան սկզբունքը»[24]: «Հայոց պատմության» ակադեմիական բազմահատորյակում նշված է, որ 1919 թ. խորհրդարանական ընտրություններն անցկացվել էին համամասնական ընտրակարգով, ընդ որում, համաձայն Ընտրությունների մասին օրենքի, ընտրելու իրավունքից օգտվել էին 20 տարին լրացած երկու սեռի բոլոր քաղաքացիները, «այդ թվում՝ ՀՀ տարածքում ապաստանած արևմտահայ գաղթականները՝ ընդհանուր, ուղղակի, հավասար և գաղտնի քվեարկության միջոցով»[25]: Օրենսդիր մարմինն ունենալու էր 80 պատգամավոր[26]:

Նորընտիր խորհրդարանն ավելի ակտիվ և արդյունավետ էր աշխատելու՝ դառնալով Միացյալ Հայաստանի 1-ին հիմնաքարը և Ամբողջական Հայաստանի կորիզը[27]: Այդ ամենի համար համապատասխան երաշխիքներ էին ստեղծել երկրի նախորդ շրջանի վարիչներն իրենց կենսունակ գործունեությամբ՝ հակառակ բազմաթիվ խոչընդոտների[28]:

1919 թ. հունիսի 29-ին «Վերջին ժամ» խորագրի լուրերի շարքում առանձնահատուկ տեղ էր գրավում Հայաստանի Հանրապետության խորհրդարանական ընտրությունների ավարտն ավետող տեղեկությունը[29]: Նշվում էր նաև, որ դրանց մասնակցել էին քաղաքական 5 հոսանք՝ իրենց ընտրացուցակներով. «Հ.Յ.Դաշնակցութիւնը, Ընկերվարական Յեղափոխականները, Քիւրտ-Թաթարական խմբակցութիւնը, Ասորիները ու անկուսակցական գիւղացիութիւնը: Ընտրութիւններու մէջ բացարձակ յաղթանակը շահած է Հ.Յ.Դաշնակցութիւնը»[30]:

1919 թ. հունիսի 19-ին «Ճակատամարտը» վերլուծում էր Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունները՝ հիմնվելով Հայկական հեռագրական գործակալության տրամադրած թվային նախնական տվյալների վրա[31]: Ըստ այդմ՝ Հայաստանի սահմաններում ապ-

---

[24] Ճակատամարտ 1919, № 171:

[25] Հայոց պատմություն 2010, 31:

[26] **Կարապետյան** 2003, 261:

[27] Ճակատամարտ 1919, № 171 (Դարձեալ Հայաստանի ընտրութիւնները):

[28] Ճակատամարտ 1919, № 171:

[29] Ճակատամարտ 1919, № 193 (Հայաստանի Խորհրդարանական ընտրութիւնները վերջացած):

[30] Ճակատամարտ 1919, № 193:

[31] Ճակատամարտ 1919, № 210 (Թիւերը աւելի պերճախօս են, քան խօսքերը):

րող գրեթե 2.000.000 բնակչությունից խորհրդարանի ընտրություններին մասնակցել էր ընտրելու իրավունք ունեցող 197.377 քաղաքացի[32]:

Քվեները բաշխվել էին համապատասխանաբար՝

- ՀՅԴ - 174.545 քվե,
- Ընկերվարական հեղափոխականներ - 8.225
- քրդեր - 1.325
- թաթարներ - 9.860
- ասորիներ - 174
- գյուղացիական միություն - 2.689[33]:

Հոդվածագիր Կարո Սասունին փաստում էր, թե «Հայաստանէն եկած թղթակցութիւններէն կ'երեւայ, որ ձայնի իրաւունք ունեցողներու 100-ին 60-ը մասնակցած է ընտրութեանց: Եթէ Հայաստանը հիմակուան սահմաններով վերցնենք և բոլոր անպատեհութիւնները նկատի չառնենք, դարձեալ 100ին 8ը մասնակցութիւնը բերած է»[34]: Նա նաև գրում էր, որ գրանցված արդյունքը ժամանակի քաղաքակիրթ երկրների խորհրդարանական ընտրությունների արդյունքների համեմատությամբ կարելի էր գոհացուցիչ համարել[35]: Ասում էր, որ եթե նկատի ունենային «եւրոպական զանազան պետութիւններու ընտրական արդիւնքները», ապա կտեսնեին, որ «առհասարակ հասարակութեան 100ին 10ը միայն կը մասնակցի ընտրութեանց»[36]:

Կարո Սասունին, ամփոփելով իր վերլուծության արդյունքները, եզրակացնում էր. «Այսպիսով, Հայաստանը կ'ունենայ ընտրովի խորհրդարան մը, որ մեծ առաւելութիւններ կը ներկայացնէ որպէս պետական բարձրագոյն հաստատութիւն, որովհետեւ անոր կը մասնակցին արեւմտահայերը, և ան վերջ կ'ուտայ նախկին խորհրդարանին, որ պարզապէս նշանակովի կարելի էր անուանել»[37]:

1919 թ. հուլիսի 31-ին Կ.Պոլսի «Վերջին ժամը» ներկայացնում էր Հայաստանի Հանրապետության խորհրդարանական ընտրությունների վերջնական արդյունքները[38]: Դրանց համաձայն՝ քվեարկությանը մասնակցելու իրավունք

[32] Ճակատամարտ 1919, № 210:
[33] Ճակատամարտ 1919, № 210:
[34] Ճակատամարտ 1919, № 210:
[35] Ճակատամարտ 1919, № 210:
[36] Ճակատամարտ 1919, № 210:
[37] Ճակատամարտ 1919, № 210:
[38] Ճակատամարտ 1919, № 220 (Հայաստանի երեսփոխանական ընտրութիւններուն վերջնական արդյունքը):

ունեին 365.780 հոգի[39] (ինչպես վկայում էր Սիմոն Վրացյանը, այդ թիվը գոյացել էր առանց Կարսի և Շարուր-Նախիջևանի քվեարկության իրավունք ունեցող անձանց նկատի ունենալու)[40], որոնցից ընտրությանը մասնակցել էին 258.880-ը[41]: ՀՅԴ-ն ստացել էր 230.272 քվե կամ 72 աթոռ խորհրդարանում, ընդ որում, ՀՅԴ ցուցակով Ազգային ժողով էին անցել[42] նաև արևմտահայ 13 անվանի գործիչներ, 3 կին և ազգությամբ եզդի 1 պատգամավորներ[43]: Էսէռները (Ընկերվարական հեղափոխականներ) շահել էին 4, թաթարները՝ 2, անկուսակցականները՝ 1 աթոռ[44]:

Հայաստանի Հանրապետության 1-ին ընտրովի խորհրդարանի բացումը տեղի է ունեցել 1919 թ. օգոստոսի 1-ին[45]: Այդ հիշարժան իրադարձությանն անդրադարձել էր նաև «Ճակատամարտը» օգոստոսի 19-ին և 20-ին լույս տեսած համարների 1-ին էջերում՝ արտատպելով Երևանում հրատարակված «Նոր աշխատավոր» պարբերականից վերցրած լուրերը[46]: Ըստ այդ հրապարակումների՝ խորհրդարանը բացվել էր խորհրդանշական օր. 1 տարի առաջ այդ օրն էր իր աշխատանքն սկսել Հայաստանի Խորհուրդը[47]: Արդեն 1919 թ. օգոստոսի 1-ին այն առանձնահատուկ կենդանություն էր կարծես ստացել. «Մինչեւ նիստը հասարակութիւնը լեցուեր էր նրբանցքները և անհամբեր կը սպասէր սրահին բացուելուն»[48]: Նիստն սկսվել էր 2 ժամ ուշացումով, քանի որ պատգամավորներից մի քանիսը հարևան երկրներից երկաթուղով էին եկել և ուշացել էին. «Ժամը 12ին մօտ է: Պատգամաւորները բռներ են իրենց տեղե-

---

[39] Ճակատամարտ 1919, № 220 Երբեմն «Ճակատամարտ» պարբերականում բերված թվային տվյալները որոշակիորեն չեն համապատասխանում այսօր մեր ձեռքի տակ եղած արդեն ճշգրտված վերջնական արդյունքներին: Դա պայմանավորված էր հիմնականում այն օրերի փոթորկուն քաղաքական իրավիճակով և մի շարք այլ հանգամանքներով: Օրինակ՝ ներկայումս հստակ է, որ 1919 թ. խորհրդարանական ընտրացուցակներում ընդգրկված է եղել 380.000 ընտրող (տե՛ս Հայոց պատմություն 2010, 31):

[40] **Վրացյան** 1993, 292:

[41] Ճակատամարտ 1919, № 220 (Հայաստանի երեսփոխանական ընտրութիւններուն վերջնական արդյունքը):

[42] **Քալաշյան** 213:

[43] Ճակատամարտ 1919, № 220 (Հայաստանի երեսփոխանական ընտրութիւններուն վերջնական արդյունքը):

[44] Ճակատամարտ 1919, № 220:

[45] **Հակոբյան** 2018, 62:

[46] Ճակատամարտ 1919, № 236 (Հայաստանի Խորհրդարանին բացումը):

[47] Ճակատամարտ 1919, № 236:

[48] Ճակատամարտ 1919, № 236:

րը…Շուտով ներս կը մտնեն ուշացած պատգամաւորները, որ նոր հասեր են կառախումբով Պագուէն, Ռոստովէն, Թիֆլիսէն»[49]: Ներկա էին բոլոր նախարարներն իրենց օգնականների հետ, կաթողիկոսի ներկայացուցիչը՝ Խորեն եպիսկոպոսը, դիվանագիտական ներկայացչությունների անդամները՝ բացի Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչներից, որոնք բացակայում էին հարգելի պատճառներով[50]: Թերթը գրում էր, որ հանդիսավոր նիստը բացվել էր Խորհրդարանի ժամանակավոր նախագահ Ավետիք Սահակյանի ճառով, որում, անդրադառնալով նախորդ մեկ տարում Հայաստանի Խորհրդի կատարած աշխատանքներին, նա ներկայացրել էր առաջիկա անելիքները, ներքին և արտաքին մարտահրավերները՝ «հրաւիրելով բոլորը, որ աչալուրջ, ամբողջ ոյժով ընդառաջ երթան՝ օգնելու կառավարութեանը մեր մանուկ Հանրապետութեան ազատութիւնը ապահովելու համար»[51]:

Ա. Սահակյանը ողջույնի խոսքով դիմել էր թե՛ Հայաստանի բարեկամ պետությունների ներկայացուցիչներին, թե՛ հայոց զորքին: Վերջինի դեպքում խորհրդարանի դահլիճը դղրդացել էր ծափերի տարափից. «Խորհրդարանի անդամները, վեր կենալով իրենց տեղերէն, խանդավառ ցոյցեր կ'ընեն զինուորական նախարար Արարատեանին և մեր հերոս, քաջարի Դրօին»[52]:

«Ճակատամարտը» տեղեկացնում էր, որ խորհրդարանի 1-ին օրվա օրակարգում եղել էր միայն 1 հարց՝ տեղեկագրերը քննող հանձնախմբի ընտրությունը, ինչը բարեհաջող իրագործվել էր[53]:

1919 թ. օգոստոսի 20-ին Հայաստանի հեռագրական գործակալության ուղարկած հեռագիրը տպագրելով 1-ին էջում՝ պարբերականը մանրամասներ էր հաղորդել նորընտիր խորհրդարանի անդրանիկ նիստի ու մասնավորապես Ա. Սահակյանի ճառի բովանդակության և շոշափած հարցերի վերաբերյալ[54]: Նիստին ներկա էին 56 պատգամավոր, զբաղեցված էին հասարակության համար նախատեսված բոլոր տեղերը[55]: Կարևորելով այս հեռագրի պատմական արժեքը՝ ստորև որոշակի կրճատումներով նեկայացնում ենք այն գրեթե ամբողջությամբ:

---

[49] Ճակատամարտ 1919, № 236:

[50] Ճակատամարտ 1919, № 236:

[51] Ճակատամարտ 1919, № 236:

[52] Ճակատամարտ 1919, № 236:

[53] Ճակատամարտ 1919, № 236:

[54] Ճակատամարտ 1919, № 237 (Հայաստանի Խորհրդարանին բացումը):

[55] Ճակատամարտ 1919, № 237:

«Քաղաքացինե՛ր, միացեալ Հայաստանի ներկայացուցիչներ, ուղիղ մի տարի սրանից առաջ՝ օգոստ. 1ին մեր երկիրը շրջապատուած էր տաճկական զօրքերի երկաթէ օղակով, թշնամու սուրը կախուած էր մեր գլխին, մեր հայրենիքը դարձել էր բանտ: Ես, որպէս նախագահ Գերագոյն Ազգային խորհուրդի, 1-ին նիստին անխախտ հաւատով և խորը համոզմունքով յայտարարեցի, որ մեր հանրապետութեան նեղ հորիզօնը, որի սահմանները խեղդում են նրան, պէտք է ընդարձակուի, մեր հերոս ու մարտիրոս ժողովուրդը պէտք է լինի տէրը իր փայփայած ու գուրգուրած հայրենիքին: Այսօր ես երջանիկ եմ վկայելու, որ իմ գուշակութիւնը ոչ միայն արդէն կատարուած փաստ և իրականութիւն է դարձել, այլ և մեր ժողովուրդի կամքը սրբազան, Հայութեան երկու կէսերը գրկաբաց միացել են և յայտարարել մի պետութիւն՝ Միացեալ, Անկախ եւ Ազատ Հայաստան, որի պաշտպանութեան համար մենք երդուել ենք զոհել մեր կեանքը եւ կռուել մինչեւ վերջին շունչը: Մենք հպարտանում ենք մեր նորածին պետութեամբ: Նա թոյլ է, հեռու է կատարեալ լինելուց, բայց…ժողովուրդը սիրում է իր երիտասարդ հանրապետութիւնը: Նա իւրացրել է պետականութեան գաղափարը… Մեր հանրապետութեան ներկայ դրութիւնը ստեղծած է հսկայական խնդիրներ, որոնց լուծման համար մենք պէտք է լարենք մեր ուժերը և ամբողջութեամբ նուիրուինք պետութեան պատասխանատու պարտականութիւններուն:

Կեցցէ՛ Հայաստանի առաջին ընտրուած պարլամենտը»[56]:

Խորհրդարանի աշխատանքների լուսաբանման առանձնահատկությունները «Ճակատամարտ» օրաթերթում

«Ճակատամարտի» հրապարակումների հիման վրա այսօր հնարավոր է ամփոփ պատկերացում ունենալ Հայաստանի Առաջին Հանրապետության Խորհրդարանի և կառավարության կազմավորման ու գործունեության հիմնական ուղղությունների մասին: Օրինակ՝ Երևանից ստացված հեռագիրը տեղեկացնում էր, թե Խորհրդարանի՝ օգոստոսի 5-ի նիստին ներկա 40 պատգամավորն ինչպե՛ս էին ընտրել օրենսդիր մարմնի դիվանը[57]: «37 ձայնով ընդդէմ 3ի՝ ընտրուեցան նախագահ Ահարոնեան, փոխնախագահներ՝ Լեւոն Շանթ 39 ձայնով ընդդէմ 1ի, Սարգիս Արարատեան՝ 36 ձայնով ընդդէմ 4ի, գլխաւոր քարտուղար՝ Յակոբ Տէր-Յակոբեան՝ 36 ձայնով ընդդէմ 3ի, քարտու-

[56] Ճակատամարտ 1919, № 237:

[57] Ճակատամարտ 1919, № 238 (Հայաստանի Խորհրդարանին դիվանին ընտրութիւնը):

դարի օգնական Արամ Սաֆրաստեան՝ 34 ձայնով ընդդէմ 6ի: Սարգիս Արարատեան կը ստանձնէ նախագահութիւնը»[58],- կարդում ենք այդ հեռագրում: Արդեն օգոստոսի 7-ի նիստում 40 կողմ, 8 դեմ ձայնով Խորհրդարանը երկրի վարչապետ էր ընտրել Ալեքսանդր Խատիսյանին[59]: Նա իր հերթին օրենսդիրներին ներկայացրել էր կառավարության նոր կազմը: Վարչապետն ու արտաքին գործերի նախարարն էր Ալեքսանդր Խատիսյանը, ներքին և դատական գործերի նախարարը՝ Աբրահամ Գյուլխանդանյանը, ելևմտական և պարենավորման նախարարը՝ Սարգիս Արարատյանը, աշխատանքի և խնամատարության նախարարը՝ Ավետիք Սահակյանը, կրթության նախարարը՝ Նիկոլ Աղբալյանը, պատերազմական նախարարը՝ զորավար Քրիստափոր Արարատյանը: Ազգային ժողովն այդ օրվա նիստում հաստատել էր կառավարության ա՛յս կազմը, ինչից հետո վարչապետը կարդացել էր նորընտիր գործադիր մարմնի հայտարարությունը՝ պատգամավորներին ներկայացնելով Հայաստանի առջև ծառացած հիմնախնդիրները, կառավարության ներքին ու արտաքին քաղաքականության ուղենիշները[60]:

Նորակազմ խորհրդարանը հիշատակագիր էր ուղղել Առաջին աշխարհամարտում ընդգրկված մեծ և փոքր բոլոր պետությունների, նաև՝ Պարսկաստանի իշխանություններին, իսկ «Ճակատամարտը» տպագրել էր այդ նամակ-կոչը օգոստոսի 27-ի համարում[61]: Այդ հիշատակագրում փաստվում էր, որ պատերազմը թեև ավարտվել էր դաշնակիցների հաղթանակով, սակայն հայ ժողովուրդը դեռևս պատերազմում էր Թուրքիայի հետ՝ «ձգուած» լինելով բախտի քմահաճույքին ու թափելով արյունը «իր հին դահիճներու ձեռքովը»[62]:

Հայ ժողովուրդը, արձագանքելով դաշնակից պետությունների կոչին, 5 տարի շարունակ մասնակցել էր ռազմական գործողություններին՝ ընդդեմ օսմանյան պետության և բանակի: Այդ ընթացքում Հայաստանը գրեթե ամբողջապես քարուքանդ էր եղել, հայ ժողովրդի ավելի քան կեսը կորսվել էր: «Հիւծուած գաղթականներու և մանկահասակ որբերու այդ երկիրը և ոչ մէկ ատեն բաժնուեցաւ զէնքէն այն յոյսով, թէ ուշ կամ կանուխ արդարութիւնը պիտի յաղթանակէ, դաշնակիցներու օգնութեամբ հայ ժողովուրդի մնացած մասը պիտի ապրի երջանիկ կեանքով՝ իր ազատագրուած հայրենիքին մէջ»,- կարդում ենք

[58] Ճակատամարտ 1919, № 238

[59] Ճակատամարտ 1919, № 243 (Հայաստանի նոր դահլիճը):

[60] Ճակատամարտ 1919, № 243:

[61] Ճակատամարտ 1919, № 243 (Հայաստանի Խորհրդարանին հիշատակագիրը):

[62] Ճակատամարտ 1919, № 243:

հիշատակագրում: Ասվում էր նաև, որ սկզբնապես արևմտահայերին թվում էր, թե օրերի կամ մի քանի շաբաթվա հարց էր դարձել իրենց ազատագրումը թուրքերի լծից, այնինչ Մուդրոսի զինադադարից անցել էր 9 ամիս, բայց այդ ուղղությամբ ոչինչ չէր արվել: Ընդհակառակը, «այդ երկար ժամանակի ընթացքին իրավազուրկ և թափառական թրքահայութիւնը, հաւաքուելով նախկին Տաճկահայաստանի սահմանի վրայ, հարիւրներով և հազարներով կը կոտորուին սովէն ու հիւանդութիւններէ, չհամարձակելով անցնիլ իր Մայր հայրենիքի սեմը»[63]:

Հիշատակագիրը պարզում էր ևս մեկ իրողություն, այն, որ Թուրքիան, ոգևորվելով դաշնակից պետությունների ներողամիտ վերաբերմունքից, սեփական գործակալների օգնությամբ գրգռում էր տեղի մահմեդականներին Հայաստանի կառավարության դեմ, և՝ ոչ միայն դա: Թուրքիան իր զինվորներին տեղավորել էր Հայաստանի սահմաններում ձևավորված թաթարական ու քրդական հրոսակախմբերի կազմում, իսկ թուրք սպաները գլխավորում էին դրանք՝ քանդելով և ավերելով Շարուրի, Նախիջևանի, Սուրմալուի, Երևանի, Կարսի գավառների հայկական գյուղերն ու ավանները, գնդակահարելով հայ ժողովրդի մնացորդներին:

Այս ամենի մեջ թողտվության մեծ բաժին ունեին Դաշնակից պետությունները, որոնց ներկայացուցիչները գտնվում էին Հայաստանում և լուռ հետևում էին կատարվող իրադարձություններին[64]: Իհարկե, հայ ժողովուրդը գնահատում էր Դաշնակիցների ցուցաբերած նյութական ու բարոյական օգնությունը, սակայն գիտակցում էր, որ դա չէր համապատասխանում հանուն ընդհանուր գործի հայության տված անլուր զոհերին ու զոհողություններին: Բացի այդ՝ Դաշնակիցները չէին աջակցում հայ ժողովրդի պաշտպանության գործին. «Այդ բոլորի հետեւանքով այժմ կանգնած ենք մենակ՝ մեր դարաւոր դահիճի դէմ՝ առանց դաշնակից զօրքերու, առանց բաւարար ռազմանիւթի ու ռազմիկ ուժի»[65]:

Հայաստանի Խորհրդարանի հիշատակագիրն ազդարարում էր, որ հանգամանքների ստիպմամբ և պարտադրմամբ՝ միայնակ էր պայքարելու և անհավասար պատերազմի մեջ էր մտնելու թուրքերի դեմ, քանի որ հայության ֆիզիկական գոյությունը պահպանելու ուրիշ ճանապարհ չկար:

---

[63] Ճակատամարտ 1919, № 243:

[64] Ճակատամարտ 1919, № 243:

[65] Ճակատամարտ 1919, № 243:

Վերոհիշյալ հիշատակագրին նման էր օրենսդիր մարմնի կողմից պատրաստված այն դիմում-հայտարարության տեքստը, որն ուղարկվելու էր Հայաստանի դաշնակից պետությունների խորհրդարաններին: Այդ դիմումը պատգամավորներին էր ներկայացրել դաշնակցական երեսփոխան Արշակ Ջամալյանը 1919 թ. օգոստոսի 16-ին տեղի ունեցած թվով 5-րդ նիստում: «Ճակատամարտը» տպագրել էր այդ նիստի մասին Երևանից ստացած Հայկական հեռագրական գործակալության պատրաստած լուրը[66]: Պատգամավորը գործընկերներին և ողջ հայությանն առաջարկում էր մի կողմ թողնել տարաձայնությունները և միավորել ուժերը՝ դիմադրել կարողանալու համար «անգութ» թշնամուն, անհրաժեշտության դեպքում էլ՝ «մեռնիլ պատուաւոր մահով»[67]:

Այս երկու փաստաթուղթը, մի կողմից, արտահայտում էին Հայաստանի Հանրապետության պետական այրերի ազնվությունն ու անկեղծությունը, մյուս կողմից, բացահայտում էին դիվանագիտական ասպարեզում նրանց անփորձությունը, այսինքն՝ այն, որ պետական գաղտնիքի մասին (երկրի անելանելի վիճակի մասին էր խոսքը – ***Մ.Հ.***) ի լուր աշխարհի էին հայտարարում՝ բացեիբաց նաև թշնամուն պատկերացում տալով իրենց պետության խոցելի տեղերի ու հանգամանքների մասին: Այս ամենը հետագայում իրենց հերթին նպաստեցին մեր անկախության կորստին՝ գումարվելով հայերի համար տարածաշրջանային անբարենպաստ աշխարհաքաղաքական իրողություններին:

Այնուհանդերձ, հիշյալ փաստաթղթերում առկա փաստերը բխում էին Հայաստանի սոցիալ-քաղաքական օբյեկտիվ ու իրական իրավիճակից և պայմաններից: Դրանք այնքան սուր ու ծայրահեղ էին, որ նորանկախ հանրապետության պաշտոնյաները, կարծես դժվարանալով կրել այդ բեռն ու պատասխանատվությունը, փորձում էին երբեմնի դաշնակից երկրների աջակցությունը գտնել, թեև հոգու խորքում հասկանում էին, հավանաբար, որ նրանք ժլատ խոստումներով էին միայն դաշնակից Հայաստանին:

Տեղին է մեջբերել Հայաստանի Հանրապետությունում ամերիկյան դիվանագիտական ներկայացուցիչ Վիլյամ Հասքելի խոսքերը՝ ասված 1919 թ. օգոստոսի 22-ին խորհրդարանում՝ նրա ընդունելության ժամանակ[68]: Այն հարցին,

---

[66] Ճակատամարտ 1919, № 251 (Հայաստանի խորհրդարանին դիմումը դաշնակից խորհրդարաններուն):

[67] Ճակատամարտ 1919, № 251:

[68] Ճակատամարտ 1919, № 250 (Հայաստանի վերին քոմիսերը Երևանի մեջ. իր ճառը Հայաստանի Խորհրդարանին առջև):

թե դաշնակիցներից ի՞նչ օգնություն էր ակնկալում «բազմաչարչար հայ ժողովուրդը, որ այնչափ տանջանքներ էր կրեր», նա պատասխանում էր օդից վերցրած հետևյալ խոստումներով. «Կասկած չկայ, որ ան զինուորական օգնութիւն կը ստանայ ոչ թէ անոր համար, որ գործէ Վրաստանի կամ Ատրպէճանի դէմ, այլ պաշտպանելու համար Հայաստանի սահմանները: Այդ ջանքերով կ'ապահովուի յամենայն դէպս Հայաստանի ժամանակաւորապէս որոշուած սահմանները»[69]:

Անդրադառնալով այն խնդրին, որ իրականում կարգադրություն էր եղել բրիտանական զորքերն Անդրկովկասից հանելու համար, Վիլյամ Հասքելը կրկին կեղծ խոստում էր տալիս. «Եթէ նոյնիսկ բրիտանական զօրքերը թողուն Անդրկովկասը, մենք կը գտնենք բաւական հզօր բանակ մը՝ փոխարինելու զանոնք»[70]: Գնդապետ Հասքելը նաև խոստանում էր պատասխանատվության կանչել Հաշտության համաձայնագրով որոշված Հայաստանի սահմանները խախտած Ադրբեջանին, թեև լավ էր հասկանում, որ դա անհնար էր տիրող աշխարհաքաղաքական հանգամանքներում. «Այս երեւոյթը կը պարտաւորէ զիս անմիջապէս երթալ Թիֆլիս, յետոյ՝ Պաքու՝ նախազգուշացնելու համար Ատրպէճանը, որ եթէ ան միջոցներու չի դիմէ արդէն կատարուած փաստերու դէմ և չի դադրեցնէ պատերազմական գործողութիւնները, ոչ միայն լուրջ հետեւանքներ կ'ունենայ Ատրպէճանի համար, այլև անձնական պատասխանատուութեան կ'ենթարկուին Ատրպէճանի կառավարութեան անդամները…Ես անձամբ կ'երթամ Փարիզ՝ պահանջելու Համաժողովէն, որ Հայաստանին ցոյց տրուի անմիջապէս օգնութիւն, եւ այս պարագային իմ տրամադրութեան տակ կ'ըլլայ ամենաարագագնաց շոգենաւը Սեւ ծովի վրայ»[71]:

Գնդապետ Հասքելն այս անիրականանալի խոստումներով էր հանդես եկել՝ նաև ինչ-որ տեղ տուրք տալով դաշնակից պետությունների բարի կամքի հանդեպ ունեցած հայերի ներքին հավատին: Որպես ասվածի ապացույց, վկայակոչենք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Ավետիս Ահարոնյանի ելույթից հետևյալ հատվածը. «Ամբողջ 5 տարուան ընթացքին մենք միասին ենք Համաձայնութեան պետութիւններու հետ: 5 տարի շարունակ թափեցինք մեր արիւնը՝ օգնելով, որպէս Արեւելքի փոքր և կրտսեր դաշնակից, անոնց յաղթանակին: Այսօր չի կրնար պատահիլ, որ մեր աւագ և հզօր ասպետ դաշնակիցները մատնէին մեզ թշնամու խստասրտութեան:

[69] Ճակատամարտ 1919, № 250:

[70] Ճակատամարտ 1919, № 250:

[71] Ճակատամարտ 1919, № 250:

Դաշնակիցներու յաղթանակը արթնցուց մեր սրտերու մէջ սրբազան թրթիռ, ուրախութեան և ցնծութեան յուզումներ: Հայաստանը, որ սուգի մէջ կը գտնուէր, միշտ հաւատացած է եղեր, որ դաշնակիցները վերջ պիտի դնեն անոր անսահման տանջանքներուն, որ ան պիտի վերածնէր որպէս անկախ պետութիւն: Մենք արժանի ենք ստանալու մեր դաշնակիցներէն ոչ միայն անկիւն մը արեւի տակ, այլեւ մեր իրաւունքներու վերականգնումը մեր հայրենիքի նկատմամբ, որտեղ իւրաքանչիւր քար ներկեր ենք մեր արիւնով յանուն ազատութեան և անկախ քաղաքական գոյութեան»[72]:

Դիվանագիտական ասպարեզում նոր-նոր քայլել սովորող Հայաստանի Հանրապետության խորհրդարանի ղեկավար կազմը և պատգամավորներն ակտիվորեն ձեռնամուխ էին եղել երկրի կյանքը կարգավորող օրենսդրական բացը լրացնելու գործին: Մասնավորապես 1919 թ. քննարկված օրինագծերից կարելի է հիշատակել զորակոչին և ռազմական ոլորտին, ինչպես նաև բյուջեի, արտաքին փոխառությանը, երկաթուղային սակագներին, կրթական ու դատական բնագավառների կարգավորմանը վերաբերող օրենքները, որոնք այն օրերին ունեին հասարակական հնչեղություն:

«Հայաստանի խորհրդարանին նիստերը» խորագրի ներքո «Ճակատամարտ» թերթում գրեթե մշտապես ներկայացվում էին արված աշխատանքը, օրենքների քննարկումները, կառավարության հետ բանավեճերը՝ հարց ու պատասխանի ձևով: Բացի այս՝ խորհրդարանում բավական հաճախ հնչում էին պարզաբանումներ հատկապես Հայաստանին սպառնացող պատերազմական վտանգների, արդեն սկսված ռազմական գործողությունների, ռազմաճակատում տիրող իրավիճակի, երկրի սոցիալ-տնտեսական խնդիրների ու դրանց լուծման ուղիների վերաբերյալ: Օրենսդիր մարմինը, այս ամենին զուգահեռ, հարևան երկրների հետ հարաբերությունների կարգավորման նպատակով, պատվիրակությունների կամ անհատ պատգամաբերների հետ հանդիպումներ էր կազմակերպում, որոնց ընթացքում մասնակիցները փորձում էին երկխոսության և հիմնահարցերի բարձրաձայնման միջոցով հասնել առաջացած վիճահարույց իրավիճակների հարթեցմանը ու փոխհարաբերությունների բարելավմանը:

Պարբերականի հրապարակումները մեզ բերում են այն եզրակացության, որ արդեն 1919 թ. վերջին Հայաստանի Հանրապետության օրենսդիր և գործադիր մարմինները բավականաչափ փորձ էին ձեռք բերել արտաքին ու ներ-

---

[72] Ճակատամարտ 1919, № 251 (Գնդապետ Հասքէլ Հայաստանի Խորհրդարանին մէջ):

քին հարաբերություններում ծագող խնդրահարույց հարցերին ընդառաջելու առումով: Եթե աշխարհաքաղաքական հանգամանքները, մասնավորապես Վլադիմիր Լենինի և Մուստաֆա Քեմալի փոխհամագործակցությունը, մեկուկես տարվա ընթացքում չփոխվեին ի վնաս մեր երկրի, Հայաստանի վարիչները կարող էին բավականաչափ հաջողություններ գրանցել ոչ քիչ ոլորտներում: Բերենք օրինակ: Հայկական կողմի բանակցային և ռազմական ունակությունների շնորհիվ 1919 թ. նոյեմբերի կեսին գրեթե հարթվել էր հայ-վրացական պատերազմը: «Ճակատամարտը», կրկին տպագրելով Երևանից ստացած հեռագրային լուրեր, հայտնում էր մանրամասներ Հայաստանի խորհրդարանում հաստատված Հայ-վրացական հաշտության դաշնագրի մասին: «Հայաստանի խորհրդարանը միաձայնութեամբ հաստատեց ակտ մը, որ կովկասեան մանուկ հանրապետութիւններու փոխյարաբերութեանց մէջ նոր ու ցանկալի շրջան մը կը բանայ. դա Հայաստանի և Վրաստանի միջեւ կնքուած թրանզիթի և իրաւարարութեան վերաբերեալ դաշնագրի վերաբացումն էր, զոր Հայաստանի խորհրդարանը երկարատեւ քննութենէ յետոյ միաձայն ընդունեց»[73],- գրված էր հեռագրում: Խորհրդարանական ելույթների ժամին պատգամավորներից շատերը շեշտում էին այն միտքը, որ, թեև Հայաստանն ու Վրաստանն ունեին դեռևս չլուծված սահմանային հարցեր, բայց դրանք կարող էին լուծվել բանակցային տարբերակով՝ առանց միմյանց հետ պատերազմելու[74]: Խորհրդարանի հիշյալ նիստում վարչապետ Ա. Խատիսյանը վստահեցնում էր, որ Հայաստանը բանակցությունների միջոցով ոչ միայն Վրաստանի, այլև Ադրբեջանի հետ էր պատրաստ քննարկել ու հանգել ընդհանուր հայտարարի՝ առկա սահմանային և այլ կարգի վեճերը լուծելու համար[75]: Ինչպես տեսնում ենք, դիվանագիտական ոլորտում շոշափելի առաջընթացը նկատելի էր, ինչը, սակայն, հետագայում, օբյեկտիվ պատճառներով զարգացում չապրեց:

Եզրակացություններ

«Ճակատամարտը», լուսաբանելով և վերլուծելով խորհրդարանի աշխատանքները, դրանք երբեք չէր համարել անբավարար ու թերի: Թերթի հրապարակումները վկայում էին պատգամավորների բավական ակտիվ և արդյունավետ գործունեության մասին, ինչը միտված էր նորակազմ հանրապետութ-

---

[73] Ճակատամարտ 1919, № 318 (Հայ և վրացական դաշնագիրը Հայաստանի Խորհրդարանին մէջ):

[74] Ճակատամարտ 1919, № 318:

[75] Ճակատամարտ 1919, № 318:

յան կյանքը իրավական հիմքերի վրա դնելու, օրինականության ապահովման, ժողովրդավարական երկիր կառուցելու նպատակին, երկիր, որտեղ ոչ միայն իշխելու էր իրավահավասարությունը, այլև օրենքով պաշտպանված էին լինելու բոլոր քաղաքացիների իրավունքները՝ անկախ նրանց ազգային, սեռային ու կրոնական պատկանելությունից:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Կարապետյան Մ.Ս. 2003, Հայաստանը 1912–1920 թվականներին, ուսումնական ձեռնարկ, Երևան, «Զանգակ-97», 400 էջ:

Հակոբյան Ա.Մ. 2018, Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ., անկախության 100-ամյակի առթիվ, Երևան, «Լուսակն», 152 էջ:

Հայոց պատմություն 2010, h. 4, գիրք 1, նորագույն ժամանակաշրջան (1918–1945 թթ.), Երևան, «Զանգակ-97», 800 էջ + 24 էջ ներդիր:

Ճակատամարտ, Կ. Պոլիս, 1918, № 37, 1919, № 134, № 166, № 170, № 171, № 177, № 193, № 210, № 220, № 236, № 237, № 238, № 243, № 250, № 251, № 318:

Վրացյան Ս. 1993, Հայաստանի Հանրապետություն, խմբ.՝ Ա.Մ. Հայրապետյան, Երևան, «Հայաստան», 704 էջ:

Քալաշյան Ա. «Հայաստանի 1-ին հանրապետության լեգիտիմ խորհրդարանը և նրա առանձնահատկությունները» (kantegh.asj-oa.am/677/1/, 210–221 էջ):

ОСВЕЩЕНИЕ ДЕЯТЕЛЬНОСТИ ПАРЛАМЕНТА ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В КОНСТАНТИНОПОЛЬСКОЙ ГАЗЕТЕ «ЧАКАТАМАРТ» В 1918–1919 ГГ.

ОВСЕПЯН М.

Резюме

Ключевые слова: *Первая Республика Армения, парламент, законы, решения, депутаты, законность, равноправие.*

Издававшаяся в 1918–1919 годах в Константинополе ежедневная газета «Чакатамарт» освещала работу парламента Первой Республики Армения. Публикации газеты свидетельствуют о том, что деятельность законодательного органа страны была направлена на становление государства, охрану рубежей страны, установление дипломатических отношений с иностранными государствами, решение Армянского вопроса. Под рубрикой

«В парламенте Армении» почти в каждом номере издания публиковались новости, репортажи и аналитические статьи, информирующие о широкой многовекторной деятельности парламента.

THE ACTIVITIES OF THE PARLIAMENT OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA IN CONSTANTINOPLE'S DAILY NEWSPAPER "CHAKATAMART" (1918–1919)

HOVSEPYAN M.

Summary

Key words: *the First Republic of Armenia, Parliament, laws, decisions, MPs, legality, equality.*

In 1918–1919 the "Chakatamart" daily newspaper covered the activities of the Parliament of the First Republic of Armenia. The approaches of the publication were impartial, analytical articles were objective, and the proposals were constructive. The publications of the daily newspaper show that the Legislative body of the country did everything possible in the areas of state building, protection of the borders of the country, establishment of diplomatic relations with foreign countries, solution of the Armenian Question. Under the heading "In the Parliament of Armenia" news, reports and analytical articles were published in almost every edition of the daily newspaper, allowing to get an idea about the formation of the Legislative body of the country, current activities of the Parliament, decisions, meetings and hearings.

ՈՒՐԱՐՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
URARTOLOGY

ALBERT MUSHEGHYAN*
Doctor of Philology
Institute of Literature after M. Abeghyan
albert.musheghyan@yandex.com

THE KING OF URARTU RUSA HAY OR ARMEN'S SON

Key words: *Aram, Van kings, Urartu, Rusa the son of Erimena, Armen's son, Armenian, Rusa's mystery.*

Introduction

The sixth Patriarch of the Armenian dynasty Aram, whom Movses Khorenatsi introduced as the legendary Assyrian king Ninos' senior contemporary[1] exactly corresponds to the Urartian king Arame or Aramu who was mentioned in the Assyrian records of the first half of the 9th century BC. According to the Armenian history, he reigned in the Armenian Highlands in 888–845, while according to N. Adonts, from 880 to 843–840[2].

He was succeeded by the founder of the Van dynasty Sarduri I (or Serduri) (845–825)[3]. Eleven kings of the Van dynasty from father to son reigned up until 590 BC (or 585 BC) – Ishpuini (825–810), Menua (810–786), Argishti I (786–764), Sarduri II (764–735), Rusa I (735–713), Argishti II (713–685)[4], Rusa II (685–645), Sarduri III (645–635) whom the Assyrian king Asurbanipal (also spelled Assurbanipal or Ashshurbanipal) called Ishtarduri in his chronology. Asurbanipal

* *Հոդվածը ներկայացվել է 19.04.2019, գրախոսվել է 28.11.2019, ընդունվել է տպագրության 05.12.2019:*

[1] Մովսիսի Խորենացւոյ 1913, 43:

[2] **Ադոնց** 1972, 186, 195:

[3] Հայ ժողովրդի պատմություն 1971, 186, 195:

[4] According to N. Adonts, Argishti II's reign lasted 33 years from 713–680 **Ադոնց** 1972, 195.

reigned from 685 to 645 thus, he was the contemporary of Rusa II and his son[5]. Here the succession of the Urartian kings seems to be interrupted[6].

Diverse Views on Urartu's New King Erimena

In 1892 and 1894 the 7th and 9th issues[7] of the famous chronicle of Assyrian studies published the photos and inscriptions of eight bronze shields, sculptures and their fragments that had been discovered in Toprak-Kale (the north-eastern suburbs in the city of Van) by the prominent researcher, explorer and decoder of Urartian inscriptions Lehman-Haupt. It was then that the scientific circles learnt about the existence of a new king from the Van dynasty – Rusa Erimenahi (the son of Erimena).

At the end of the 19th century the French scientist Thureau-Dangin being specialized in Assyriology and the German expert in Urartian studies Lehman-Haupt considered the son of Erimena Rusa to be Rusa I and placed him after Sarduri II. The given opinion is absolutely groundless, for the High Priest of Musasir Urzana supported the ascension of Rusa I – the contemporary of Sargon II to "his predecessors' native throne" in 735 (КУКН N387 line 11). It is obvious that the throne of Urartu belonged to the predecessors of Rusa I but not to Rusa whose father Erimena's ascension to the throne still remains a mystery.

Ascending to the throne with the blessing of the High Priest, Rusa I following his predecessors' example proceeded with the practice of supplying the sanctuary of Urartian Ardini, called Musasir by the Assyrians, with golden gifts and treasures. According to the inscription, in exchange for such cordiality and wealth Urzana gave his war-chariots to Rusa I, which the latter used in his invasions of the Assyrian mountains and the massacre. Learning all about those events, the Assyrian king Sargon II (722–705) in his inscription called Urzana "a perfidious malefactor who broke the vow made to the gods of Asur Shamash, Nebo and Marduk."[8] Moreover, in 714 attacking Musasir Sargon II robbed all the treasures and golden sets of Urzana's temple. Hearing about that Rusa I committed suicide

[5] **Арутюнян** 2001, 489; **Арутюнян** 1970, 331.

[6] Later on a bronze shield and a cylindrical seal were discovered in Karmir Blur. On the inscription of the bronze shield and on the stamp of the cylindrical seal Sarduri, the son of king Sarduri was discovered, based on which after Sarduri III Sarduri IV was added (620). See **Арутюнян** 1970, 331.

[7] Zeitschrift für Assyriologie und verwandte Gebiete 1892, IX, 1894.

[8] Armenien einst und jetzt 1926, 310.

with the dagger hanging from his belt. While the treasure thief Sargon falsely attributed glory to himself, as if Rus abandonded his war chariot, rode his mare and fled, leading his army[9].

It is not clear whether the tragic fate of Rusa I or some other factor led Lehman-Haupt to give up the idea of identifying Rusa III with the latter presumably declaring Erimena as the king of Urartu and ascribing the period from 625 to 605 to the years of his reign while his son Rusa supposedly reigned from 605 to the fall of Urartu in 585[10].

Later on N. Adonts drew the following conclusion about the period of Erimena's reign, "We don't know for sure whether Erimena was the father of Rusa III the king or not. The Assyrians did not know Menua and the last Rusa merely because Menua was a very successful adversary (I would also add the feature of his valiance – ***A.M.***), and the arrogant rulers of Assyria were reluctant to make any reference to him, while Rusa III reigned in the era when the state of Asur had already turned into ruins. As far as the rest is concerned, both the lists verify the same information."[11]

It is not accidental that the inscriptions of Asur, dating back to the fall of Urartu do not mention any more or less significant episode that involved Rusa III. Even in the "Babylonian Chronicle" published by the British Museum curator Gadd the Babylonian ruler Nabopalassar does not mention any name of a Urartian king when describing how crossing the Izala mountains he reached the city situated in the region of Urashtu (he refers to the conquest of the capital Tushpa). Despite this fact, Urartu was considered to be the ally of Assyria. The Urartian king is not mentioned among the Median-Babylonian joint supporting forces either.

Notwithstanding this, taking into account the existing carved inscriptions about Rusa Erimenahi (Erimena's son) written in the Urartian language, the specialists of Urartu placed Rusa at the end of the list of the Urartian kings, regarding him as the eleventh ruler during the era of the Urartian downfall.

As for Erimena, contrary to Lehman-Haupt's view, N. Adonts does not ascribe any year of reign to Rusa's father Erimena, "If we put aside Erimena for the time being, until we gain some proof that he reigned or probably was identified with Sarduri, then we should regard Rusa Erimenahi as Sarduri's successor." Thus,

[9] **Ադոնց** 1972, 107:
[10] **Lehmann-Haupt** 1921, 28.
[11] **Ադոնց** 1972, 183–184:

Adonts concludes, "Sarduri ruled in 646-610, while Rusa reigned from 609 until the end of the Urartian Empire when in the turmoil of 585 events it was terminated."[12]

In 2002 the Italian Urartologist Mirjo Salvini surprisingly found a new ample inscription of Rusa Erimenahi placed in an old Armenian village Ermantz or Ermanis east of Van. The inscription in introduced with the previously existing bronze shields and other carved fragments that resemble stencil superscription, contains sixty-four lines on the two opposite sides of the cuneiform, except the last lines which despite being numbered are without text[13]. Four years later the exact duplicate of the inscription was found in the settlement of Savajk.

In 2004 Doctor of History Yervand Grekian firstly published the inscription discovered by Salvini where he introduced his observations[14]. Along with the latter in his article[15] "Karl Fridrich Lehman-Haupt and the List of the Urartian Kings" published in 2017 he introduced new observations on the issue of the three Rusas. Along with the author's own conclusion the article contains different hypotheses taken from the studies of foreign researchers.

It seems that the newly discovered, valuable and substantial inscription contrasted with the already known inscriptions was to bring to light new details on the origin of King Rusa Erimenahi. Nevertheless, I would like to state that the newly emerged interest in this issue and the proposed chronological solutions to the king Rusa Erimenahi are not sufficient. The specialists of Urartian studies vigorously undertook examining the hereditary legitimacy of the Urartian kings starting from the king Ishpuini up to Argishti II, meanwhile dwelling upon the question which Rusa built the small town of Rusakhina[16] or Keshish–gyol.

---

[12] **Ադոնց** 1972, 195:

[13] **Salvini** 2002.

[14] **Գրեկյան** 2004, 224–252:

[15] **Գրեկյան** 2017, 23–37:

[16] In articles by the specialists of the Urartian studies the Urartian toponyms Qilbanikai and Eidurukai are quite wrongly used, e. g. "the city of Qilbanikai", "the excavations of the city of Eidurukai", "the founder of the city of Qilbanikai", etc. Then in Salvini's work we come across a viewpoint according to which, "Among the cities founded by Rusa, the son of Argishti, Rusakhinili Qilbanikai should have been built earlier than Rusakhinili Eidurukai". The "kai" ending, attached to the Urartian toponyms signifies "in front of, opposite", indicating that a new city or fortress was built in front of the given location. Therefore, all these toponyms should be used without the ending "kai" i.e. Qilbani, Eiduru, etc. Furthermore, Qilbani is not a city but a country (KUR Qilbani), neither Eiduru is a city. It is a mountain (ŠADÛ

мудрое слово. Когда я писал эти строки, то невольно вспоминал самого Аветика Исаакяна, его беседы с гостями нашего дома во время вечерних застолий. Все восхищенно слушали Варпета – непревзойденного собеседника, интересного рассказчика, поведавшего присутствовавшим множество самобытных историй. Его гостей не покидало чувство, что они вступили в некий храм мудрости. А сколько осталось невысказанного... В настоящем сборнике наряду с афоризмами приводятся суждения поэта, несколько отличающиеся от жанрового определения афоризма, однако по своей философской направленности они соответствуют общему духу книги. Мы преследовали цель максимально приобщить читателя к микрокосму Исаакяна. Есть темы (в частности «Армянский вопрос»), которые нашли отражение не в афоризмах в их каноническом, «чистом» виде. И это тот самый случай, когда к афоризму примыкают реальные повествования, воспоминания и впечатления автора. Не случайно сам Исаакян намеревался на основе подобных записей создать «Белую книгу» армянского геноцида.

Я часто задумывался над тем, почему Исаакян никогда не издавал свои афоризмы. Будучи от природы человеком в высшей степени скромным, Исаакян, по-видимому, полагал, что произведения, относящиеся к определенным литературным жанрам, не следует издавать при жизни автора. Это письма, дневники, личные записи и, в том числе, афоризмы. Поэт словно не желал навязывать читателю свои суждения как непреложную истину. Скромность, взыскательность к себе – первый признак великого человека. В этом его главное отличие от кичливых и тщеславных борзописцев, которые публикуют многотомные повествования о собственной персоне, полные самовосхваления и пустозвонства.

До последнего времени подавляющая часть афоризмов Исаакяна оставалась в архиве поэта. Правда, на протяжении ряда лет исаакяноведы Арам Инджикян, Абас Исаакян, а также автор этих строк публиковали подборки афоризмов поэта на страницах периодических изданий, но в совокупности образцы этого уникального жанра до сих пор не издавались. Настало время открыть эту сокровищницу мысли для ее истинного адресата – армянского народа. Мы уверены, что афоризмы, точно так же, как и великая поэзия Варпета, станут неизменным спутником нашего народа.

Мысли Исаакяна, его суждения удивительным образом актуальны и сегодня. Громадный жизненный опыт сконцентрирован в этой книге – здесь находим всю палитру человеческих эмоций – ярость и восторг, сострадание и любовь, скорбь и утешение. Иначе говоря, книга афоризмов поэта заслуживает того, чтобы стать настольной книгой каждого армянина, ибо мысли его действительно крылаты, они проникают в души людей, неся с собой свет и правду.

*
*   *

Чтобы составить эту книгу, потребовались долгие годы непрерывного труда: необходимо было просмотреть и изучить литературный архив поэта, пролистать тысячи страниц текста, выуживая из него афоризмы, ибо они разбросаны по всем рукописям Исаакяна. Собрав воедино лаконичные высказывания поэта, мы сочли необходимым не слишком расчленять материал тематически, а напротив, сгруппировать его максимы, исходя из содержания и в соответствии с главными темами творчества поэта. В результате мы скомпоновали их по следующим тематическим разделам:

Армения и армянский народ
Армянский вопрос
Искусство и литература
Философские размышления
Исповедальные раздумья
Любовь и женщины

Значительная часть афоризмов Исаакяна имеет отношение к Армении и Армянскому вопросу. В них нашли отражение мысли Исаакяна в связи с решением Армянского вопроса в тот исторический период, когда история самым неблагоприятным образом распорядилась судьбой армян. Исаакян пытался осмыслить постигшую наш народ величайшую трагедию – геноцид 1915 года. Свои идеалы, помыслы и мечты поэт часто облекал в емкую форму афоризма, словно завещая народу свои заповеди и заветы.

Громадный жизненный опыт и обретенная с годами мудрость – всё это накапливалось в душе поэта и искало выхода. Характер высказываний поэта обусловлен логикой армянской истории, как естественной, так и на-

вязанной извне. Афоризмы о судьбе армянского народа являются отражением политических взглядов Исаакяна.

Когда знакомишься с архивом Исаакяна, его письмами, опубликованными в Каире после смерти поэта афоризмами и дневниками (1959), понимаешь, какая глубокая пропасть разделяла Исаакяна и советскую власть. Это неприятие нельзя было озвучить ни в художественном произведении, ни в публицистической статье: от бдительного взора цензуры ничто не могло ускользнуть. Поэтому многое писалось «для себя» и «в стол».

Не вдаваясь в подробности по теме «Исаакян и советская власть», отмечу лишь, что это были сложные отношения – и долгие годы внутреннего противостояния, и моменты, когда Исаакян разделял государственную политику: речь в первую очередь идет о периоде Великой Отечественной войны, когда армяне вместе с представителями других советских народов сражались с заклятым врагом, а также о годах беспрецедентного промышленного подъема Армении и общенародного строительства. Однако Исаакян как патриот не мог примириться с советской точкой зрения относительно решения Армянского вопроса, с эксплуатацией народа со стороны партийной верхушки, с политикой тотального надзора и устрашения, с антинародной сутью советской идеологии. И свои мысли поэт поверял бумаге, веря в то, что «рукописи не горят».

Большую часть сборника составляют афоризмы Исаакяна, связанные с Армянским вопросом. Этот «гордиев» узел со дня его возникновения волновал и мучил Исаакяна. С этим разделом соотносятся многочисленные наброски из «Памятных записей» и «Белой книги» поэта, множество фрагментов из его писем. И это вполне понятно, ведь решение Армянского вопроса имело судьбоносное значение для будущего Армении.

Раздумья по этому вопросу находим у поэта как в самые «горячие» годы баталий вокруг этой проблемы (1905–1924 гг.), так и в последнее десятилетие его жизни. В сознании народа этот вопрос с тех самых пор вплоть до наших дней ни на йоту не утратил своей злободневности. После окончания Второй мировой войны Исаакян питал надежду, что положительное решение проблемы возвращения армянам их исторических зе-

мель возможно. Летом 1945 года он с нетерпением ждал, что Красная армия перейдет Аракс и возвратит нашему народу несправедливо захваченные турками родные территории. Однако этого не произошло. Турции и на этот раз удалось остаться безнаказанной и удержать в своих руках то, что ей не принадлежит. Исаакян – армянский гусан[5], создатель «Песен гайдука» – не мог примириться с русско-турецким проектом решения Армянского вопроса. Более того, считая проблему Карабаха неотъемлемой частью Армянского вопроса, убеленный сединами поэт в 1948 году один, без сопровождения, не согласовав это с властями, отправился в поездку по Карабаху: он просто не мог допустить, чтобы для народа погас факел надежды. Время подтвердило предчувствия поэта. «Ани не позади, а всегда перед нами. С годами мы подходим к нему все ближе», «Масис – купол дома Армянского», «Пожить бы подольше, чтобы увидеть Ани, но лучше умереть, чем увидеть Севан высохшим» – вот его священные мысли-раздумья, адресованные в первую очередь новому поколению.

Исаакян прекрасно осознавал, что пишет. Его раздумья – это своеобразный «отсыревший динамит»… Он был уверен, что любое действие, любая идея либо историческая программа рождаются из Слова.

*

*   *

Когда речь идет о великом писателе, всегда возникает вопрос, каково было отношение этого писателя к искусству и литературе, каковы были его художественные вкусы. Всё это важно для понимания эстетических взглядов автора. А «вкус» понятие емкое. Знание художественных предпочтений писателя может рассказать гораздо больше, нежели многие труды о нем.

Исаакян много писал о проблемах литературы и искусства. Широко известны литературно-критические статьи поэта, а в 1977 году издательство Академии наук АрмССР выпустило в свет сборник «Аветик Исаакян: об искусстве» (составитель – литературовед Арам Инджикян). В упомянутом сборнике собраны высказывания поэта об архитектуре, музыке, кино и

[5] «Армянский гусан» («Հայ գուսան»). Цикл своих патриотических стихов «Հայդուկի երգեր» («Песни гайдука») А. Исаакян издал под этим псевдонимом.

театре, об изобразительном искусстве, причем в большинстве своем они извлечены из неопубликованных рукописей, которые в 60-е годы XX в. с разрешения вдовы Исаакяна Софьи Минаевны изучали и приводили в порядок Арам Инджикян и Абас Исаакян.

В книге Аветика Исаакяна об искусстве была опубликована лишь часть суждений поэта, составляющих стержень его эстетических взглядов. А афоризмы Исаакяна о литературе и искусстве в разные годы публиковались в периодической печати. Однако издаваемые в настоящем сборнике афоризмы впервые собраны воедино.

Из высказываний, вошедших в сборник «Афоризмы», мы черпаем сведения о процессе литературного труда, творческой лаборатории писателя. Среди них находим меткие суждения поэта о тех или иных произведениях классиков армянской и мировой литературы. И ни одно из его суждений не является избитой фразой, они отличаются новизной и свежестью мысли, проникновенностью, являясь отражением личностного восприятия литературных реалий.

Он осмысливает шедевры как литературы, так и искусства, характеризуя их с удивительной глубиной. Исаакян – один из самых образованных и интеллектуальных армянских поэтов. Нет такой области литературы и историко-литературных фактов, которых бы он не знал. Литература – мир его души, его дело и вера, источник вдохновения. И его слово говорит о многом. Эти афористические излияния его души являются для читателя редкостным ключом к познанию литературного мира поэта. Какое удовольствие следить за ходом его мысли и «плыть в фарватере» его вкусов и пристрастий ! Каждое из этих раздумий и умозаключений – как бы краткое эссе, написанное на одном дыхании. Этот раздел сборника – настоящий праздник для библиофила, любителя искусства и словесности.

Немногие из поэтов, тем более современных, так глубоко знали и чувствовали искусство, в особенности национальную архитектуру. Для Исаакяна армянская архитектура являлась предметом культа. Он считал величайшим вкладом нашего народа в сокровищницу мировой культуры именно армянскую поэзию и архитектуру: «Армянская архитектура – наша

слава, свидетельство нашего бытия, благородства, нашего права жить. Я утверждаю: народы, имеющие стиль, не умирают».

Размышляя об армянском стиле, Исаакян приходит к глубокомысленному заключению: «Купола наших церквей – каждый, как малый Арарат: ... бесконечно уменьшенные Арараты. Шпиль – точно так же уменьшенный купол. Армянский стиль восходит к образу Арарата, им сформирован».

С детских лет он был влюблен в шедевр армянской архитектуры – город Ани. «Я всегда ощущаю себя гражданином Ани», – писал Исаакян. Особый интерес Аветика Исаакяна к Ани – большая тема, в которой присутствуют и философские, и психологические, и чисто творческие аспекты. Мы не ошибемся, если отметим, что поэтический стиль Исаакяна имеет точки соприкосновения со стилем Кафедральной церкви Св. Богородицы в Ани. Ани был для Исаакяна символом, знаковым образом: «Еще в десятилетнем возрасте подолгу стоял я перед «Развалинами Ани» – картиной Карапета Оганджаняна, и без устали смотрел, восхищался и испытывал чувство гордости». Известно, что по решению Исаакяна церемония его венчания в 1910 году была совершена под сводами Кафедрального собора в Ани. Былой славе Ани посвящена его поэма-размышление «Мой караван», лучшие строки которой вдохновлены образом древней столицы и передают настроение вечности этого исторического города. А воспоминания Исаакяна о великом армянском архитекторе Торосе Тораманяне, вся жизнь которого была проникнута самоотверженной любовью к Ани, являют собой особую ценность. В этом шедевре армянской мемуарной литературы Исаакян приводит ряд высказываний великого архитектора: «Ани – зеркало армянской культуры. Посмотри хорошенько на Кафедральную церковь[6], посмотри и задумайся: она – душа нашего стиля. Смотри, как она величава, поскольку в ней есть созидательное начало и поразительная простота, и в то же время она выкристаллизована веками». Эти слова Тораманяна могут служить прекрасной характеристикой исаакяновского стиля.

[6] Эту церковь Ав. Исаакян в своих сочинениях называл Матерью церквей.

Можно провести параллель между поэзией Исаакяна и Кафедральным собором Ани:

Здесь творили предки мои,
Здесь материя стала идеей,
Греза здесь плоть обрела,
Прекрасная греза, что не знает пределов,
Ани, ты не только земное сокровище,
Ты – сам дух и целый народ,
Каждая форма здесь – превосходство стиля,
Каждый камень здесь – смысл и таинство.
(Подстрочный перевод)

*
* *

Личность Исаакяна, его образ мыслей и творчество в целом подтверждают ту истину, что в лице Исаакяна мы имеем дело не только с великим поэтом, но и великим философом. В ряду армянских поэтов он является лучшим знатоком мировой, в частности, древневосточной, китайской и особенно немецкой классической философии. И не только знатоком, но и мыслителем, воздвигшим свое философское здание, составленное «Памятными записями», поэмой «Абул Ала Маари», рядом философских стихотворений и легенд в прозе, романом «Уста Каро».

Если бы не поэтическое совершенство поэмы «Абул Ала Маари» – с ее безукоризненным метрическим искусством, яркими восточными образами, внутренней мелодичностью, это произведение – по его вселенскому охвату, насыщенности мыслью – по праву можно считать философским трактатом.

Довольно пространную часть настоящего сборника составляют раздумья поэта, имеющие философскую направленность. Нам представилась редчайшая возможность приобщиться к миру Исаакяна. То, что было заключено в подтексте его философских произведений, изложено в виде сжатых, емких умозаключений. Афоризм становится наилучшим средством постижения философского мира поэта.

Для мышления Исаакяна вообще характерна некая космичность. Его поэзия словно пронизана присутствием космоса. Лирический герой Исаа-

кяна часто ведет диалог с мирозданием, пытается постичь его непознаваемые глубины, его изначальный смысл. Загадку жизни и смерти Исаакян непосредственно связывает с тайной космоса, подчеркивая трагическую несостоятельность человеческого существования в сравнении с силой, мощью и бесконечностью космоса: «Мы приходим из беспредельности, из космической бездонности и уходим в космическую бездонность; этот путь от одной беспредельности к другой – расстояние в пядь с продолжительностью в секунду».

Поэт очень болезненно воспринимает недолговечность человеческой жизни: «Ах, если бы жизнь была такой же долгой, как смерть», – пишет он с болью и тоской. Единственное, что примиряло его с этой глубоко осознаваемой им истиной, которую Исаакян сделал своим кредо, – это то, что и жизнь, и смерть, и человек, и мир суть одно-единственное мгновение перед лицом космической вечности: «Эта звезда, Арктур, видела рождение нашего мира, видела рождение человека, ее луч прослеживал все этапы истории человечества. Она видела мое рождение, ее луч сиял над моей любовью, ее луч узреет мой скромный могильный холм, и он увидит смерть всего человечества и гибель планеты. И всё это бездонное время в космической вечности будет длиться лишь одну секунду – не более того».

Эти философские максимы написаны лириком, подлинным поэтом: «Мир – это я, – пишет Исаакян. – Мир – это конкретизация, отражение мысли нашего «я». Мир – это отражение нашей души... Мира нет, мир – это ты. Мира нет, есть лишь внутренний мир». И в иерархии этого мира для Исаакяна первоочередным является фактор воли. Поэт с юных лет формировался как личность с высокими волевыми качествами. Здесь, бесспорно, сыграло роль как влияние учения Ницше, так и опыт противостояния трагической армянской судьбе... У поэта своеобразный культ воли: «Пока существует воля, нет там ни смерти, ни покоя, ни скуки, ни Нирваны», «У кого нет воли, у того нет ничего».

С философскими афоризмами Исаакяна непосредственно связаны изречения, касающиеся характера поэта, его личности и биографии. Эти заметки подводят нас к пониманию человеческого темперамента Исаакяна, раскрывают перед нами его духовный мир, непостижимые глубины его

личности. Читателю всегда интересны внутренний мир любимого автора, история его жизни, заветные чувства. Настоящий сборник вкупе с изданной в 2000 году книгой мемуаров Вигена Исаакяна «Мой отец» «выстраивают» своеобразный мост между читателем и поэтом. Это своего рода автопортрет Исаакяна. И снова перед нами воскресает поэт, преклоняющийся перед космосом, но вместе с тем глубоко верящий в свою внутреннюю силу, ощущающий себя неотъемлемой частью космоса: «Я – квинтэссенция космоса, и космос – разросшееся «я». Более того, он приходит к заключению, что человек сильнее космоса: «Я больше космоса, ибо я ощущаю себя, как человек и чувствую свою душу, а космос словно прялка в вечном кружении». Это – Исаакян с его излюбленным методом философских рассуждений, основанных на стремлении постичь суть предмета во взаимоисключающих противоречиях и дойти во всем до самой сути: «Не понимаю, для чего жизнь. Было бы лучше никогда не отделяться от космоса», «До каких пор мы будем рождаться, чтобы умереть ?», «Жизнь – осязаемый сон, сон – неосязаемая жизнь», «Революция превращает людей не в ангелов, вопреки своим проповедям, а в зверей», «Осенний ветер срывает все листья, но ни один листочек не верит в свое падение», «Абул Ала должен был и от себя убежать», «Млечные пути с бессчетными солнцами, звездами, бесконечный космос словно висят на волоске, и этот волосок есть моя «душа»... Так размышляет Исаакян – за одну жизнь переживший несколько жизней, революций и войн, видевший погромы и восстания, тюрьму и ссылку, познавший славу поэт-философ.

Есть произведения, которые пишутся за один-два месяца или за два-три года. А есть книги, которые пишутся всю жизнь – таков этот том афоризмов, и в этом также состоит уникальность данной книги. Она фактически представляет нам сконцентрированную систему мировосприятия, мышления Исаакяна. И вновь предстает перед нами большой жизнелюб: «Я каждый день гляжу на мир и каждый день, словно удивляясь, впервые вижу мир – мир повседневный и всегда восхитительный, мир стародавний и всегда новый». Когда читаешь эти строки, на память приходят слова поэта из легенды «Последняя весна Саади»: «Рождаемся поневоле, живем, изумляясь, умираем с тоской...».

И вновь встает перед нами образ великого патриота, бесконечно любившего и обожествлявшего свою Родину: «Душа моя испытала все те горести и невзгоды, которые были пережиты армянским народом. Все те ружья гремели в моей душе…».

Исаакяну словно свыше были даны удивительной силы предчувствие, проницательность, умение предвидеть развитие исторических событий. Вот что он пишет в самый сложный, самый трагический период новой истории Армении: «Этот ураган, который сейчас уносит с собой стенания мучеников и ударяет в оглохшие уши мира, завтра будет развевать флаг освобожденной Армении. Я уверен в этом, как уверен в собственном существовании, в существовании солнца» (1916 г.).

Когда читаешь афоризмы поэта, тебя охватывает чувство, будто Исаакян рядом: ты слышишь его живой голос, чувствуешь его горячее дыхание. Ощущаешь, что ты не одинок, что твой народ не одинок, что великий Пророк рядом со своим народом, и сегодня мы, оказавшись на этом великом перепутье, на смене исторических вех, более, чем когда-либо нуждаемся в слове великого Мыслителя, Пророка и Патриарха нации.

ԱՖՈՐԻԶՄԸ ՈՐՊԵՍ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻԿՐՈՏԻԵԶԵՐՔ

ԻՍԱՀԱԿՅԱՆ Ա.

Ամփոփում

Բանալի բառեր՝ *աֆորիզմ, ցեղասպանություն, հայրենասիրական դպրողություններ, Իսահակյանի ստեղծագործությունը, Իսահակյանի հուշագրություններ, Անիի կաթողիկե եկեղեցի:*

Հոդվածը լուսաբանում է Իսահակյանի ստեղծագործության հազվագյուտ ժանրի՝ աֆորիզմի դերը և նշանակությունը Վարպետի ստեղծագործական աշխահում: Իսահակյանը աֆորիզմներ է գրել երիտասարդ տարիքից: Նրա աֆորիզմները սփռված են իր բազմաբնույթ ձեռագրերում: Մենք աֆորիզմների ենք հանդիպում թե բանաստեղծական տետրերում, թե հիշատակարանի էջերում, թե նրա բազմաթիվ ստեղծագործական ծոցատետրերում: Իսա-

հակյանի աֆորիզմներն ըստ բովանդակության բաժանվում են տարբեր թեմաների՝ Հայաստան, հայ ժողովուրդ, Հայկական հարց, գրականություն և արվեստ, սեր և այլն:

Իսահակյանը սակայն նպատակ չի հետապնդել կենդանության ժամանակ տպագրել իր աֆորիզմները: Դրանք առաջին անգամ գրքի տեսքով լույս են տեսել 2000 թվականին, կազմողը եղել է տողերիս հեղինակը: Մենք հավատացած ենք, որ Իսահակյանի աֆորիզմները, որոնք վերաբերում են թե հայ ժողովրդի ճակատագրի կարևոր հարցերին, թե համաշխարհային գրականության և արվեստի անանց արժեքներին, համաշխարհային աֆորիստիկ մտքի գոհարների կողքին կգտնեն իրենց արժանի տեղը: Շնորհիվ Իսահակյանի, այդ բարդ ժանրը նաև ստանում է հայկական գրանցում:

APHORISM IN AVETIK ISAHAKIAN'S WORKS AS MICROCOSMOS OF HIS CREATIVE WORLD

ISAHAKIAN A.

Summary

Key words: *aphorism, the Genocide, Armenia, patriotic views, Isahakian's works, "Memoirs" by Isahakian, cathedral church of Ani.*

The article dwells upon the role and significance of aphorisms as a complex and unique manifestation of literary genre in A. Isahakian's creative world. A. Isahakian started to write aphorisms since his youth. A great variety of the poet's works are abundant in them. They can be observed in the handwritten collections of his poems, memoirs and his pocketbooks where the Master of verse used to put down all his ideas. His aphorisms are thematically diverse: Armenia, the Armenians, the Armenian Question, literature, art, love and so on.

However, in his lifetime it never occurred to A. Isahakian to have his aphorisms published. They were compiled and first published in 2000 by the author of the present article. It is our firm belief that A. Isahakian's aphorisms concerning such important issues as the destiny of Armenians, the unsurpassed values of world art and literature will find their well-deserved place among the gems of world aphorisms. Thanks to A. Isahakian, this complex genre is enriched with the peculiarities of the Armenian way of thinking.

ՎԼԱԴԻՄԻՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ[*]
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԹՄԿԱԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ» ՊՈԵՄԸ (ԱՅԼԸՆԹԵՐՑՄԱՆ ՓՈՐՁ)

Օ՜հ, ի՜նչ փույթ կյանքը մեռնող,
Երբոր երազը կապրի,
Երբոր երազն անմա՜հ է:

Դ. Վարուժան

Բանալի բառեր՝ *ժողովրդական ավանդություն, հեղինակային մտահղացում, արվեստի նպատակ, արվեստագետի կոչում, գեղեցիկի պաշտամունք, դավաճանություն, պոեմի տարբերակներ:*

Ներածություն

«Թմկաբերդի առումը» Հ. Թումանյանի այն պոեմներից է, որոնց առաջին տպագրությանը (1905) հաջորդած մի քանի հրատարակություններում բանաստեղծը որևէ էական փոփոխություն չի կատարել: Բայց եթե, ասենք, «Ալեք», «Մեհրի», «Մերժված օրենք» պոեմներին նա այլևս հարկ չի համարել անդրադառնալ, որովհետև դրանք համարել է անցած շրջան իր ստեղծագործական կյանքում, ապա «Թմկաբերդի առումի» առաջին իսկ տպագրությունը, ըստ ամենայնի գոհացրել է խստապահանջ բանաստեղծին, ուստի հետագա հրատարակություններում հեղինակը, բացի ոճական, մեկ-երկու տեղ նաև՝ մասնակի բովանդակային ճշգրտումներից, այլ փոփոխությունների անհրաժեշտություն չի տեսել: «Լոռեցի Սաքոյի» կամ «Անուշի» հետ համեմատած, կարելի է ասել, «Թմկաբերդի առումը» գրվել է մի շնչով 1902-ին՝ աբասթումանյան աննախադեպ ստեղծագործական վերելքի օրերին:

Առաջին տպագրությունից սկսած՝ պոեմն անմիջապես հայտնվել է ժամանակի քննադատության բծախնդիր ուշադրության կենտրոնում, ինչպես նաև

[*] *Հոդվածը ներկայացվել է 03.08.2019, գրախոսվել է 16.09.2019, ընդունվել է տպագրության 05.12.2019:*

հետագա բոլոր ուսումնասիրողների շահագրգիռ քննությունների կիզակետում: Այդ ընթացքում պոեմի հետ կապված շատ խնդիրներ ստացել են իրենց հիմնավոր լուծումը: Բայց կան նաև այնպիսիք, որ մինչև այսօր էլ մնում են վիճելի կամ առհասարակ չեն բարձրացվել, որովհետև ծագել են վերջին տասնամյակներին: Այս համառոտ վերլուծական փորձի նպատակն է, անդրադառնալ այդ խնդիրներից մեկ-երկուսին՝ հիմք ընդունելով գրականության պատմության և տեսության, ինչպես նաև թումանյանագիտության դարավոր փորձը: Մասնավորապես՝ Թմկաբերդի մասին ավանդությունը և այլ համանման սյուժեներ,[1] որպես այդպիսի՞ն են հետաքրքրել բանաստեղծին, թե՞ միայն ազդակ են ծառայել միանգամայն ինքնուրույն մտահղացման համար. բարոյական ու գեղագիտական ի՞նչ դրվածքով է մեկնաբանվում դավաճանության թեման պոեմում, գեղարվեստական ի՞նչ գործառույթ ունի աշուղի ներկայությունը այս համատեքստում, վերջապես, ինչո՞վ է կապվում այս ամենը «անարատ մարդու» թումանյանական իդեալի հետ:

Ինչպես ընթերցել պոեմը

Պոեմի ամբողջական ձեռագրեր չեն պահպանվել: Մեզ հասել են միայն մի սևագիր հատված և նախնական գրառման պատառիկներ, որոնք, ինչպես պարզվել է, վերաբերում են Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի լիբրետոյին[2], որի պատրաստմանը Թումանյանն այնպես էլ չի հասցրել մինչև վերջ մասնակցել[3]:

Պահպանված սևագիր հատվածը՝ 56 տող, պոեմի սկսվածքի նախնական տարբերակն է և հիմք է տալիս մտածելու, որ ամբողջ վիպասքը «թափառական աշուղի» անունից պատմելու միտքը ծագել է ոչ թե պոեմի մտահղացման հետ միաժամանակ, այլ ավելի ուշ. սևագրում աշուղը ոչ թե պատմող է, այլ գործող անձ, այն էլ, ինչպես երևում է, կարևոր, որովհետև հեղինակը նրա մասին պատմում է բավական հանգամանորեն: Դա իր հերթին հուշում է, որ պոեմում աշուղի դերը, նախնական մտահղացմամբ իսկ ծանրակշիռ իմաստային բեռն-

---

[1] Դրանց մասին տե՛ս **Թումանյան** 1991, 542–543:

[2] Սպենդիարյանի հետ օպերայի լիբրետոյի վրա աշխատելիս անհրաժեշտություն է առաջանում, որ Թմկա տիրուհին անուն ունենա: Հ. Թումանյանն առաջարկում է Գոհար: Սպենդիարյանը հարմար չի համարում, քանի որ այդ անունը ռուսերեն դժվարարտասանելի է, և առաջարկում է հոմանիշներից մեկը՝ Ալմաստ, որ դառնում է նաև օպերայի անունը:

[3] Պոեմի ստեղծագործական պատմության, բանահյուսական աղբյուրների մասին մանրամասն տե՛ս **Ջրբաշյան** 1986, 344–387: **Թումանյան** 1991, 542–548:

վածություն պիտի ունենար: Այս պահը ուսումնասիրողների ուշադրությունից վրիպել է ինչպես իր ժամանակին, այնպես էլ հետագայում: Սևագրին միայն հպանցիկ են անդրադարձել՝ պոեմի ենթատեքստի հետ կապված որևէ էական խնդիր չնկատելով այնտեղ: Էդ. Ջրբաշյանը, օրինակ, գրում է. «Պահպանված որոշ սևագիր հատվածներից երևում է, որ սկզբնապես Թումանյանը մտադիր է եղել ավելի մանրամասն ներկայացնել բերդի գրավման պատմությունը, նույնիսկ այն հանգամանքները, որոնց մեջ «թափառական աշուղը» վարում է իր զրույցն ունկնդիրների հետ: Այդ հատվածներում հիշատակվում են նաև աշուղի անունը (Մալուլ), ունկնդիրների հետ նրա հանդիպման վայրը (Աճառ լեռներ, Խուլո բնակավայր) և ուրիշ մանրամասներ: Սակայն պոեմի վերջնական տեքստի մեջ պատմությունը կոնկրետացնող նման տվյալները բացակայում են, շարադրանքն ստացել է ավելի ընդհանրական նկարագիր՝ միաժամանակ և՛ էպիկական, և՛ փիլիսոփայական»[4]: Այսքանը միայն. ուրիշ, շատ ավելի կարևոր մանրամասներ էլ կան, որոնց մասին առհասարակ չի հիշատակվում: Մինչդեռ այս սևագիրը, անմշակ թերավարտությամբ հանդերձ, հետաքրքիր հետևությունների հնարավորություն է տալիս՝ կապված բանաստեղծի մտահղացման իրական բովանդակության հետ և կարող է նոր շերտեր բացել պոեմի հայտնի բարոյաբանության ծալքերում:

Նախ նկատենք՝ ո՛չ Երվանդ Լալայանի գրի առած ավանդության մեջ, որի հիման վրա է գլխավորապես ձևավորվել պոեմի սյուժեն, ո՛չ էլ բանաստեղծի ձեռքի տակ եղած այլ տարբերակներում կնոջը գայթակղեցնող և դավաճանության մղող աշուղի մասին խոսք չկա: Դա բացառապես բանաստեղծի մտահղացումն է, որ, ինչպես կփորձենք ցույց տալ, թումանյանական գեղագիտության բազմաշերտ կառույցի շրջանակներում ընդարձակում է ժողովրդական պատումի բարոյախոսական բովանդակությունը:

Պոեմի այս սևագիր սկսվածքը բավական խճողված կառուցվածք ունի, որ անհամատեղելի է Թումանյանի «աչքի նման պարզ և աչքի նման բարդ» լեզվամտածողության հետ, և նա պոեմի ավարտուն տեքստում հրաժարվել է այս հատվածից՝ ամբողջությամբ թողելով միայն մի քառատող.

Ղոնախ ենք ողջ էս աշխարհում
Մեր ծըննդյան փուչ օրից,
Էսպես գալիս անց ենք կենում
Էս անցավոր աշխարհից:

---

[4] **Թումանյան** 1991, 545:

Այս քառատողը ավարտուն պոեմի նախերգանքում, մասնակի ոճական փոփոխությունների ենթարկվելով, նոր համատեքստում ձեռք է բերել այլ իմաստ. եթե սևագրում այն կապվում էր «ունայն է ողջ» ավետարանական հայտնի մտայնության հետ, ապա նոր տարբերակում իմաստավորվում է «գործն է անմահ» կենսական բարոյախոսությամբ:

Սևագիրը բաղկացած է երկու հատվածից՝ Առաջինը, որ, ըստ նախնական պլանի, հավանաբար նախերգանքի դեր պիտի կատարեր, իր հերթին գծիկով բաժանված է երկու մասի: Մեկում պատմող-հեղինակը տեղեկացնում է՝ սազը ուսին աշուղը, որ «շրջում է ազատ ամբողջ Կովկասում», թեքում է ճամփան, երբ մոտենում է իր հայրենի «զվարթ Աճառին»[5], նաև խոստանում է պատմել՝

… թե ինչու համար
Փախչում է աշուղն էն լավ սարերեն
Եվ դեպի Աճառն ու իրեն աշխարհ
Անեծք է ղրկում երգի փոխարեն:

Մյուսում պատմվում է, թե ինչպես «մի անգամ շատ առաջ մեր օրից» «աշուղ Մալոլը Աճառ լեռներից իջնում էր Խուլո»[6]: Ժողովուրդը սիրով ու ջերմությամբ է ընդունում նրան.

Հեյ ջան, աշուղ, բարով տեսանք,
Սազիդ ձենին մենք ղուրբան,
Դու մեր ախպեր, մեր օր ու կյանք.
Աստված կտրի քո ճամփան:

Երկրորդ հատվածում նկարագրվում է աշուղի ելույթը ժողովրդի առջև, որ հարկ ենք համարում բերել ամբողջությամբ.

Ու վեր է բերում մեծ սազը ուսից,
Սըրում է իրան բեխերը երկար.
Մեյդան բաց արած նստել է գյուղը
<1 անընթ.> լուռ լուռ <1 անընթ.>
Գնում է, գալիս <1 անընթ.> աշուղը
Ու հետզհետե լցվում ու լցվում,
Գնում է, գալիս, կանգ առավ հանկարծ,
Դիփեց գետինը, թռավ մեյդանում,
Կանչեց աշուղը, սազը մղկըտաց –

[5] Ժամանակակից Աջարիան է, պատմական Ջավախքի մի մասը:

[6] Աջարական ԻՀ շրջանային կենտրոններից է, որ մի ժամանակ եղել է պատմական Ջավախքի տարածքում:

Քյարամ Ասլիի զրույցն է անում:
Հեյ, ջամսիլաթ, ականջ արա
Վառվեց Քյարամ, էրվեց Քյարամ էն սիրուց…

Ներկայացվում է նաև ունկնդիրների ոգևորված արձագանքը.

Հեյ ջան, ուստա, սեր կանչիր, սեր,
Սեր <….> մեզ համար,
Թող <1 անընթ.> ջահել ու ծեր
Նոր կյանք անեն սիրավառ:
Թող մոռանանք չարությունը
Թող նորոգենք <….>[7]

Ինչպես ցույց են տալիս այս քաղվածքները, պոեմի նախերգանքում, բացի վերևում բերված քառատողից, սևագրից պահպանվել են նաև առանձին բառեր և արտահայտություններ: Օրինակ՝ նախերգանքի առաջին՝ «Հե՜յ, պարոննե՜ր, ականջ արեք» տողի նախատարբերակը սևագրի «Հեյ, ջամսիլաթ, ականջ արա» տողն է: Հատվածում հանդիպում են նաև նախերգանքի «մի բան պատմեմ հիմի ձեզ» և «անեծք նրա չար գործին» արտահայտությունների նախատարբերակներ:

Ակնհայտ է, ուրեմն, որ պոեմի նախերգանքը ձևավորվել է ըստ դիտարկվող սևագրի: Սակայն, եթե նախերգանքում հեղինակային մտահղացման բարոյափիլիսոփայությունը՝ մարդու անմահության երաշխիքը նրա գործն է, միանգամայն հստակ է, ապա սևագիրը, լինելով անավարտ, որոշ հարցականներ է թողնում: Մասնավորապես, անպատասխան է մնում մի կարևոր հարց՝ սկզբում հիշված անանուն աշուղը և աշուղ Մալուլը նույն ա՞նձն են, թե՞ տարբեր մարդիկ են՝ իրենց տարբեր դերերով: Եթե նույն անձն են, ապա հենց նա է այդ քստմնելի դերակատարը, դրա համար էլ նա հալածված ու մերժված է իր հարազատ միջավայրից: Եթե այդ դերակատարը Մալուլ անունով աշուղն է, ապա անանուն աշուղը ինքն է երես թեքել այն միջավայրից, որտեղ մի ուրիշ աշուղի ձեռքով կատարվել է չարագործությունը: Եթե ընդունենք երկրորդ ենթադրությունը, որ ավելի հավանական է թվում, աշուղ Մալուլ կոչվածը իրականում Շահի ուղարկած գայթակղիչն է՝ ծպտված կեղծ անունով:

Այս ենթադրության օգտին են խոսում նաև այլ կողմնակի նշաններ: Խուլը գյուղում աշուղ Մալուլի՝ ընդունելությունից զգացվում է, որ նա նոր մարդ է այդ միջավայրում: Ժողովրդի առջև աշուղի ելույթի նկարագրության մեջ, որ ամբող-

[7] Մեջբերումները՝ **Թումանյան** 1991, 209–209:

ջապես բերեցինք վերևում, հեղինակային հեգնանքի նկատելի մի շեշտադրություն կա, որ կասկած է հարուցում նրա անկեղծության վերաբերյալ: Այսպիսի հետևության հիմք տալիս է նաև աշուղի ելույթին ժողովրդի զգացմունքային արձագանքի բազմաբառ գունազարդված նկարագրությունը, որ անսովոր է Թումանյանի համար: Ուրեմն հեղինակին նախապես հայտնի է, որ այդպիսի ելույթներով աշուղն ուզում է ժողովրդի մեջ համբավ ու համարում ստեղծել իր անվան շուրջ՝ դյուրացնելու համար մուտքը Թմկաբերդ:

Պոեմի վերջնական բնագրում Թումանյանը հստակեցրել է այս խճճված իրավիճակը: Պատմողի դերն ստանձնում է սևագրի անանուն աշուղը՝ իբրև հեղինակային արժեհամակարգը կրող: Աշուղ Մալուլը պատումի արագացված հարահոս է մտնում դարձյալ անանուն՝ որպես Շահի «թովիչ երգիչ»՝ ծպտված թափառական աշուղի դիմակով:

Այսպես թե այնպես՝ բանաստեղծն այսպիսով բանահյուսական նախօրինակներում առկա դավաճանության երևույթի բարոյական իմաստավորման նոր մեկնակետ է հուշում՝ հանձին գայթակղիչ աշուղի կերպարի. եթե բանահյուսական նախօրինակներում դավաճանության հոգեբանական հիմքը կնոջ թեթևամիտ փառասիրությունն է, ապա Թումանյանի պոեմում դրան գումարվում է նաև գայթակղիչի դավադիր միջամտությունը:

Սյուժետային այս նոր հանգույցի հավելումը հնարավոր է բացատրել ձևային նպատակահարմարության տեսակետից, քանի որ բանահյուսական նախօրինակներում թեթևամիտ կնոջ և նրան հրապուրողի միջև հաղորդակցության որևէ կապ չի նշվում, իսկ գեղարվեստական պատումի տրամաբանական զարգացման համար այդպիսի կապի որոշակիությունն անհրաժեշտ է: Բայց սևագիր հատվածի վերլուծությունը ցույց տվեց, որ Թումանյանի մտահղացման մեջ աշուղի գործոնը ձևային նկատառումից զատ ունի նաև կարևոր բովանդակային ենթաշերտ, որին կարելի է հասու լինել միայն արվեստի թումանյանական փիլիսոփայության համատեքստում: Ուստի տեսնենք, թե ի՛նչ ուղղությամբ է տանում բանաստեղծը այս թեմայի զարգացումը և ի՛նչ եզրակացության է հանգեցնում ընթերցողին:

Նախերգանքի վերջին երկտողը՝

Խոսքս, տեսեք, ո՞ւր է գընում,
Քաջ որսկանի գյուլլի պես,-

միայն գեղեցիկ համեմատություն չէ, այլ կանխանշում է պատումի զարգացման սլացիկ ընթացքը, որ իր հերթին հուշում է իրադարձությունների տեսանելի հոսքում որսալ հեղինակային խոսքի խորքային խորհուրդը:

Պոեմի առաջին գլխում՝ ընդամենը վեց քառատողի մեջ, բանահյուսական չափազանցություններով պատմող աշուղը ներկայացնում է հակառակորդ բանակների բախման մի լայնածավալ տեսարան՝ առանց ավելորդ մանրամասների, որը, սակայն, ընթերցողի երևակայության մեջ վառ պատկերանում է իր բոլոր արյունալի սարսափներով ու հաղթանակի վեհությամբ[8]: Տեսարանն ավարտվում է բնորոշ քառատողով.

Ու միշտ ուրախ, հաղթանակով
Իր ամրոցն է դառնում նա.
Սպասում է էնտեղ կինը,
Ջահել կինը սևաչյա:

Այս քառատողով տրամաբանական կապ է ստեղծվում հաջորդ գլխի հետ[9], որ Թմկա տիրուհու գեղեցկությամբ ներշնչված հիմներգությունն է: Հարկ չկա մեջբերելու այդ հատվածը, քանի որ պոեմին շատ թե քիչ ծանոթ ամեն ոք անգիր գիտի այն դեռ դպրոցական նստարանից: Գուցե հենց դա է պատճառը, որ ուսումնասիրողները սովորաբար երկար կանգ չեն առնում այս քնարական հատվածի վրա: Մինչդեռ սա այն մեկնակետային պահն է, որի շուրջն են պտտվում, բախվում ու եղերական ավարտի հանգում բոլոր դրամատիկ անցուդարձերը: Գեղեցկության այս հիմնը՝ բոլոր տեսակետներից անթերի հյուսված, թումանյանական հայտնի գեղեցկապաշտության[10] բազմաթիվ դրսևորումներից մեկն է, որ պոեմի համատեքստում և՛ կառուցվածքային, և՛ ընդհանուր գեղագիտական նոր իմաստավորում է ստանում. գեղեցիկը անպարտելի ուժ է, քանի դեռ իր անձեռնմխելի բարձունքից է լուսավորում մարդկային կեցությունը, բայց երբ իջնում ու խառնվում է այդ կեցության ունայն շահագրգռություններին, դառնում է կործանարար չարիք: Այս միտքը սրընթաց արագությամբ, բայց հա-

[8] Հետաքրքիր է, որ ըստ ժամանակի հայտնի քննադատներից Մ. Մատենճյանի՝ պոեմում ռազմական տեսարանների երկու նկագրություններից այս առաջինը «սառն է, որտեղ չկա իրարանցում, կռվի մեծ թափ» («Նոր դպրոց», 1910, 5 մայիսի):

[9] Այսպիսի տրամաբանական անցումով են իրար հետ կապվում պոեմի բոլոր գլուխները, որ անթերի կառուցվածքի հիմնական գրավականն է: Կառուցվածքային այդ խնդրին անդրադառնալը մեր հրապարակման նպատակից դուրս է, քանի որ նախ՝ բոլոր ուսումնասիրողները այս կամ այն կերպ անդրադարձել են դրան, և ապա՝ չենք ուզում շեղվել պոեմի գեղագիտական-փիլիսոփայական ենթատեքստի վերաբերյալ մեր հիմնական հարցադրումից:

[10] Մի առիթով բանաստեղծին համեմատելով քրիստոնյայի և սոցիալիստի հետ՝ Թումանյանը գրում է. «Մեկի պաշտամունքի կենտրոնը բարոյականությունն է, մյուսի իդեալը՝ ազատ ու արդար հասարակությունը, իմ և իմ նմանների պաշտամունքի առարկան գեղեցիկն է» (**Թումանյան** 1995, 491):

մոգիչ հետևողականությամբ զարգանում ու ողբերգական հաստատում է ստանում պոեմի վերջին գլուխներում:

Պոեմում գեղեցկության այս ոգեշունչ հիմնին, որ երկրորդ գլուխն է կազմում, անմիջապես հաջորդում է երրորդ գլուխը՝

Ու կովի դաշտում Շահի առաջին
Արին մի անգամ գովքը սիրունի

սկսվածքով: Հարց է առաջանում՝ ո՞վ է այդ գովքն անողը, Շահի ինչ-որ պատահական զրուցակից, թե մեկը, որ գիտի գեղեցկության գինը և տիրապետում է ըստ պատշաճի ներկայացնելու արվեստին: Հետագա տողերը հիմք են տալիս ընդունելու երկրորդ ենթադրությունը: Եվ իրոք, պակաս ներշնչված չէ Թմկա տիրուհու գեղեցկության այս երկրորդ հիմնը.

Նրան իր տեսքով, հասակով, ասին,
Չի հասնի չքնաղ հուրին Իրանի:
Ծով են աչքերը Ջավախքի դըստեր,
Ու կորչում է մարդ նրա հայացքում,
Ճակատը ճերմակ էն ձյունից էլ դեռ,
Որ բարձր Աբուլի կատարն է ծածկում:

Կնոջ գեղեցկությունը այսպես կարող է ներկայացնել միայն իր գործին հմուտ բանաստեղծ-աշուղը, տվյալ դեպքում՝ Շահի պալատական երգիչը: Այս տողերը ևս, իրոք, անկեղծ հիացմունքի տուրք են Թմկա տիրուհու գեղեցկությանը: Այսպես պատումի հենց սկզբից իրադարձությունների ոլորտ են ներքաշվում երկու հիմնական գործող անձեր, մեկը՝ նախերգանքի աշուղը, որ կրում է հեղինակի արժեհամակարգը, մյուսը՝ Շահի պալատական երգիչը, որ իբրև «ծեր, թափառական աղքատ աշուղ» է մուտք գործում Թմկաբերդ: Պատահական չէ, որ ո՛չ առաջին, ո՛չ էլ երկրորդ դեպքում ուղղակի ակնարկ չկա, թե ովքեր են գեղեցկության այդ երկու հիմների հեղինակները: Դա Թումանյանի բանաստեղծական մտածողության կերպն է՝ շատ բան թողնել ընթերցողի երևակայության կռահմանը՝ ստեղծագործելու բավականությանն անմասն չթողնելով նրան: Իսկ կռահելը այնքան էլ դժվար չէ: Երկու աշուղն էլ տեսնում ու գնահատում են գեղեցիկը: Սակայն մեկի համար դա բարձր առաքինություններ ծնող ուժ է, մյուսի համար՝ նենգավոր դավերի գործիք: Սա կապվում է մարդու, հասարակությունների կյանքում Գեղեցիկի, ավելի լայն առումով՝ արվեստի դերի ու նպատակների մասին թումանյանական հայտնի պատկերացումների հետ, որ նրա անավարտ գլուխգործոցի՝ «Հազարան բլբուլի» առանցքային բարոյականը պիտի լիներ. արվեստը գազանացած մարդուն վերադարձնելու էր մարդ-

կային կերպարանքը: Քանի դեռ Թմկա չքնաղ տիրուհին հավատարիմ է իրեն շնորհված «մաքուր գեղեցկության հանճարին»[11], անպարտելի է Թաթուլը, իսկ երբ այդ բարձրագույն շնորհը զոհում է նենգավոր աշուղի գայթակղանքին, կործանարար չարիք է ծնում: Կարճ ասած՝ «Թմկաբերդի առումը» պոեմի այսպես կոչված «գլխավոր հերոսները» ոչ թե Թաթուլը, շահը կամ Թմկա տիրուհին են, այլ նախերգանքի աշուղը և Շահի «թռվիչ երգիչը»: Մեկը «անարատ մարդու» թումանյանական իդեալի կրողն է, մյուսը դրան միշտ ուղեկցող «անմեռ չարի» սպասավորը:

Այս կենսափիլիսոփայության շրջանակներում է գործառում գայթակղիչ աշուղի կերպարը, որ, ինչպես արդեն նկատել ենք, բանահյուսական նախօրինակներում բացակայում է և ամբողջապես հեղինակային մտահղացում է:

Պոեմի վերջում, երբ արդեն կատարված է ողբերգությունը, ընթերցողն իրեն հարց է տալիս՝ դրա նյութողներից ո՞վ է ավելի արժանի անեծքի՝ Շահը, Թմկա տիրուհին, թե՞ Շահի «թռվիչ երգիչը»:

Շահը արևելյան բռնակալ է: Նրա նպատակն է տիրել Թմկաբերդին, և նա ոչ մի միջոցի առջև կանգ չի առնում՝ դրան հասնելու համար: Նա գործում է «նպատակը արդարացնում է միջոցը» ծանոթ սկզբունքով և այդ դիտակետից էլ դատում է կյանքի մասին.

Աշխարհում հաստատ չկա ոչ մի բան,
Ու մի հավատա երբեք ոչ մեկին,
Ոչ բախտի, փառքի, ոչ մեծ հաղթության,
Ոչ սիրած կնկա տված բաժակին[12]:

Սա, իհարկե, չի նույնանում իրերի հավերժական շարժման ու փոփոխության մասին թումանյանական հայտնի կենսահայեցության հետ, ինչպես դա դրսևորվել է, ասենք, «Էսպես չի մնա» բալլադում կամ քառյակներում, որտեղ փոփոխությունը վերաբերում է ձևին, իսկ էությունը՝ հոգին, հավիտենական է.

Հազար էսպես ձևեր փոխեմ, ձևը խաղ է անցավոր,

---

[11] Այսպես է բնութագրում կնոջ գեղեցկությունը Ա.Ս. Պուշկինը Կ. Ա. Պ. Կեռնին ձոնված իր հայտնի բանաստեղծության մեջ.

Я помню чудное мгновенье:
Передо мной явилась ты,
Как мимолетное виденье,
Как гений чистой красоты.

[12] Պոեմի առաջին տպագրության տեքստում այս քառատողը, որ, ինչպես կտեսնենք, կարևոր անցումային օղակ է կոնֆլիկտի դրամատիկ հանգուցալուծման շղթայում, բացակայում է:

Ես մի հոգի, տիեզերքի մեծ հոգու հետ, ի՞նչ կա որ:

Շահը չի հավատում ոչնչի ու ոչ մեկի, անգամ ինքն իրեն: Նա իր հաշվենկատ փորձի դիտակետից է զննում իրերի դրվածքը: Այսպես թե այնպես՝ հանձին Շահի, Թումանյանը ամենևին նպատակ չի ունեցել ստեղծելու արևելյան բռնակալի տիպ. ընթերցողի գիտակցության մեջ այդ տիպը արդեն կա բազմաթիվ այլ աղբյուրներից:

Պատումի երեք դրվագներում էլ, որտեղ հանդիպում ենք Շահին, նա հեղինակային մտահղացման մեջ միայն օժանդակ դեր է կատարում: Առաջին դրվագում նրա հոխորտ սպառնալիքները միայն ընդգծում են Թաթուլի ինքնավստահ հանգստության էպիկական վեհությունը, երկրորդում կարևորվում են միայն նրա շռայլ խոստումները, որոնցով ծպտված աշուղը պիտի գայթակղի Թմկա տիրուհուն, երրորդում նույնպես առաջին պլանում է ոչ թե նա ինքը, այլ նրա դիմում-հարցը՝ ուղղված Թմկա տիրուհուն.

Ու լի դառնությամբ հարցնում է նա
Դալուկ, մարմարիոն Թմկա տիրուհուն.
– Պատասխան տո՛ւր ինձ, մատնիչ սևաչյա,
Մի՞թե Թաթուլը քաջ չէր ու սիրուն...[13]

Շահը պատժում է դավաճան գեղեցկուհուն: Ուսումնասիրողները տարբեր բացատրություններ են տալիս նրա այդ արարքին: Դպրոցական դասագրքերում, օրինակ, դա բացատրվում է Շահի մտավախությամբ, թե նա վաղը կարող

[13] Այս քառատողի առաջին և վերջին տողերի վրա Թումանյանը երկար է մտածել: Առաջինը «Մուրճի» տարբերակում (1905) եղել է՝ «Ու լիքը թույնով հարցնում է նա», «Բանաստեղծությունների» Բաքվի հրատարակության մեջ (1908) և «Հայ գրողներ» քրեստոմատիայում (1909, 1914) դարձել է՝ «Ու դառը ծաղրով հարցնում է նա»: Ո՛չ «թույնով», ո՛չ «ծաղրով» բառերը, իրոք, չեն կարող բնորոշել Շահի այն հոգեվիճակը, որ ներկայացված է վերևում բերված նախորդ քառատողում: Իր իսկ արարքից մի պահ զգաստացած չարագործը այլ հայացքով է նայում կատարվածին. Թաթուլը, որին, իրոք, ծաղրանքով էր դիմում առաջին դրվագում, այժմ բարձրանում է նրա աչքում՝ իբրև «քաջ ու սիրուն» հակառակորդ՝ սյուժետային մանրամասն, որ շատ է հանդիպում բանահյուսական պատումներում: Եվ տողի բերված երկու տարբերակների միավորումից ձևավորվում է «Ու լի դառնությամբ հարցնում է նա» վերջնական տարբերակը, որ արդեն լիովին համապատասխանում է հոգեբանական իրադրությանը: Առաջին տողի այս փոփոխությունը ինքնաբերաբար փոխում է նաև վերջին տողի շեշտադրությունը: Հիշված երեք տպագիր տարբերակներում վերջին տողը՝ «Քու Թաթուլն արդյոք քա՞ջ էր ու սիրուն», տրամաբանորեն գրեթե չի կապվում նախորդող հարցադրման հնչերանգի հետ: Տարիների մտմտուքներ են պահանջվել բանաստեղծից՝ գտնելու համար հարցի ճշգրիտ շեշտը՝ «Մի՞թե Թաթուլը քաջ չէր ու սիրուն»: Նախորդ տարբերակի բացասական հնչերանգը փոխվել է իրադրությանը պատշաճ դրականի:

է նաև իրեն դավաճանել: Բացատրություններից մեկն էլ, հավանաբար, կարող է լինել այն, թե Շահի այդ վարմունքը հարգանքի տուրք է դավաճանության զոհ դարձած իր քաջ հակառակորդի հիշատակին: Այս նկատառումով չէ՞ նաև, որ նախերգանքում Շահը, թեև անուղղակիորեն, արժանանում է պատմող աշուղի դրվատանքին.

Ո՞վ չի սիրում, թեկուզ դուշման,
Լավ արարքը, լավ մարդին:

Այսպիսով՝ «թափառական աշուղի» անեծքից թերևս ամենափոքր բաժինը հասնում է Շահին: Իհարկե, նա էլ է չարագործ, քանի որ ուզում է բռնանալ ուրիշի ազատությանը, մարդկային կյանքերի գնով ուզում է ձեռք բերել այն, ինչ իրեն չի պատկանում: Բայց բոլոր դեպքերում հավատարիմ է իր չար բնույթին, չի դավաճանում ինքն իրեն:

Թմկա տիրուհին կնոջ թուլության ու փուչ փառասիրության զոհ է: Այս տեսակետից նրա արարքում Թումանյանը անգամ բանահյուսական փորձով հաստատված որոշակի օրինաչափություն է տեսնում, որ երևում է նրա մի գրառումից. «Երբ մարդն հաղթել է - միշտ կինը խորհրդակից է եղել թշնամուն»[14]: Այս դեպքում ևս շատ են գայթակղիչ Շահի շլացուցիչ խոստումներն ու դավադիր աշուղի շողոքորթ լեզվի նենգավոր հմայքը.

Լսո՞ւմ ես դու, սիրուն տիկին,
Իմ նազելի աննման.
Նայիր Շահի՜ն, իրեն գահի՜ն,
Աշխարհքի տերն անսահման:

Մեզ պես տըկար մարդ է նա էլ՝
Սիրուններին միշտ գերի.
Քո ճակատին թագ է վայել,
Լինես շքեղ թագուհի:

Գայթակղությունը մեծ է: Այնուամենայնիվ, նուրբ հոգեբանի խորաթափանցությամբ բանաստեղծը չի կարող չնկատել ծանր փորձության առջև հայտնված մարդկային բնության երկընտրանքը.

Դավաճան գործի ամոթը խորին
Եվ արքայական փառք ու մեծություն:

Նենգավոր աշուղը, սակայն, անհողդողդ ու հետևողական է. «գիշեր ու ցերեկ, նորից ու նորից» շարունակում է հյուսել իր գայթակղության ոստայնը: Բա-

[14] **Թումանյան** 1991, 543:

նաստեղծը գեղեցիկ գյուտով է ներկայացնում իրադարձությունների շրջադարձային պահը: Կռիվը գնում է երկու ճակատով. դրսում բախվում են հակառակորդ բանակները, ներսում նենգության դևը վարում է իր մութ կռիվը, դրսում հաղթում է քաջությունն ու ազնվությունը, ներսում՝ մութ դավադրությունը: Ու Թմկա տիրուհին դառնում է «լուռ, դալուկ, մտախոհ», քունը փախչում է «սիրուն աչքերից»:

Եղել են կարծիքներ, հատկապես Թումանյանի կենդանության ժամանակ, թե նրա հերոսները հոգեբանություն չունեն: Հաշվի չի առնվել երկու կարևոր հանգամանք: Առաջին՝ որ, եթե վիպասանը իր հերոսների ներաշխարհի շարժումը ներկայացնում է ծավալուն վերլուծություններով, էպիկ բանաստեղծը ժանրի պահանջով հարկադրված է խտացնել մեկ-երկու դիպուկ արտահայտության, տողի կամ նախադասության մեջ. Թմկա տիրուհու հոգեկան շրջադարձի նկարագրությունը դրա լավագույն օրինակներից է: Երկրորդ՝ որ Թումանյան էպիկ բանաստեղծին, հատկապես «Թմկաբերդի առումը» պոեմում, զբաղեցնում են ոչ այնքան անձնավորված կերպարները, որքան նրանց միջոցով ներկայացվող երևույթները[15]: Պոեմում Թմկա տիրուհուն բանաստեղծը տարբեր կողմերից և շատ ավելի հանգամանորեն է ներկայացնում, քան մյուս գործող անձերին[16]: Դա ցույց է տալիս, որ նա ևս կրում է մտահղացման հիմնական իմաստային բեռնվածության իր բաժինը: Բայց ինչո՞ւ բոլոր այն դրվագներում, որտեղ խոսք է գնում նրա մասին, հեղինակային միտում է նկատվում ըն-

[15] Ժամանակին դա նկատել է նաև Լ. Հախվերդյանը: ««Թմկաբերդի առման» մեջ,- գրում է նա,- ի տարբերություն «Հառաչանքի» և «Անուշի» և ի նմանություն «Ախթամարի» ու «Փարվանայի», պոետն իրեն առաջադրել է ոչ թե գործող անձանց հոգեբանական նրբությունների, այլ անցքի, երևույթի բացահայտման խնդիրը» (**Հախվերդյան** 1966, 339): Բայց դա ոչ թե հետևանք է նյութի բանահյուսական ծագման, ինչպես բացատրում է ուսումնասիրողը, այլ բխում է բանաստեղծի մտահղացման բուն բնույթից:

[16] Թմկա տիրուհին արտասովոր գործնական եռանդով աչքի է ընկնում հատկապես խնջույքի տեսարանում: «Լիքն ու առատ բաժակներ քամելու» նրա հետևողական հորդորները անհանգստացնում են անգամ խնջույքի մասնակիցներին՝ գուցե նաև առաջացնելով ինչ-որ կասկածներ: Չափազանց «հոգնած ու հարբած» վիճակը միանգամայն բավարար հիմք է աղետալի գիշերվա մղձավանջային երազների համար: Այս պահը հատուկ ուսումնասիրություն է պահանջում՝ կապված երազի ու նախազգացումի մասին Թումանյանի հայտնի մտքերի հետ: Բայց դա այս հրապարակման խնդիրներից դուրս է: Նկատենք միայն, որ զարմանք է հարուցում հմուտ թումանյանագետ Էդ. Ջրբաշյանի այն միտքը, թե՝ «Հեքիաթային պոետիկայի զինանոցից է քաղված պատուհասից առաջ Թաթուլի տեսած երազի տեսարանը, թեև պետք է խոստովանել, սա միակ հատվածն է, որը էական որևէ բան չի ավելացնում, նույնիսկ մասամբ կարծեք դուրս է մնում պոեմի սրընթաց զարգացման տեմպից (**Ջրբաշյան** 1986, 364):

թերցողի գիտակցությանը հասցնել ամենից առաջ նրա գեղեցկությունը: Անգամ վերջին դրվագում, երբ նա արդար դատաստանի առջև կանգնած էր արդեն իբրև դավաճան հանցագործ՝ անկախ իրեն ուղղված ճակատագրական հարցի պատասխանից (նա կործանված էր արդեն շահին տված իր հանդուգն պատասխանից առաջ)[17], Շահը «մատնիչ սևաչյա», «մի՞թե Թաթուլը քաջ չէր ու սիրուն» արտահայտություններով ակնարկում է մի կողմից քաջության ու գեղեցկության, մյուս կողմից՝ դավաճանության ու մատնության անհամատեղելիության մասին: Ուրեմն Թմկա տիրուհու հանցանքներից ո՞րն է ավելի մեծ՝ սովորական դավաճանությո՞ւնը, որ առկա է Թումանյանի ձեռքի տակ եղած բոլոր բանահյուսական տարբերակներում, թե՞ մեղանչումը գեղեցիկի սրբության հանդեպ: Իզուր չէ բանաստեղծի ափսոսանքը կործանված գեղեցկության համար.

Անցավ անտես ու աննման
Էն սիրունը աշխարհից,
Ինչպես ծաղիկն անցած գարնան,
Որ չի ծաղկիլ էլ նորից:

Ուրեմն դավաճանությունն ինքնին հավիտենական անեծքի արժանի հանցանք է, բայց երբ կատարվում է գեղեցիկի անձեռնմխելի սրբության դեմ մեղանչումով, հանցանքի մեծությունը հնարավոր չէ չափել երկրային չափանիշներով, քանի որ, ըստ էության, մեղանչում է շնորհող երկնային նախախնամության առջև:

Մտահղացման այս պլանում է գործառում նաև երկու աշուղների ներկայությունը պոեմում: Նախերգանքի սևագիր տարբերակում, ինչպես տեսանք, դա մի քանի անորոշությունների տեղիք էր տալիս: Վերջնական տեքստում դրանք վերացել են՝ գործառույթների հստակ տարբերակումով:

Պատմող աշուղը, որ նախերգանքում ներկայանում է որպես ժողովրդական ասացող, հետագա մարդկային արարքների և կատարվող իրադարձությունների քննիչ դատավորն է: Նախապես շարադրելով իր կայացնելիք վճիռների բարոյական հիմքերը՝ նա դրանով նաև կանխորոշում է պատումի կառուց-

---

[17] Ուսումնասիրողներից յուրաքանչյուրը այդ պատասխանին իր մեկնաբանությունն է տվել՝ իր հիմնավորումներով, որոնցից ոչ մեկը անառարկելիորեն ոչ կարելի է հերքել, ոչ հաստատել: Այդ պատասխանը, կարելի է ասել, թումանյանական «Մոնա Լիզայի» ժպիտն է, որի մեկնաբանության վրա արդեն քանի դար է գլուխ են կոտրում ուսումնասիրողները, բայց առանց արդյունքի, որովհետև արվեստի ստեղծագործությունը ամեն նոր սերնդի ու նոր ուսումնասիրողի առաջադրում է նոր հանելուկներ:

վածքը, այսինքն՝ բոլոր հանգուցային օղակները սյուժետային շղթայում արդարացնում են իրենց տեղը՝ ըստ էության, որպես նախերգանքում ամրագրված բարոյական արժեքների կենսական հաստատում: Իզուր չէ, որ պոեմի վերջում «թափառական աշուղը» նորից անդրադառնում է նախերգանքում իր սահմանած բարոյական արժեքներին՝ արդեն որպես ընթերցողական փորձով հաստատված ճշմարտությունների:

Գայթակղիչ աշուղի կերպարը ամենից քիչ է զբաղեցրել ուսումնասիրողներին՝ իբրև ոչ այնքան կարևոր սյուժետային մանրամասն: Մինչդեռ, ինչպես փորձեցինք ցույց տալ վերևի շարադրանքում, դա կենտրոնական խնդիր է պոեմի բարոյափիլիսոփայության մեջ:

Պահպանված սևագիր հատվածների վերլուծությունը ցույց էր տալիս, որ Թմկա տիրուհուն գայթակղելով՝ ամրոցին տիրանալու գաղափարը Շահին հուշել է ամենայն հավանականությամբ նրա «թռվիչ երգիչը»: Նա նաև ի վերուստ շնորհյալ աշուղ-արվեստագետ է, որ կարողանում է տեսնել ու գնահատել գեղեցիկը: Բայց Թումանյանի արտահայտությամբ՝ «քչերի հասկացած գեղեցիկի» պաշտամունքը արվեստագետից պահանջում է անվերապահ ու անմնացորդ նվիրում: Դա արվեստի թումանյանական փիլիսոփայության հիմնարար արժեքներից է, որի լույսի տակ է նա տեսնում ու իմաստավորում աշխարհի ու մարդկային կեցության բոլոր լավ ու վատ երևույթները: Պոեմում այս հարթության վրա է դիտվում իր կոչմանը դավաճանած գայթակղիչ աշուղի կերպարը:

Սակայն նրա այդ արարքը, որ ամենից ավելի էր արժանի պատժվելու, երևութապես մնում է անպատիժ, իր սև գործն ավարտելուց հետո նա անհետանում է ասպարեզից: Պարզունակ բացատրությունն այն կլիներ, թե նա մեծ ծառայություն էր մատուցել Շահին, ուստի պետք է արժանանար պարգևի և ոչ թե պատժի: Բայց հայտնի է, որ արևելյան բռնակալները իրենց խարդավանքների կամակատարներին օգտագործելուց հետո վերացնում են, նրանց, որպեսզի մաքրեն հանցանքի հետքերը: Պոեմում այդ արարքի համար շատ ավելի ծանր պատիժ է սահմանված՝ սերունդների հավիտենական անեծքը.

Չարն էլ է միշտ ապրում անմեռ.
Անեծք նրա չար գործին:

Ուսումնասիրողները «չար գործի» շրջանակներում սովորաբար դիտում են Շահի և Թմկա տիրուհու կերպարները, գայթակղիչ աշուղին անդրադառնում են հարևանցիորեն կամ առահասարակ չեն էլ հիշում: Մինչդեռ իրադարձությունների ամբողջ ընթացքը ցույց է տալիս, որ չարիքի մայր արմատը նրա արարքն է. հուշել է Շահին նենգավոր գաղափարը, և ինքն էլ իրագործել է այն՝

թույլ տալով «դավաճան գործի» մեծագույնը՝ իր արվեստը ծառայեցնելով «չարին»:

Էդ. Ջրբաշյանը վերևում հիշված իր հայտնի մենագրության մեջ «Թմկաբերդի առումը» պոեմին նվիրված գլուխը վերնագրել է «Թումանյանի երազանքը»: Ճիշտ բնորոշում է: Թումանյանը, իրոք, մեծ երազանքի բանաստեղծ է: Այդ մասին ուղղակի խոստովանությունների շատ ենք հանդիպում նրա բազմաբովանդակ ստեղծագործության ամենատարբեր էջերում: Ահա, օրինակ, դստեր՝ Անուշի ալբոմում գրած «Քոշաքարում վազել եմ ես...» բանաստեղծության հայտնի քառատողը, որ հաճախ է մեջբերվում ուսումնասիրություններում..

Իմ երազը շատ էր շքեղ,
Դրախտ պիտեր քաղաք ու գեղ.,
Երգը հոսեր հառաչքի տեղ,
Սերն ու բարին Արազ, Անուշ:

«Թմկաբերդի առումը» բանաստեղծի այդ «շքեղ երազի» թերևս ամենակատարյալ գեղարվեստական արտահայտությունն է նրա ողջ ստեղծագործության մեջ: Պոեմում այդ երազանքի առաքյալներն են Թաթուլ իշխանը՝ «բարձր ու ազնիվ» տղամարդկային նկարագրով, նրա «շունչ, հոգի» Թմկա տիրուհին՝ երկնապարգև գեղեցկությամբ, աշուղ-արվեստագետը՝ կատարյալին ու գեղեցիկին ինքնուրաց նվիրվելու աստվածային պատվիրանով: Թումանյան արվեստագետն ինքն էլ ծնվել էր աշխարհին ու մարդուն գեղեցկացնելու բարձր առաքելությամբ և այդ առաքելության խոր գիտակցությամբ, որ թանձր նստվածքներ է թողել «Իմ երգը» բանաստեղծության հանգանակային տողերում: «Ծով բարություն», «շնորհք ու սեր» «աշխարհով մին» առատ-առատ շաղ տալու, գեղեցիկը տեսնելու, գեղեցիկ ապրելու, գեղեցիկ ապրեցնելու շնորհը արարչական «ճոխ պարգև» է ընտրյալ մահկանացուներին: «Այս անցավոր աշխարհում» նրանց համար երկու ճանապարհ կա. «իր տվածը իրեն տալով», այսինքն՝ մարդկանց ծառայեցնելով, միանալ իրենց հոգևոր սկզբին, այսինքն՝ անմահանալ, կամ մնալով արարչի պարտապանը՝ արժանանալ սերունդների հավիտենական անեծքին: Այս վերջիններից է Թմկա տիրուհին, որ սիրով ու գեղեցկությամբ թևավորելով Թաթուլ իշխանի արծվային թռիչքները, աստվածային շնորհի պարտքն էր հատուցում շնորհողին: Բայց չկարողացավ մինչև վերջ կրել այդ ազնիվ առաքելության ծանրությունը, կործանվեց ինքը՝ իր հետ կործանելով մի ուրիշ փառահեղ գեղեցկություն: Նաև գայթակղիչ աշուղը, որ թյուրիմացաբար է կրում գեղեցիկը տեսնելու և գեղեցիկ ներկայացնելու ընտր-

յալների շնորհը, քանի որ դա նրա ձեռքին դառնում է ոչնչով չարդարացվող ծանրագույն հանցանքի գործիք:

Եզրակացություն

«Թմկաբերդի առումը» բանահյուսական նյութի սովորական մշակում չէ. ավանդությունը բանաստեղծին հուշել է միանգամայն ինքնուրույն մտահղացում: Թմկաբերդի պարիսպների ներսում նա ստեղծել է գեղեցիկի, բարու ու երջանկության՝ իր երազանքի աշխարհը, ինչպես, ասենք, «Ոսկի քաղաքը» հեքիաթում: Բայց քանի դեռ աշխարհում կան անարգված գեղեցկություններ և գեղեցկություն անարգողներ, քանի դեռ կա իր բարձրագույն նպատակին չծառայող արվեստ, կան իրենց կոչմանը դավաճանող արվեստագետներ, քանի դեռ պոետները հարկադրված են պղծել «իրենց շուրթերն անեծքով», «անմեռ» բարուն միշտ էլ պիտի ուղեկցի «անմեռ» չարը, կատարյալ աշխարհի և կատարյալ մարդու երազանքը երազանք էլ պիտի մնա: Կյանքը կյանք ու մարդուն մարդ պահողը, սակայն, այդ երազանքի անմահությունն է:

Վերևի շարադրանքով փորձ արվեց հիմնավորելու այս հետևությունը: Թե որքանով հաջողվեց, թող դատի ընթերցողը:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Տերտերյան Ա. 1911, Հայրենի եզերքի քնարերգուն, Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 82 էջ:

Մկրյան Մ. 1981, Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը, Երևան, «Սովետական գրող», 373 էջ:

Հախվերդյան Լ. 1966, Թումանյանի աշխարհը, Երևան, «Հայաստան», 500 էջ:

Ջրբաշյան Էդ. 1986, Թումանյանի պոեմները, Երևան, ԵՊՀ հրատ., 482 էջ:

Թումանյան Հովհ. 1991, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 4, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 624 էջ:

Թումանյան Հովհ. 1995, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 7, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 720 էջ:

Թումանյան Հովհ. 1908, Բանաստեղծություններ, Բաքու, Հայոց հրատարակչական ընկերություն, 280 էջ:

Հայ գրողներ, քրեստոմատիա, 1909, 1914:

«Մուրճ», ամսագիր, 1905, թիվ 1, թիվ 2–3:

«Նոր ուղի» օրաթերթ, 1910, մայիսի 5:

ПОЭМА ТУМАНЯНА «ВЗЯТИЕ ТМКАБЕРДА»
(попытка иного прочтения)

КИРАКОСЯН В.

Резюме

Ключевые слова: *народное предание, авторский замысел, цель искусства, призвание художника, культ красоты, измена, варианты стихотворений.*

Статья являет собой попытку новой интерпретации общеизвестной поэмы О. Туманяна. Мечта об идеальном мире и идеальном человеке рассматривается поэтом в контексте культа красоты и призвания художника. Читатель приходит к убеждению, что до тех пор, пока есть в мире осквернители красоты и изменившие своему призванию художники, мечта об идеальном мире и человеке останется невоплощенной, хотя и жизнь в целом поддерживается бессмертием этой мечты.

THE “THMBKBERD CAPTION” POEM BY TOUMANYAN
(alternative reading try)

KIRAKOSYAN V.

Summary

Key words: *folk tradition, afthor’s idea, aim of art, title artist, a cult of beauty, betrayal,versions of poem.*

This article is an alternative reading of Toumanyan’s poem. Doing a purposeful analysis of the poem’s extracts from draft versions and finished text the author tries to show that this time,Toumanayan examines the ideal man and the ideal world in the context of the vocation of an artist and beauty cult. The poet persuades the reader that as there still exist desecrated beauties in the world and those who desecrate the beauties, and artists who betray their vocation, the dream of an ideal world and ideal man will stay only as a dream. Although the eternity of this is what keeps a man as a man and life as life.

ԱՐԵՎՀԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ[*]

Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան
arevik.54@mail.ru

ՀԱՋՈՂՎԱԾ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ
(Ն. Աբգարյանի «Երկնքից երեք խնձոր ընկավ» վեպի թարգմանության լեզուն և ոճը)[**]

Բանալի բառեր՝ *ժողովրդական լեզվամտածողություն, ոճ, բառօգտագործում, մակդիր, համեմատություն, փոխաբերություն, դարձվածք:*

Ներածություն

Նարինե Աբգարյանը[1] նվաճել է տարբեր ժողովուրդների սրտեր, ունի տարբեր ազգությունների պատկանող ընթերցողների մեծ բանակ: Այդ համընդհանուր սերը, հետաքրքրվածությունը դեպի նրա գրքերը, կարծում ենք, ոչ միայն նյութի, թեմայի, այլև մատուցման, լեզվի շնորհիվ է: Չնայած հեղինակը հայ կյանքի, կենցաղի մասին գրում է ռուսերեն, սակայն զգացվում է հայկական շունչը: Նման հեղինակի ստեղծագործությունները թարգմանելիս բարդ է լինում թարգմանչի գործը. ստեղծագործությանը հաղորդել ազգային շունչ ու ոգի, ինչեղություն, տվյալ միջավայրի շնչառություն, հեղինակի ոգու և լեզվամտածողության պահպանում: Դա, կարծում ենք, հաջողվել է Ն. Խաչատրյանին՝ Ն. Աբգարյանի «Երկնքից երեք խնձոր ընկավ» վեպը թարգմանելիս:

Հ. Թումանյանը լեզուն որակել է որպես հոգի և հոգեբանություն: Սակայն յուրաքանչյուր հեղինակ ունի իր ոճը: «Ոճը բոլորովին այլ հարց է. լեզուն հասարակաց է,- գրում է Հ. Աճառյանը,- ոճը հեղինակինն է. առաջինը ընդհանուր է,

---

[*] *Հոդվածը ներկայացվել է 15.06.2019, գրախոսվել է 01.10.2019, ընդունվել է տպագրության 05.12.2019:*

[**] Աբգարյան Ն., Երկնքից երեք խնձոր ընկավ (թարգմ. Ն. Խաչատրյանի, «Օրակուլ» հրատ., 2017, 240 էջ):

[1] Ն. Աբգարյանը մոտ 25 տարի ապրում է Մոսկվայում: Նրա ստեղծագործական կյանքը թեև շատ երկար պատմություն չունի, սակայն նրա ստեղծագործություններն արժանացել են ծանրակշիռ մրցանակների: «Երկնքից երեք խնձոր ընկավ» վեպի համար 2016 թ. ստացել է «Յասնայա պոլյանա» մրցանակը «21-րդ դար» անվանակարգում: Թարգմանությունը՝ Ն. Խաչատրյանի:

երկրորդը անհատական: Ամեն մի հեղինակ, նայած իր կրթության, ճաշակին, զգացմունքների նրբությանը, նայած նույնիսկ րոպեի տրամադրության, ունենում է առանձին, սեփական ոճ»[2]: Շատ ինքնատիպ է Ն. Աբգարյանի «Երկնքից երեք խնձոր ընկավ» վեպի լեզուն և ոճը, որը, կարծում ենք, պահպանվել է թարգմանչի կողմից: Վեպը հիմնականում պատմողական բնույթ ունի, նկարագրությունները քիչ են: Ուշագրավ է վեպի սկիզբը. *«Ուրբաթ օրը՝ ճաշից հետո, երբ արևը, անցնելով բարձր զենիթը, հանդիսավոր գլորվեց հովտի արևմտյան կողմը՝ Սևոյանց Անատոլիան պառկեց մեռնելու: Մինչև էն աշխարհի ճամփան բռնելը՝ նա փեղը փեղին ջրել էր բուստանն ու հավերին կեր լցրել սովորականից շատ….»*[3]: Կարծես թե ժողովրդական բանահյուսության մի պատառիկ կամ գուլպա գործող տատիկներից մեկի խոսք ու զրույց լինի, որ մանրամասն պատմում է՝ զարմանալի դիտողունակությամբ նկատելով ամեն ինչ. ջրհորդանների տակ դրված տակառների կափարիչների բացելը՝ անսպասելի անձրևից տան հիմքը չվնասվելու համար…., վերջին հանգրվանի կապոցի պատրաստելը՝ թաղման ծախսերի համար փողի ծրարը վրան դրված, և էլի մանրամասներ:

Վեպում քիչ է գրական պերճախոսությունը, փոխարենը կա բառընտրություն, որի շնորհիվ խոսքը դառնում է ավելի տպավորիչ: Տեղին կլինի հիշել Մ. Գորկու միտքն այն մասին, որ բառերով նկարագրվածը ընթերցողին պետք է մատչելի լինի շոշափելիության չափ[4]: Պատումի ցանկացած հատված գործնական առարկայականություն ունի: Վեպում հիմնականում չկան բազմաբաղադրիչ կառույցներ, իսկ եթե կան էլ, ապա բաղադրիչ նախադասությունները հստակ են, հասկանալի, առանց ավելորդ բառերի ու միջանկյալ արտահայտությունների: Հեղեղված չէ պատկերավորության միջոցներով, սակայն կան պատկերավոր մտածողության փայլուն օրինակներ: Թարգմանիչը ինքնատիպ մակդիրների, համեմատությունների, փոխաբերությունների միջոցով արտահայտչական հզոր լիցք է հաղորդել իր խոսքին: Գյուղի նկարագրությունները տխուր տպավորություն են թողնում, այդ պատճառով էլ ուղղակի քիչ են հիացական, տրամադրություն ստեղծող մակդիրները՝ *կենսախինդ գյուղ* /46/, *արթնացող բույսեր* /156/, և շատ են ցավ ու ափսոսանք առաջացնող պատկերները՝ *համր խաչքարեր*/25/, *լուսնի երկչոտ շողեր* /40/, *կույր պատուհանի շրջանակներ* /172/, *խլացնող մենության փախչող էություն* /172/: Բերված մակդիրները պատմում են լքված, դատարկված գյուղի մասին, որոնք զգացմունքային ըն-

[2] **Աճառյան** 1951, 101:

[3] **Աբգարյան** 2017, 5:

[4] **Горький** 1941, 149:

կալման արտահայտություններ են, լիքն են թախիծով ու տխրությամբ: Նույն տրամադրությունը զգացվում է նաև այս փոխաբերություններում՝ «*Դարբնոցը ծերանում էր ու մեռնում*» /77/,«*Պատերազմը նախանջեց՝ տանելով իր հետ երիտասարդներին*» /39/: «*Գյուղը՝ դատապարտված ու հնազանդ (մակդիր), իր վերջին տարիներն էր ապրում (փոխաբերություն)*» /40/: «*Գյուղը ….տագնապի սպասումով քարացել էր*» /42/, «*Գյուղը լռում էր՝ իր քարե գրկի(մակդիր) մեջ փայփայելով տարածվող անծայրածիր թախիծը*» /172/:

Վեպը ընդհանուր առմամբ դրական, բարի լիցքեր է հաղորդում, և քիչ չեն այդ լիցքերով պարուրված փոխաբերությունները՝ «*Ասպղերը դեռ չէին հասցրել հալվել երկնքում*» /156/, «*Թռչնակները օրվա երգն էին հյուսում*» /156/, «*Աշխարհը հրճվում ու երգում էր*» /156/, «*Կյանքը կամաց-կամաց սկսեց կարգավորվել, ճռռոցով հունի մեջ ընկնել*» /43/, «*Յողը նստել էր, կիսաքուն ծաղիկներից (մակդիր) քամել թանձր բույրն ու սփռել երկրի վրա*» /22/, «….*Լուսանկարները….քոչել են փայտյա զարդատուփ ու համբերատար սպասում են հայրական տուն վերադառնալուն*» /58/:

Ն. Խաչատրյանը ընդգծված արտահայտչական նշանակությամբ է գործածել նաև համեմատությունները, որոնք ստեղծում են խոսուն պատկերներ՝ «*Ժայռի պես կուռ, գառան փափուկ հոգով՝ թոռը….*» /226/: Այստեղ թոռին վերագրում է և՛ ժայռի պես կուռ լինելը, և՛ գառան նման փափուկ հոգի ունենալը: *Կուռ* բառը ԺՀԲԲ[5]-ում տրված է *կռած, կոփած, ամուր, ամբողջական* և այլն իմաստներով, իսկ *փափուկ*-ը նույն բառարանում տրված է նաև *փխրուն* իմաստով: Հեղինակը իր հերոսին ներկայացնում է որպես և՛ շատ ամուր, և՛ միաժամանակ շատ փխրուն, զգայուն հոգի ունեցողի: Ահա նմանատիպ պատկեր. «*Հավերժ ու բոլորի կողմից մոռացված …., խռոված գյուղը, անդույլ լծակի պես կախ էր ընկած Մանիշ քարի ուսից*» /46/: Գյուղը խռոված է, քանի որ մոռացվել ու անտեսվել է բոլորի կողմից: Այն համեմատելով անդույլ լծակի հետ՝ հեղինակը կամեցել է ավելի ընդգծել այդ վիճակը, իսկ *կախ է ընկած* բայով արտահատվում է թարգմանչի վրդովմունքն ու ցավը: Իսկ հետևյալ համեմատություններում կա ջերմության, գոհունակության զգացողություն՝ «*Ոսկեն նրա գրկում փայլում ու շողշողում էր թանկագին քարի նման*» //16/, «*Թխամաշկ պապին նման էր ջրի երկու կաթիլի պես*» /49/:

Վեպում շատ հաճախ համադրվում են մակդիրն ու համեմատությունը, մակդիրն ու փոխաբերությունը կամ անձնավորումը: Այսպես՝ «*Տունը նրան դի-*

[5] ԺՀԲԲ-ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1974, 244:

մավորում է (անձն.) *ոչ թե մեռելային լռությամբ* (մակդ.), *այլ խնոցու կուշտ դմփոցով* (մակդ.)» /79/: «*Երաշտը….արևահողմի հաղթակառքով եկավ* (անձն.)՝ *զզվելի ու թացաչք, խիղճ չճանաճող ու անգութ* (մակդ.)» /85/:

Պատկերավորության միջոցները հիացնում են իրենց ինքնատիպությամբ, թարմությամբ, արտահայտչականությամբ ու հուզականությամբ, ստեղծում են համապատասխան տրամադրություն ու զգացողություն: «*Քնափ ու լռակյաց, սառցալուլաներով գլխաշորը մինչև աչքերը քաշած առավոտները բացվում էին չուզենալով և ուշ՝ թույլ շնչառությամբ ցրելով գիշերային վերջին մշուշը» (մակդիր, փոխաբերություն*) /227/, կամ՝ «*Փետրվարը խորամանկում էր աճպարարի պես* (համեմատություն). *թևքերը թափ էր տալիս ու մանր փաթիլներով ձյունը լիքը-լիքը բռերով անվերջ լցնում* (փոխաբերություն*) քնած բակերը* (մակդիր)» /227/: Շատ ասելիք կա բերված օրինակներից յուրաքանչյուրում, ամեն մի պատկեր որոշակի գաղափար է տալիս նկարագրվող իրողության, բառօգտագործման ճաշակի, բառընտրության նուրբ զգացողության մասին:

Եթե ռուսական գեղարվեստական ստեղծագործություններում *գիշերը* կարող է լինել *լուռ, փագնապալի, համեստ*, հայկական գիշերը *փխուր* է կամ *ուրախ*: Եթե ռուսական *ցերեկները* լինում են *լուսավոր, արևոտ*, քննարկվող վեպում դրանք *ժպտուն* են կամ *թախծոտ:* Դա խոսում է այն մասին, որ Ն. Խաչատրյանը թարգմանել է հայաշունչ ստեղծագործություն՝ մեր հայրենիքի մասին, և ընթերցողը բոլորովին չի զգում, որ դրա բնագիրը ռուսերեն է:

Վեպում նկատելի է նաև խոսակցական լեզվին բնորոշ բառերի ու բառակապակցությունների, դարձվածքների հաճախական գործածությունը, որոնք ավելի տարողունակ են, և ասելիքը դարձնում են խորիմաստ ու սեղմ:

Հարադրությունները բառերի այնպիսի միացություններ են, «որոնք թեպետ մեկ բառի նշանակություն ունեն, բայց սովորաբար մեկ բառ չեն համարվում և միացած իբրև մեկ բառ չեն գրվում»[6]: Իրենց ամփոփած նրբերանգների շնորհիվ էլ դրանք առանձնահատուկ հմայք են տալիս խոսքին, ժողովրդական լեզվամտածողության արդյունք են, ազգային բնութագիրը պահող նշաձողերից, ժամանակի ընթացքում զտվել, մաքրվել ու դարձել են «գերագույն ճշմարտություններ»[7], հենց այդ նպատակով էլ վեպում շատ են գործածվել, օրինակ՝ «*Թռչունները հավանոցում իրար էին անցել՝ անհամբեր սպասելով, թե երբ են դուրս թողնելու, որ մարգերում ման գան*», կամ *խորհուրդ անել, աղջիկ ունեն*

[6] **Աբեղյան** 1965, 169:

[7] **Սևակ** 1948, 136:

մարդու փալու, պար բռնել, խոր շունչ քաշել, ականջ ծակող, պառկել մեռնել, կաս-կարմիր կտրել, ծխել պրծնել, դիվադադար անել, քահ-քահ ծիծաղել, անեծք թափել, զրույց վարել, աշխարհը լքել, գետնին փռել, վեր ու վար անել: Եթե թարգմանիչը *խորհուրդ անել* արտահայտության փոխարեն օգտագործեր *խորհել* բառը, կամ *աղջիկ ունեն մարդու փալու*-ի փոխարեն՝ *աղջիկ ունեն ամուսնացնելու*, կամ *աշխարհը լքեցին/մահացան, գետնին փռել/փապալել, դիվադադար անել /անհանգստացնել*, արդյոք պատումը չէ՞ր տուժի, կպահպանվե՞ր ժողովրդական ոգին ու շունչը: Ակնառու է համեմատվող զույգերի արտահայտչական տարբերությունները: Կամ ի՞նչ բառերով պիտի արտահայտվեր *անփաշ քոթուկ, պարապ զրույց, վայ ամուսին* կապակցությունների իմաստները, որ պահպանվեր հեղինակի վերաբերմունքը, զգայականը, հուզականը, լինեին այդքան խոսուն ու ինքնատիպ: Հարադրությունները իրենց պարունակած իմաստային ենթաշերտերի շնորհիվ թողնում են ավելի մեծ տպավորություն և ազդեցություն:

Ն. Խաչատրյանն անշուշտ դիմել է նաև դարձվածքների, որոնք ժամանակների ծնունդ են, ծնվում են ժողովրդական բառ ու խոսքում, թրծվում կենսափորձի, կենսափիլիսոփայության քուրայում, և յուրաքանչյուրի տեղին կիրառութունը կշիռ է տալիս խոսքին: Դրանց առատ գործածությունը վեպում պատճառաբանված ու հիմնավորված է՝ *էն աշխարհի ճամփան բռնել, հոգին դուրս թռչել, լավ օր չտեսնել, քար կտրել, իրար անցնել, ջրի երկու կաթիլ, հոգոց հանել, հույսը կտրել, հոգու հետ խաղալ, կաշվից դուրս գալ, ասեղ գցելու տեղ չլինել* և այլն, որոնք իրենց բազմաշերտությամբ լայնացնում են ասվածի իմաստը, հոգեհարազատություն են հաղորդում, պահպանում հեղինակի լեզվամտածողության ամբողջական տպավորությունը, նպաստում են խոսքի կենդանությանը, բնականությանը:

Վեպի լեզվին յուրօրինակ փայլ ու պայծառություն են տվել զուգադրական հարադրությունները, որոնք ոճական հարուստ լիցք են հաղորդում խոսքին, ավելի ազդեցիկ են, ունեն հնչեղություն, խտացնում են ասելիքը, տալիս բառի ու բովանդակության ներդաշնակություն, ինքնատիպության հմայք՝ *ունեցած-չունեցած, ոսկեշող-կուրացնող, ոլոր-մոլոր, երկար-բարակ, խելք-խրատ, ամանչաման, շոր-մոր, սուսիկ-փուսիկ, ահ ու սարսափ* և այլն:

Թարգմանիչն իր խոսքին սեղմություն, հակիրճություն հաղորդելու նպատակով հմտորեն դիմել է համադրական բարդությունների՝ *հոգեպահուստ, ինքնափաթթուկ, գորովաշարժ, ծածկապատշգամբ, ծածկասայլ, փոգորա-*

պինդ, բարիդրացիական, հաղթակառք, բմբուլաթափ, փետրանդերքնակ և այլն: Այս բառերը ճիշտ իրենց տեղում են, համահունչ ամբողջ շարադրանքին:

Շատ տրամաբանական է, որ վեպում կան բարբառային բառեր ու արտահայտություններ, թուրքապարսկական կամ նմանատիպ օտարաբանություններ, որոնց թարգմանիչը դիմել է միջավայրին հարազատ մնալու, խոսքը համոզիչ դարձնելու նպատակով՝ *բուսթան, խալի, մութաքա, թազբեհ, զահրումար, գրազ, խլամ, հեչ, ֆուրգոն, թութուն* և այլն, որոնք հերոսի խոսքի տիպականացման, լեզվական միջավայրի ստեղծման միջոցներ են: Դրանք վարպետորեն են գործածվել, ներդաշնակվել են բովանդակությանը և ընդհանուր առմամբ՝ թարգմանության ոճին:

Ընթերցողի աչքից չեն վրիպում նաև հերոսների անուններն ու տոհմանունները, որոնք նույնպես հայկական ծագում ունեն, կրճատ են և նույնիսկ անսովոր: Սրանք գործածվել են բացառապես արտահայտչական նշանակությամբ, ծնվել են ինչ-ինչ դիպվածի հետ կապված և «ավելի հաճախ ծիծաղելի ու զվարճալի են, հազվադեպ վիրավորական»[8]՝ *Սևոյանց Կապիտոն, Մելիքանց Վանո, Նեմեցանց Մուկուչ, Շալվարանց Հովհաննես, Կուդամանց Վասիլ* և այլն: Անատոլիայի հարևանուհու՝ *Յասամանի* նախահայրը մառանցիների աչքին անսովոր գլխարկ (շլյապա) դնելու պատճառով կոչվել է *Շլյապկանց:* Կամ՝ Հովհաննեսի պապը պատերազմ է գնացել նոր, թանկարժեք շալվարով: Կռվի դաշտ չհասած՝ վիրավորվել է ու անդամահատվել: «…Հովհաննեսի պապը, չգիտես ինչու, խոր ցավ է ապրել ոչ թե անդամահատված ոտքի, այլ նոր տաբատի համար: «Շալվարս, շալվարս,- բողոքել է քույրերին»[9], ինչի համար էլ անունը Շալվար է մնացել, իսկ նրա սերունդները՝ Շալվարանց:

Եզրակացություն

Թարգմանչի խոսքում սկզբից մինչև վերջ գործածվում են ժողովրդական կենդանի խոսքին բնորոշ լեզվամիջոցներ: Թե՛ պատկերների նկարագրությունները, թե՛ բարբառային բառերը, թե՛ հարադրություններն ու համադրությունները և թե՛ այդ սովորական ու արտասովոր անձնանուններն ու տոհմանունները մերվել են վեպի բովանդակությանը, դարձել կուռ ամբողջություն և, լեզվական հմայքով, իմաստային նրբերանգներով, գրավում են ընթերցողին, և այդ ամենի գործածումը մտածողության յուրահատուկ ձև է, վեպի հաջողությունն էլ լեզվի, բառապաշարի, մատուցման մեջ է:

[8] **Աբգարյան** 2017, 48:

[9] **Աբգարյան** 2017, 49:

Քննարկելով վեպի թարգմանության լեզուն և ոճը՝ գալիս ենք այն եզրակացության, որ թարգմանությունն հաջողված է: Թարգմանիչը հավատարիմ է մնացել ժողովրդական լեզվազգացողությանն ու լեզվամտածողությանը: Ընթերցելիս զգացվում է հայկականություն, հայկական խոսքաշխարհով միջավայր: Նկարագրությունները կենդանի են, հարազատ մեր առօրյային, թվում է՝ մենք էլ ենք վիպական այդ կյանքի մասնակիցը:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աբգարյան Ն. 2017, Երկնքից երեք խնձոր ընկավ, «Օրակուլ», Երևան, 240 էջ:

Աբեղյան Մ. 1965, Հայոց լեզվի տեսություն, «Միտք», Երևան, 699 էջ:

Աճառյան Հր. 1951, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, «Հայպետհրատ», Երևան, 609 էջ:

ԺՀԲԲ-ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 3, 1974, ԳԱ հրատ., Երևան, 574 էջ:

Սևակ Գ. 1948, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, ԳԱ հրատ., Երևան, 277 էջ:

Горький М. 1941, Несобранные литературно-критические статьи, Москва, «Художественная литература», 552 с.

https://eksmo.ru/interview/narine-abgaryan-kto-to-iz-kritikov-skazal-chto-ya-pishu-na-armyanskom-prosto-russkimi-slovami-ID5493583/.

УДАВШИЙСЯ ПЕРЕВОД

ХАЧАТРЯН А.

Резюме

Ключевые слова: *лингвомышление народа, стиль, использование слов, эпитет, сравнение, метафора, языковые обороты.*

Фабула романа нашей талантливой соотечественницы Нарине Абгарян отражает мировосприятие, быт жителей села Маран. Перед читателем предстает укромный уголок Армянского нагорья с его жителями. В романе повествуется об опустевшей деревне с незначительным числом сельчан, которые, несмотря на житейские невзгоды, поддерживают друг друга, сохраняя в себе свет оптимизма.

Роман написан простым, доступным, но в то же время образным языком. С одной стороны, стиль изложения прост, с другой – он отличается выбором удивительно точной лексики и блестящих примеров образного мышления. Благодаря удачному использованию сравнений, метафор переводчик остался верен оригиналу, его стилистике, сумев передать всю его самобытность, присущее роману эмоционально-философское начало без «переводческих потерь».

A SUCCESSFUL TRANSLATION

KHACHATRYAN A.


Summary

Key words: *identity, uniqueness, style, use of the words, epithet, comparison, metaphor.*

The plot of the book covers the worldview, everyday life and routines of the inhabitants of the village of Maran, and the translation language and vocabulary remain true to that environment. A secluded corner of the Armenian Highlands is presented to the readers. The novel tells the story of a forgotten tiny village and its inhabitants who in the face of adversity keep helping and supporting each other as well as maintaining a positive attitude.

The style of the translation is simple and clear, however, the text contains precise identifications and brilliant examples of figurative thinking. Through the right choice of epithets, comparisons and metaphors the interpreter remains faithful to the original text, delivering its concept and uniqueness, emotional and philosophical core without "interpretation loss".

ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐ
BOOK REVIEWS



ՍԱՀԱԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՀԱՄՇԵՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԵՐՈՒՄ

Երևան, ԵՊՀ հրատ., 2019, 363 էջ:

Համշենի և համշենահայության մասին առկա բավական պատկառելի գրականությունը համալրվեց ևս մեկ աշխատությամբ, որը եթե վերջինն է ըստ հերթականության, ապա վերջինի այն իրավունքով, որը շարունակում և ամբողջացնում է հիմնահարցի մշակման արժեքավոր կողմերը և ներկայացնում իբրև նոր որակ: Աշխատությունն այս իմաստով տրոհվում է բազմաթիվ ծալքերի և ժամանակի, և թեմայի հաղթահարման տեսակետից, և այստեղ ևս աչքի են զարնում հեղինակային նպատակադրման ամբողջականացումը, հետազոտական լուրջ խնդիրները, որոնք առաջադրվել են հետևողականորեն և ուսումնասիրության նյութի մեջ խորանալու հմտությամբ:

Հենց սկզբից ասենք, որ այս երկուսից և մեկը, և մյուսը հենվում են ուսումնասիրության առարկայի համոզիչ իմացության, երկար տարիների աշխատանքի և փորձի արդյունքների վրա: Ճանաչողական և իմացական այս կողմը, կարծում եմ, պայմանավորել է շարադրանքի ընթացքն ու ներքին տրամաբանությունը, Համշենի մշակույթի ներկայացումը՝ իր էական հատկանիշներով և ապա, վերջիններիս միջոցով, այդ գավառի հայերի պատմության վերարտադրությունը՝ սկսած հայոց պատմության վաղնջական ժամանակներից ընդհուպ մինչև մեր օրերը: Հեղինակի այս մոտեցումը ակնհայտ կայու-

նություն ունի՝ անկախ աշխատության գլուխների թելադրած հատվածական սահմանափակումներից, Համշենի գավառը, նրա պատմությունն ու մշակույթը գրքում ներկայացվում են մեկը մյուսի հերթագայությամբ, միմյանց ագուցված և մեկը մյուսի մեջ, որպես միաձույլ մի կառույց: Եթե աշխատության առաջին գլուխը հայտ է ներկայացնում Համշենի հայությունն ու բնօրրանը բնութագրել պատմության հանգրվաններում, ապա մյուս երեք գլուխներում վեր է հառնում այդ գավառի ու նրա հայ բնակչության ճակատագիրը՝ մշակութային գործոնի առաջնահերթությամբ, երբ այս ամենն ամփոփվում է ձեռագրերի ու դրանց հիշատակարանների անփոխարինելի տեղեկատվության մեջ, և որն էլ քայլ առ քայլ բացահայտվում է այս աշխատության էջերում:

Եվ այսպես, պատմությունն ու մշակույթը ձեռագրերում, որոնք Համշենի հայության վաղեմության ու ազնվության վկայականն են, այս աշխատության մեջ միավորվում են հիշատակարանների ամուր հենքի վրա: Շատ կարևոր է, որ հիշատակարանների իմացական, այլև անխուսափելի զգացական տարածքները հեղինակն իմաստավորում է պատմական իրողությունների համադրմամբ և փոխադարձաբար՝ այդ իրողությունները հիշատակարաններով ևս վավերացնելու մեթոդով, որի շնորհիվ ամբողջ շարադրանքը ստանում է աներկմիտ ու համոզիչ բնույթ: Լ. Սահակյանը Համշենի աշխարհը մեր առջև բաց է անում իր բնական, չեմ քաշվում այս մակդիրից՝ ռոմանտիկական ինքնության մեջ. շատ դրվագներից կարելի է հիշել Հեթում պատմիչի ուղեգրական տպավորությունն իր գրած պատմության մեջ, որ անմիջականորեն վերարտադրել է Լ. Սահակյանը: Իսկ ընդհանրապես, հեղինակը ձեռագրական պատառիկների հիման վրա հաջողությամբ է վերականգնում Համշենի պատմությունը՝ մանավանդ XIV–XVI դարերի կտրվածքով: Բայց վերադառնանք Համշենի գրչության դպրոցին, որ նախապատրաստվել և պատմականորեն ամուր հիմքեր է ունեցել առնվազն VIII դ. վերջերից, երբ ստեղծվել էր Համշենի հայկական իշխանությունը՝ Ամատունյաց նախարարական տոհմի ձեռքով: Լ. Սահակյանը համշենցի գրիչների՝ մեզ հասած ձեռագրերը սկսում է վերհանել Ստեփանոս քահանա Համշենցու հիշատակարանով՝ գրված Հռոմում, 1240 թ.: Հեղինակն այստեղ անում է զույգ եզրակացություններ՝ Ստեփանոսի գերդաստանը նվիրված է եղել հոգևոր պաշտամունքին, և երկրորդ, ձեռագրի հռոմեական ծագումը վկայում է համշենցի հայ հոգևորականների անհերքելի առնչություններն առհասարակ հայկական գրչության և հոգևոր կենտրոնների գործունեության հետ: Կարելի է կարծել՝ առավել քան բավարար հիմք՝ XV դարի այլ ձեռագրերի քննության համար (Խաչատուր աբեղայի հիշատակարան-

ները, Աստվածատուր աբեղայի, Անանուն գրչի և Սարկավագ քահանայի հիշատակարանները): Հեղինակը հատկապես ուշագրավ դիտարկումներ է անում գրիչ Խաչատուր աբեղայի հիշատակարանի առթիվ (1422), որը գրչագրվել է Քոշտենց վանքում: Հեղինակն այս հիշատակարանը համադրում է իսպանացի դիվանագետ Ռ. Դե Կլավիխոյի՝ 1406 թ. վերաբերող մի տեղեկությանը, որից պարզվում է, որ Համշենը ժամանակավորապես եղել է Սպերի մահմեդական տիրակալի իշխանության ներքո և որ 1422 թ. Համշենը շարունակում էր գլխավորել պարոնաց պարոն Առաքելը: Կարևորն այստեղ այն է, որ Լ.Սահակյանն ամրապնդում է այն փաստը, որ XV դ. Համշենում գոյություն ուներ հայկական իշխանություն, ըստ էության հայկական այն կիսանկախ իշխանություններից մեկը, որոնք գոյատևում էին ոչ միայն բյուզանդական, այլև մահմեդական գերիշխանությունների պայմաններում:

Աշխատության երրորդ գլուխն անդրադարձնում է Համշենի XVI–XVII դդ. գրչության դպրոցի հետագա ընթացքը՝ կապված համշենահայերի շարունակվող կենսագործունեության, այս գործընթացում Եղնովիտ գյուղի Սուրբ Խաչիկ հոր վանքի, Խաչեքարա եկեղեցական վիճակի մշակութային կյանքի և համշենցի գրիչների գործունեության հետ: Այստեղ ևս հեղինակը հետևողականորեն զարգացնում է իր մտահղացման առարկայացումը երկու ուղղությամբ՝ ձեռագիր մատյանների և հիշատակարանների աղբյուրագիտական տվյալների միջոցով Համշենի և նրա հայ բնակչության պատմությունը նշված դարերում և այնուհետև՝ խնդրո առարկա գրչության դպրոցի, նրա տաղանդավոր դեմքերի արվեստի ու ոճական առանձնահատկությունների վերլուծությունն ու բնութագիրը: Այստեղ հավանաբար պետք է առանձնացնել գրիչ Կարապետ երեցից 1499–1528 թթ. մեզ ժառանգություն հասած ձեռագիր մատյանները՝ բժշկարան, շարականներ, շարակնոցներ, մաշտոցներ, Ներսես Շնորհալու «Հիսուս որդին» և այլն, որոնց հիշատակարաններում կան ոչ միայն պատմական եզակի տեղեկություններ Համշեն գավառի պատմական իրականության, այլև կենցաղի, մշակութային ու լեզվական ինքնության և այլնի մասին: Ուշագրավ են այստեղ նաև Կարապետ երեցի և նրա որդի Հոհաննիս Մալազի (Մալզ) հիշատակարաններում վերարտադրված ժողովրդական աղոթքները, դրանց բառամթերքի, բառախաղերի, համշենահայերի բարբառում արաբերեն ու թուրքերեն բառերի առկայությունը, որ հարատևել է առ այսօր մահմեդականացված համշենահայերի խոսքում: Վերջիններիս պատմական անցյալի և թեկուզ հավատափոխ՝ նրանց արդի սերունդների կենսաբանական ու հոգևոր ժառանգականությանը միշտ հետամուտ հեղինակը, այս էլ

որերորդ անգամ, գնահատելի նախասիրություններով է մոտենում իր ուսումնասիրության առարկային՝ նպաստելով հիմնահարցի լուսաբանությանը: Նկատի ունեմ թուրքախոս մի համշենցուց նրա գրառած երեք աղոթքները՝ թարգմանական բացատրություններով հանդերձ: Ներկայիս համշենցիների մեջ աղոթքները փոխանցվել են սերնդեսերունդ՝ ի հայտ բերելով նրանց ուրույն լեզվամտածողության և բարբառի հնամենի ծալքերը, որոնք այնքան կարևոր են հայագիտության համար: Այս աշխատության մեջ զուգակշռվում են պատմությունն ու բանասիրությունը, իսկ այդ նշանակում է, որ հեղինակը հաջողությամբ է լուծել թեմայի առաջադրած՝ բազմաշերտ ուսումնասիրության պահանջները: Լ. Սահակյանն այդ իրականացնում է ամենայն պատրաստականությամբ և դրան համարժեք պատրաստակամությամբ, և որը նրա ուսումնասիրության նշանակալի հաջողության գրավականներից մեկն է: Այս կտրվածքով ևս հարկ է գնահատել համշենցի գրիչների ոճի բնութագրերը (օրինակ, գրիչ Կարապետի գործածած արձակ, նաև հանգաբանական չափը), Համշենի բարբառի մասնագիտական նուրբ վերլուծությունները, ժողովրդական հավատալիքների և սովորույթների գնահատականն ու կիրառական նշանակության հեղինակային վերհանումները: Սրանց պետք է ավելացնել համշենցի գրիչների տեղեկությունների համադրումները Տամբուր քաղաքի (հետագայում՝ Համամաշեն) տեղագրության մեջ հետագա ճշտումների ուղղությամբ: Այս դեպքում ևս Լ. Սահակյանն աչքի է ընկնում հետազոտական հենքի ամրությամբ՝ վկայակոչելով մեր՝ արդեն հիշատակած գրիչ Հոհաննիս Մալազի, այլև Ղ. Ինճիճյանի և Ղ. Ալիշանի հետազոտությունների արդյունքները Տամբուրի բերդի և Համամաշենի (Համշեն) իշխանանիստ բերդի տեղագրության հարցում: Հեղինակի տեղագրական ընդարձակ իմացությունը առավել քան ընդգծվում է պատմական նյութի հանգամանալի վերլուծությամբ արված եզրակացություններով: Այս առումով հատկանշական են Եղնովիտի վանքում՝ V դարից համբավված այդ ուխտատեղիում Վարդանանց նահատակների աճյունների ամփոփման վերաբերյալ Լ. Սահակյանի հիմնավոր մտահանգումները և ի վերջո, մի շատ կարևոր հայտաբերումը: Մեր եկեղեցու սրբացրած այդ նահատակների հանգստարանը մինչև այժմ անհայտ է մնացել, որ չեն նշել ոչ Եղիշեն, և ոչ էլ Ղազար Փարպեցին՝ «ականատես եւ ժամանակակից պատմիչք նոյն եւ վկայաբանք մեր», ինչպես գրում է Մխիթարյան հայր Մ. վարդ. Ավգերյանը (էջ 181): Լ. Սահակյանն այս կնճիռը լուծում է պարզ և անհերքելի ճշմարտությամբ՝ Համշենցի գրիչ Կարապետն իր մեկ տասնյակից ավելի ձեռագրերի հիշատակարաններում շարունակաբար հայտ-

նում է, որ Ս. Վարդանանց նշխարները թաղված են Եղնովիտ գյուղի Սուրբ Խաչիկ հոգևոր անապատում, որ այստեղ «եղեալ են ի պարծանք եւ ի պահպանութիւն գաւառիս Համամշինոյ» (նույն տեղում), «ի պահպանութիւն երկրիս եւ գաւառիս մերոյ» (էջ 175) և այլն: «XVI դ. Համշենի գրիչների հիշատակարաններում տեղ գտած այս վկայությունները հիմք են տալիս եզրակացնելու,- գրում է հեղինակը,- որ Վարդանանց ուխտապահ զինվորները Պարխարի լեռները քաշվելիս իրենց հետ վերցրել են նաև նահատակված Հմայակ Մամիկոնյանի և մյուս զոհվածների մարմիններն ու հանձնել հողին՝ Եղնովիտի Խաչիկ հոգևոր հոր վանքում» (էջ 183): Եզրակացությունը հավելյալ հաստատում է գտնում համշենցի այլ գրիչների վկայությունների կրկնությամբ: Իսկապես, նշված գրեթե բոլոր հիշատակարաններում Ս. Աստվածածին և Ս. Սիոն եկեղեցիների հետ միասին, որպես գրչության հովանավորներ, հիշատակվում են Ս. Վարդանանց նշխարները՝ մերթ առաջին, մերթ երկրորդ եկեղեցիների անուններից հետո և երբեմն նույնիսկ այն դեպքում, երբ հիշատակվում է միայն մեկ եկեղեցին՝ կողքին հիշվում են Սուրբ Վարդանանց նշխարները կամ Սուրբ Վարդանանք (տես էջ 175, 178): Եվ այս տեսակետից ամենևին էլ պաթետիկ չի հնչում հեղինակի ընդհանրացումը՝ հիշատակարաններին «բնորոշ դարձած ազդեցիկ տողերը... ցույց են տալիս գրչի հայրենասիրությունը, պարծանքի ու հպարտության զգացումը պատմական անցյալի և Վարդանանց հերոսների հանդեպ» (էջ 217):

Աշխատության աղբյուրագիտական հիմքերը (ձեռագիր հիշատակարաններ, մատենագիրներ, օսմանյան սալնամեներ և արխիվային այլ նյութեր) և օսմաներենի ու թուրքերենի հուսալի իմացությունը հեղինակին հնարավորություն է տվել հանգելու տեղագրական ու ժողովրդագրական տեսակետից լուրջ եզրակացությունների: Դրանց նշանակության մասին արդեն ասվել է և այստեղ պետք է ավելացնել Համամաշենի իշխանանիստ բերդաքաղաքի տեղի ստուգիվ ճշտումը (Քալե-ի բալան՝ իր շրջակա բնակավայրերով), XVII–XVIII դդ. համշենցիների բռնի մահմեդականացման գործընթացի մեջ առանձնահատուկ՝ 1716 թվականի ամրագրումը (էջ 199), Համշենը օսմանյան վարչաքաղաքական համակարգում՝ ընդհուպ մինչև 1869 թ. ոչ լրիվ և տխուր վիճակագրությունը Համշենի նահիեում (գյուղախումբ)՝ հայկական 24, մահմեդական 1543 տուն, ըստ շնչերի՝ 88 հայ, մահմեդական՝ 5869, էջ 203):

Թուրքացման ավերածությունը նույնչափ ամայացնող տեսական հիմնավորում է պահանջում, որին, ինչպես ցույց է տրվում աշխատության մեջ, չհապաղեցին ձեռնարկելու թուրքական պատմակեղծարարները: Այս իմաստով

հիմնավոր են Լ. Սահակյանի առարկումները թուրք պատմաբան Հ. Բոստանին, որը հանդես էր եկել համշենցիների հայկական ծագումը ժխտելու ճիգերով: Անդրադարձ կա նաև մեկ կեղծարարի՝ Ֆ. Քըրզըօղլուին, որը խեղաթյուրելով պատմական փաստերը Ամատունի նախարարների մասին, ոգի ի բռին փորձում է ցույց տալ նրանց իբր, թուրքական ծագումը: Միաժամանակ, Լ. Սահակյանը քննում է Համշենի հայերի թուրքացման վերաբերյալ 1770-ականի մի կարևոր սկզբնաղբյուր՝ Մխիթարյան հայր Պ. վարդ. Մեհերյանի ձեռագիր հուշագրությունը, որտեղ լսելի են այդ ավերիչ երևույթի արձագանքները, համշենցիների հիշողությունները և հարգանքը իրենց նախնիների հավատի ու նրանց ծեսերի նկատմամբ: Այս, ինչպես և իր աշխատության բազմաթիվ դրվագներում, եթե չասենք ամբողջ աշխատության վերաբերյալ, հեղինակն ընդգծում է Համշենի հայերի հայկական անցյալի դիմագիծն ու նկարագիրը:

Աշխատության վերջին գլխում քննարկվում է համշենցի հոգևորականների գործունեությունը հայ գրչության այլ կենտրոններում, դարձյալ ըստ հիշատակարանների՝ 1401–1579 թթ. ժամանակահատվածում: Համշենցի հոգևորականները գործել են Հայաստանի և գաղթօջախների տարբեր վանքերում և գրչության կենտրոններում՝ ոչ քիչ դեպքերում հանդես գալով որպես բանաստեղծներ՝ չափածո տողերով և շարունակելով մեր միջնադարյան գրական ավանդույթները: Հատկապես Հովհաննես ռաբունապետի (գործել է 1440–1490-ական թթ.) մասնավորմամբ Լ. Սահակյանին հաջողվել է վերհանել համշենցի մշակութային գործիչների համազգային ընդգրկումներն ու թողած խոր ազդեցությունը իրենց և իրենց միջավայրի շրջանակներից դուրս գտնվող հայկական հոգևոր-կրոնական հաստատությունների գործունեության վրա: Ընդսմին, հեղինակը համշենցի հոգևորականներին բնութագրում է ոչ միայն իրենց ավանդած հիշատակարաններով, այլև այդ բնութագրերը առավել համոզիչ է դարձնում այլ, ամենևին էլ ոչ համշենցի գրիչների գեղարվեստական ու պարզապես մեծարանքի խոսքերով: Ինչպես միշտ, հեղինակը. հավատարիմ է մնում իր ոճին՝ համշենցի այս հոգևորական գրիչների ու նրանց գրչակիցների տողերի արանքում բացահայտելով ու շարահարելով Համշեն հայկական գավառի շուրջ 180-ամյա պատմությունը:

Աշխատության աղբյուրագիտական հոսքի մեջ հարկավոր է ընդգծել ոչ միայն հիշատակարանները՝ իրենց անգնահատելի նշանակությամբ, այլև արխիվային հարուստ՝ Երուսաղեմի հայոց պատրիարքարանի ձեռագրատան, Ստամբուլի Գլխավոր վարչապետական արխիվի և այլ պահուստների փաստագրական տվյալները, որոնք շարադրանքին տալիս են արժանահավա-

տություն և հետազոտական արդյունքների համոզչություն: Սրա հետ միասին, կարծում եմ, հեղինակը երբեմն անվերապահ մոտեցում է ցուցաբերում վիճահարույց որոշ հանգամանքների նկատմամբ: Եթե, ըստ Մ. արք. Օրմանյանի, Կ. Պոլսի հայոց պատրիարքը, իբրև «Բոլոր Թիւրքիոյ հայ ազգութեան գլուխ, վարչական վերին իսկողութիւն ունի բոլոր Թիւրքիոյ մէջ գտնուող հայ վիճակներուն վրայ» (էջ 118), ապա այդ դեռևս չի նշանակում, որ XV դ. կեսերին և 1461 թ. Կ. Պոլսի պատրիարքության կազմավորումից ի վեր «պետք է որ Համշենի վանքերն ու թեմը ևս անցած լինեին Պոլսո պատրիարքության ենթակայության տակ» (նույն տեղում), ինչպես կարծում է Լ. Սահակյանը: Ընդհակառակն, Սարկավագ քահանայի հիշատակարանում (1489) Կ. Պոլսի պատրիարքն ամենևին չի հիշվում, մինչդեռ հիշվում են նախ Սարգիսը (Մյուսայլ, Էջմիածնի կաթողիկոս 1484–1515) և ապա Հովհաննեսը (Հովհաննես Թլկուրանցի, Կիլիկիայի կաթողիկոս 1489–1525), ինչը ամրագրել է հեղինակը (էջ 114–115): Սարգիս կաթողիկոսի առաջնահերթ նշումը, այսուհանդերձ, ցույց է տալիս, որ Համշենը, գրեթե առավելապես, 1489-ի կողմերը պետք է գտնվեր Էջմիածնի կաթողիկոսության տնօրինության ներքո, իբրև թեմ, որ գլխավորել է Գրիգոր վարդապետը և որը նույնպես հիշվում է այս հիշատակարանում: Ինքը՝ Կ. Պոլսի պատրիարքությունը XV դ. երկրորդ կեսին գտնվում էր մերթ Էջմիածնի, մերթ Կիլիկիայի աթոռների ազդեցության ներքո, և այս նույն երևույթի մի դրսևորումն ենք տեսնում Սարկավագ քահանայի կողմից երկու կաթողիկոսների անվան հիշատակության մեջ:

Հարկ է արժանին հատուցել Լ. Սահակյանի գրքի ճաշակով և բովանդակությանը համահունչ՝ զուսպ ձևավորմանը, առանձնապես ներդիրների առկայությանը, որը մի հայտնի չափով անառարկելի է դարձնում հեղինակի դրույթների ճշմարտացիությունը:

Հետազոտության բնույթին վայել կիրթ ու մշակված հայերենով շարադրված այս աշխատության մեջ շատ քիչ են անհաջող ձևակերպումները և վրիպակները, որոնց մի մասը, թվում է, պատահականություն են, այնպիսի պատահականություններ, որոնք, այնուամենայնիվ, համառություն ունեն սպրդելու այս կարգի շատ բարձրորակ արժեքների մեջ ևս («*նորովի* մեկնաբանելով ուշադրությունից դուրս մնացած խնդիրները», էջ 77, **երդմնեցուցանեմ** գրաբարյան ձևը փոխադրվել է՝ **սաստում եմ**, էջ 132, մինչդեռ ունենք դրա արդի հայերեն անվրեպ համարժեքը՝ ***երդվեցնում*** եմ և այլն):

Ամփոփենք. Լ. Սահակյանի աշխատությունը լուրջ ներդրում է հայագիտության անդաստանում, որ պայմանավորված է բուն իսկ համշենագիտութ-

յան սահմաններն ընդարձակելու, այս բնագավառում մեր հատվածական իմացությունը լրացնելու և ամբողջացնելու՝ Լ. Սահակյանի հույժ գնահատելի կարողություններով: Ստեղծվել է մեր ժողովրդի պատմությունը վերարտադրող մի գործ, որ, մեր համոզմամբ, արդեն ներհյուսվում է Երուսաղեմի Ս. Հրեշտակապետաց եկեղեցու բակում իր իսկ հեղինակի հայտաբերած՝ Համշենցի Հովհաննես ռաբունապետի հիշատակը հավերժացնող խաչքարի մնայուն արժեքին:

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Հրատ. պատվեր N 988
Ստորագրված է տպագրության 17.12.2019 թ.:
Չափսը՝ 70x100 1/16: 17.5 տպ. մամուլ:
Տպաքանակը 200 օրինակ:

Խմբագրության հասցեն. 375019, Երևան-19,
Մարշալ Բաղրամյան պողոտա 24/4, հեռ. (+374 10) 521362, 010.564180

Адрес редакции: 375019, Ереван-19,
пр. Маршала Баграмяна 24/4, тел.: (+374 10) 521362, 010.564180

24/4, Marshal Baghramyan
Ave., Yerevan, 375019. Tel: (+374 10) 521362, 010.564180

www.hayagithimnadram.am
Email: joas2015@yahoo.com, info@haygithimnadram.am

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրապարակչություն փպարան, 375019,
Երևան, Մարշալ Բաղրամյան պ., 24.
Printing House of the "Gitutuyn" Publishing of the NAS RA, 375019,
Yerevan, Marshal Baghramian ave., 24.
Типография издательства «Гитутюн» НАН РА, 375019,
Ереван, пр. Маршала Баграмяна, 24.